


Վ. ԲԵՔԱՐՅԱՆ

ՍՊԻՏ
ՀԱՐԱԸ



Հ. Ա. Թ. Պ. Ե. Ն. Հ. Բ. Ա. Տ.



331-39

59

ՎԱՂԻՆԱԿ ԲԵՐԱՐՅԱՆ

✓

ԱՅՈՒԳԿԱՅ Է 1951 Ք

ՍՈՒՏ ՀԱՐՍԸ

8063

1/11
A 27056



ՀԱՅՊԵՏՆԻՍ

ԵՐԵՎԱՆ

1946

Շապիր և Նկարներ ԱՆ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

В. БЕКАРЯН
НЕВЕСТА

(На арм. языке)
Армгиз, Ереван, 1946

Եկանի նավակն հետ չբողոց իր ետին,
Մոռացումք առավ ինձմե ամեն բան,
Հին երազներն ամայրու պես կանհետին,
Հիշատակն ալ կանցնի երգի մը նման»:

Ռուբեն Ռբերյան

I ՄԱՍ

1.

Յանաչմայության¹ տասնհինգ տարին լրանալիս,
Տերմանենց Չատիկը այլևս չուզեց ուրիշի դռներին աշ-
խատել ու տուն դարձավ պառավ տատի մոտ:

Մանկուց որբ, մինչև տասը տարեկան հասակը
ապրել էր տատի խնամքի տակ: Հետո, յանաչմայու-
թյան տարիներին, նորից տասն էր իրեն շահել, խնա-
մել ու դուրդուրել՝ որպես միակ հարազատը աշխար-
հում:

Տասը թուան մեջ տեսնում էր միակ ապավենն
իր ծեր օրերի, խնամող ու հոգացող ձեռքի հաստատ
հույսը, իսկ թուր անչափ սիրում էր առախն, որով-
հետև նրա անձը միակ թանկագին օղակն էր, որ կա-
պում էր իրեն, տան հետ, օջախի քաղցրության հետ:

— Ասլանի պես թու եմ մեծացուցեր, — ասում էր
տասը հպարտությամբ և երդվում նրա արևով:

Չատիկն էլ դառը քրտինքով շահած մի քանի դու-
րուշը չէր ծախսում, խնայում էր ու բերում պահ տա-
լիս տատի մոտ:

— Տատի՛, — ասում էր, — պահե, պե՛լքի² օր մը
տուն-տեղ կըլլամ, պետք կուզա:

Տասը վերջնում էր փողը, կապկպում լաթի կո-
տարների մեջ և դնում սնդուկի խորքը:

¹ Բարբախտություն:

² Գուցե:

Յանաշմայությունը թողնելուց հետո, Չատիկը նորոգեց տառի բնակարանը և գլուղի վերևում, ձորակի դառնվայրի վրա այգի տնկեց:

Արդեն երկու տարի էր, որ իր գլխի տերն էր, աղայի հրամանից ազատ, քսանյոթ տարեկան առողջ տղամարդ, տուն ուներ, տնտեսություն ու այգի:

Ի՞նչն էր պակաս, ժամանակն էր «տուն-տեղ ըլլալու»:

Տառը գիտեր այդ, գիտեր, որ քսանյոթ տարեկան երիտասարդը պիտի կլին ունենա, ու հաճախ ասում էր թոռանը.

— Չատիկ, օղո՛ւլ, իմ մեկ ոտքս գերեզմանն է, ասլ իզմե խեր չիկա, քու վախիթդ¹ ալ եկեր հասեր է, սանկ աղվոր աղջիկ մը գտնիմ տե, քեզի նշանիմ:

Չատիկը ժպտում էր սրտի բերկրանքից:

Տառիկն այդ ժպիտն ընդունում էր որպես նշան հավանության:

Հարեաններն էլ, Չատիկի ներկայությամբ նրան լսել տալու հաստատ դիտարկություններ, ասում էին տատին.

— Անթառամ մայրիկ, — աս նոր տան մեջ սանկ աղվոր ալ հարս մը կվայրի:

Ու մի օր այդ աղվոր հարսը ճարվեց:

Տառը հավանել էր Պուգուլենց աղջկան՝ Մարիամին, որ արդեն տասնչորս տարեկան էր և մինչև կոնքերը հասնող թուխ մազեր ուներ: Նա սիրունատես էր, ածուխի պես սև ու փայլուն աչքերով:

Չատիկը առարկությունն չարեց և դարձան մի օր նշանվեց Մարիամի հետ:

— Հարսնիքը թեղ՞ կուզիմ, — ասաց նա տատին, — ուրիշներու պես տարիներով չեմ կրնար նշանած մնալ:

Տառը, որ համաձայն էր թոռան հետ, խնամուն հաղորդեց նրա կամքը:

Անհամաձայնության պատճառ չկար, աղջիկը հա-

¹ Ժամանակ:

² Շուտ:

սած էք, արդեն տասնչորս տարեկան և Չատիկի հարսանիքը կատարվեց նշանդրեքից երեք ամիս հետո:

Պսակը դրեցին ժամում և հարսանիքը կատարվեց առոք-փառոք: Դուռ-դրացի, աղպական ու բարեկամ, մասնակցեցին հարսանեկան ուրախությանը: Անդամ աղան իր կնոջ՝ Սոֆիի հանրմի հետ եկավ հարսանիքին: Կերուխում եղավ, երգ ու պար, դհուլ-զուռնա:

Չատիկը մի զարդուսկի էք նվիրել կնոջը և ոսկի մատանի առել նրա համար:

Բայց... ինչպիսի՞ բախտ էր Չատիկի բախտը...

«Որքը ե՞րբ կլինդա առ աշխրջիս մեջ, որբությունը ճակատի գիր է, անիկա մինչև դերեզման կեթա մաքրուս հետ»:

Եվ ահա Չատիկին, այդ որբ տղային, որ տասնհինգ տարի շարունակ ուրիշի դռներին էր աշխատել, որ «աշխատանքեն դատ ուրիշ բան չէր ճանչցեր աշխրբքիս մեջ», այնպիսի դժբախտություն պատահեց, այնպիսի սարսափելի բան, որ «աստված դուշմընիս չցուցունեն»:

Հարսանիքից յոթ օր հետո, առավոտյան, երբ Չատիկը այգի դնաց, նրա կինը, Մարիամը, տատից թաքուն, բաց արեց տան դուռը, դուրս եկավ փողոց ու դնաց մոր տունը:

Ու այլևս չվերադարձավ:

2.

— Տերմանենց հարսը փախեր է:

Գյուղի բերանն էր լուրը:

Գյուղի համար խոսելու նյութ էր պետք, այլապես ի՞նչ էր պատահածը— սովորական երևույթ... Գյուղում քանի՞ քանի՞ հարսներ էին փախել Տերմանենց հարսի նման ու նորից վերադարձել: Եվ վերադարձից հետո հարսերն ավելի էին սիրել իրենց ամուսիններին, ավելի ջերմորեն կապվել նրանց հետ:

1 Թշնամի

— Ստիկա ատեթի¹ պես բան մըն է գեղի հարսե-
րուն համար:

Ու պառաւիները, որոնք կյանքի փորձն ունենին և
տեսել էին շատ հարսերի փախչելն ու վերադառնալը,
ասում էին իրար մեջ:

— Նազ կընեն, մենք ալ չե՞նք փախեր:

Սոսերու ի՞նչ կար, պատահածը սովորական բան
էր:

— Սաօր փախեր է, առտուն կուգա:

Բայց Չատիկի պառավ տասն անհանգստացավ:
Հարևան երկու պառաւիների հետ գնաց խնամու տունը,
կանչեց հարսին, նստացրեց կողքին և գզվեց ու համ-
բուրեց նրան. — Ի՞նչ ուներ, ինչո՞ւ էր փախել, Չա-
տիկի՞ն չէր հավանում, փա՞տ էին պահում, քաղցած
էր մնում, թե՞ ծեծում էին:

— Հավակես առավել կսիրիմ, հանրմի պես նստե-
տունին քյոչեն² սրտիդ ուզածն ըրե, կուզես պառկե,
կուզես նստե, մատդ մոխիրը մի թաթխեր, քեզի բան
ըսող կա՞, մեղա ասված, ասիկա կվայլե՞ մեր անու-
նին, ալեմին³ բերանն ընկանք:

Բայց Մարիամը լաց էր լինում մերժողաբար ուտե-
րը ցնցելով:

Տաօր վերադարձաւ ձեռնունայն:

— Անթառա՛մ, — ասում էին հարևան պառաւիները,
— հարազ սղտիկ է, քիչ մը պի մեծնա, որ խելքը
դա:

— Գիտի՛մ, օղո՛ւլ, գիտիմ, — պատասխանում էր
Անթառամը՝ արամորեն գլուխն օրորելով:

Տաօր չհուսահատվեց: Չահել հարսեր գտաւ և ու-
ղարկեց Մարիամի մոտ: Գուցե նրանք կարողանային
համոզել:

Չահել հարսերը գնացին խնամու տունը, ժամերով
խոսեցին Մարիամի հետ, ինչե՛ր չպատմեցին իրենց

¹ Սովորույթ.

² Անկյունը.

³ Աշխարհի, մարդկանց:

կյանքից, իրենց առաջին օրերի երկյուղներից, իրենց
զլխով անցածներից... Ոչի՛նչ չօգնեց: Մարիամը հաս-
տատակամ մերժում էր բոյորին:

— «Ձե՛մ ուզեր... չե՛մ ուզեր...»

Ճարահատ՝ Չատիկին անձամբ գնաց գործանչի տու-
նը: Մարիամը թաքնվեց հարեանի տանն ու չեբեաց
ամուսնուն:

Չարմանալի կամակոր էր նա:

Հարսի մայրը սահայն աշխատեց մեղմացուցիչ
պարագաներ փնտրել աղջկա արարքի, համար:

— Չատի՛կ, օղո՛ւլ, — ասաց նա, — աս գործի՛ն մեջ
մենք ալ հանցանք ունինք, գուն ալ:

— Ինչո՞ւ...

— Ինչու որ աճելե՛ քրինք... աղջիկնիս քանի՞
տարվան էր որ կարգեցինք... Գեղի ատեթը մեռնի...
Չահել է, վաղը մեկալ օր խելքը կուգա, կուզե, պի՛
համբերես ի՞նչ ընինք:

Ու Չատիկը վերադարձավ գլխիկոր:

Այն ժամանակ, որպես վերջին միջոց, Չատիկն
ուզեց օգտագործել եկեղեցու հեղինակությունը: Դիմեց
տաներեցին՝ խնդրելով նրա միջնորդությունը:

— Տեր հա՛յր, — ասաց, — տուն աս գործը գլուխ
բեր, ես տակը չե՛մ մնա:

Այս անգամ փտահ էր, որ կինը կվերադառնար:

Բայց Մարիամը անդրդվելի մնաց ու մերժեց տեր-
տերի միջնորդությունն ևս:

Չատիկը ցնցվեց հոգեպես:

Մերժվածի ցալազին իր ապրումների մեջ, որպես
հույսի վերջին նշույլ, մնում էին գործանչի խոսքերը
միայն:

— Չահել է, վաղը մեկալ օր խելքը կուգա կուզե:

Այդ միտքն էր միայն, որ հուսադրում էր իրեն,
սիրտ տալիս՝ ինչպես փրկության լաստափայտը ա-
ղետյալին: Բայց զգում էր, որ ինքը բախտի զոհն է,

զոհը գյուղի դժբախտ «ատեթին», որ «թող չի տար
աղջիկ տղու իրար վրա տաքնալ», որ տասնչորս տա-
րեկանից վեր աղջիկներին «փատցած» է համարում,
«թերության տեր», «պակասավոր», որ ուզում է տաս-
նըհինգ տարեկան աղջկա գրկում երեխա տեսնել...

«Գեղի ատեթը մեռնի...»:

3.

Ամիսներն անցնում էին ամիսների ետևից, իսկ
Մարիամը չէր վերադառնում: Զատիկը տաքնապում
էր, բայց շարունակում էր հուսալ:

«Զահել է, մտածում էր նա, վաղը մեկալ օր խել-
քը կուզա, կուզե...»

Եվ լուռ, անձկագին, երազում էր իր հարսին:

Հիշում էր նրան, «Նրա շունչը խունկի պես էր ու
աչքերի հայացքը անուշ՝ արևի լույսի նման»:

Միայն յոթ օր էր ապրել նրա հետ, անմահության
չափ քաղցր յոթ օր, որի հիշատակը հիմա ավելի էր
քաղցրանում իր հոգում, ցանկությամբ, ու հրայրքով
տոչորում սիրտը:

Տանը, առանձնության պահերին, կամ այգում,
դադարի ժամին, երբ գնում էր ընկողմանելու ծառի
ստվերում, մտածում էր Մարիամի մասին, աչքերը
փակ, հուզումնազին կարոտով երազում էր նրա արագ
ու թեթև շարժումները, ուր ավելի շուտ մանկություն
կար, քան թե կին:

Հիշում էր նրա դալար իրանը՝ թեթև, թրթուռն
չորի տակ, հինաչած մատները՝ որոնցից մեկի վրա
փայլում էր ոսկի մատանին և որոնք բուրում էին հար-
սանեկան քաղցրություն: Նրա ջահել հոգին փոթորկ-
վում էր, փուլ գալիս, երակների մեջ վազում էր տար-
փանքի սարսուռը: Նրա աչքերը մթնում էին և սիրտն
ալեկոծվում, նրան թվում էր, թե հոգու վիշտն իր
արմատներն առնում է մանուկ օրերի որբությունից,
որ որբության լացը շարունակվելու է մինչև գերեզ-

ման: Մարմինը փշաքաղվում էր, սարսուռը պատում էր հողին:

— Էքսիզը՝ չինդար, — մտածում էր նա:

Քանի օրերն անցնում էին, տատի տարակուսանքն ավելանում էր հարսի վերադառնալու մասին, բայց ոչինչ չէր ասում թոռանր:

— Թող ումուտով՝ մնա, մտածում էր նա, ումուտը երազի պես անուշ է:

Եվ երբ տեսնում էր նրա տխուր ու հուսահատ դեմքը, նստում էր կողքին և հուսադրում նրան.

— Հիչ հոգի մընիք յավրում³, վախիթը որ դա, Մարիամը վազելեն կուդա:

Այն ժամանակ սրտի սուր կսկիծով լսում էր Չատիկի հուսահատ բառերը.

— Է՛հ, առ վախիթը տեսնեմ երբ կուդա...

Բայց փախչող հարսի անկողարելի համառությունը սկսեց կասկած ներշնչել շատերին.

— Աստեղ բան մը կա, — ասում էին ոմանք տարակուսանքով:

Որովհետև փախչող հարսներն այդպես երկար չէին համառում, — տասն օր, շատ շատ՝ կես ամիս, — և ահա համոզվում էին ու վերադառնում իրենց ամուսինների մոտ: Մի ամիս փախչող հարսներին մատով էին ցույց տալիս:

Մարիամը, սակայն, ահա վեց ամիս է, որ չէր վերադառնում:

— Աստեղ բան մը կա...

Ու շատերը, որոնք սկզբում խղճում էին Չատիկին և մեղադրում՝ աղջկան, կամաց կամաց սկսեցին մտածել.

— Չըլլա՞, որ տղուն կողմը պակասություն մը ըլլա...

¹ Որբ:

² Հույս:

³ Որդյակ:

Այս կասկածը հետզհետե տարածվում էր դյուղի մեջ:

— Չի դիտցվիր, առիկա գաղտնիք է, — ասում էին շատերը երկմտանքով:

Տարակուսանքով ու անվստահությամբ ասված այս խոսքերը սակայն, հասան տառի ահանջին:

Այն ժամանակ տատը մահու չափ խոցվեց ու վախ դրաց:

Բայց դա հասարակ ու անհիմն կասկածանք էր, չարամտությամբ ասված խոսք: Տառի խեղճ թոռը չելիկի՛ պես էր, օր մը օրանց հիվնդցած չէր: Քաբը որ բռներ, փչրունք կըններ»:

— Հե՛յ վախ, ալեմի՛ն բերանն ինկանք, — հառաչում էր տատը:

Այժմ տառի միակ մտածումն էր, որ Չատիկը չլսի տարածվող այդ կասկածանքի մասին: Ու հարսի հանդեպ թաքուն սխր պահած սրտում, Չատիկի սիրու համար, վատ չէր խոսում նրա մասին:

Մակայն Չատիկը դեռ հուսում էր Մարիամի վերադարձը: Կիրակի օրերն ածիրվում էր, փեսայության շորերն էր հագնում և բարակ ու երկար բեխերը որբելով եկեղեցի էր գնում՝ անցներով գոքանչի դռնով:

Հույս ուներ տեսնել Մարիամին, որսալ նրա հայացքը, դուցե նա պատահմամբ նայեր, տեսներ իրեն, գուցե զղջար արածի համար, կտարեր համառությունը, սիրտը շարժեր և արթնացներ: Հո քարից շինված չէ՞ր այդ աղջիկը

Գյուղի կանայք, որոնք տեսնում էին նրա՝ գոքանչի դռնով անցնելը, փսփսում էին.

— Չատիկը նորեն անցավ կնիկա դռնեն:

4.

Տարին լրացավ, իսկ Մարիամը չվերադարձավ: Հիմա գյուղը միաբերան մեղադրում էր փախչող հարսին, որովհետև «տղուն կողմը պակասություն մը

1 Պողոսա:

ըլլալու» կարծիքը Մարիամի մոր կողմից հերքվել էր խապառ:

Իրեն հարց տվող կանանց, խնամին հաստատապես հայտարարել էր.

— Տղուն մեղքը մի մանեք, անիկա հանցանք չունի:

Մի տարվա սպասումից հետո Չատիկը հույսը կարեց: Հոգին լի դառնությամբ, այլևս երբեք չուղեց հիշել կնոջը, հուսալ նրա վերադարձը, երազել նրա հիշատակը:

Հեռավոր քաղցրությունները, որոնք մի օր երանությամբ էին լցրել նրա սիրտը, կամաց-կամաց ազդեցին՝ տեղի տալով ավայտագին ապրումների:

Առաջ հին հուշերի ցամաքին վերապրումն անգամ անփոփոմ էր նրան, իսկ հիմա հուսալու անկարելիությունը կատաղության էր հասցնում Չատիկին և ատելությամբ լցնում Մարիամի ու նրա ամբողջ գերդաստանի հանգեպ:

— Օջախս մարեցին, — ասում էր նա՝ հուզմունքից շուրթերը սեղմելով:

Երբ տատը ճաշի սեղանի մրա խոսք էր բացում հարսի մասին, Չատիկը լռեցնում էր նրան:

— Ատոր խոսքը չեմ ուզեր որ ընես, — ասում էր:

Ճատը լուռ էր, շրթներն ամուր փակում՝ կարեկցորեն նայելով թոռանը, աչքերի մեջ որոշակի կարգալով նրա հոգու ահագին վիշտը:

Ճաշն անցնում էր լուռ: Սրտներն ուռած մշտով, ուտել չէին կարողանում, պատառը բերանի մեջ մեծանում էր և կուլ չէր գնում:

Ճաշից հետո, շատ անգամ, Չատիկը դուրս էր ելնում անից, գնում էր յանաչմա բնիկերների մոտ և գիշերը վերագառնում ուշ ժամանակ: Երբեմն տատը նրա բերնից օղիի հոտ էր առնում, բայց չէր համարձակվում խոսել:

— Դարգը մարդուս ամեն բան ընել կուտա, — ասում էր ինքնիրեն:

Չատիկը հաստատապես որոշել էր չմտածել այլևս Մարիամի մասին: Անգամ նրանց դռնով չէր անցնում, որպեսզի հին հուշերը նորից չզարթնեն հոգում, սիրտը չմոռա ցավով և վերքերը չկսկծեն: Շուտ էր ապլիս գլուխը, շտեմնել էր ձեռքերը, մինչև իսկ ճանապարհն էր փոխում, երբ Մարիամի հարազատներից մեկին էր հանդիպում փողոցում կամ այդի գնալիս:

Բոլորը նկատում էին նրա անտարբերութունը, առաջվա կրակոտ ու հետապնդող հետաքրքրության կատարյալ ու հաստատ շրջումը:

— Մարիամի անունն ալ չուզեր լսել, — ասում էին:

— Չավալը¹ Չատիկ, ումուտը² կրցեր է:

Սակայն հուսահատ այս նահանջի ժամանակ Չատիկի միտքը տանջում էին դժնդակ հարցեր.

— Ասոր վերջը ո՞ւր կեթա, — ասում էր նա ինքնիրեն, անկնի՞րդ պի մեռնիմ, անժառաֆնդ, որո՞ւ համար կաշխատիմ:

Ու նախանձում էր գյուղի այն բոլոր երիտասարդներին, որոնք պսակվում էին և խաղաղ ու սիրով ապրում իրենց կանանց հետ:

Ինքն էր միայն, որ գրկված էր կին ունենալու քաղցր իրավունքից, որովհետև կինը փախել էր և հիմա թույլ չէր տրվում իրեն ամուսնանալ՝ առանց պսակը լուծելու:

Իսկ ո՞վ պիտի լուծեր պսակը:

Ելքի անկարելիութունը ընկճում էր նրան, կքում ուսերը, տրամությամբ և հուսահատությամբ համակում հոգին: Ու նորից նույն հարցն էր ծաղում նրա գլխում, որ մղձավանջի պես դաժան էր և դժվարին:

— Ո՞վ պիտի լուծեր պսակը:

Եկեղեցին չէր լուծում: Քանի՞ անգամ դիմել էր տեղաերին, բաց էր արել սիրտը, պատմել դարդերը, տատի և իր տխուր վիճակը, բացատրել էր իր ճակա-

¹ Խեղճ:

² Հույսը կտրել է:

տաղբի անստուգությունն ու անորոշությունը, բայց տերտերն անզիջող էր.

— Չըլլա՛ր, Չատիկ, — ասում էր նա, — տղու պես մի խոսիր, օրենքը չընդունիր, կնիկդ ասօր «չեմ ուզեր» կըսես, առտուն «կուզիմ» կըսես... Համբերե՛, գրեթե Ստամբուլ, պատրիարքարան, տեսնենք ինչ ջուղաս կուզա:

Չատիկը հուսահատ էր, որովհետև դյուզլի բանիմաց մարդիկ ասում էին, որ պատրիարքարանը չի լուծի պսակը:

— Քանի որ կնիկդ ողջ է, քեզի հախ՝ չեն տար պսակվելու:

Հետո՞...

Ո՞վ պիտի լուծեր պսակը:

— Ե՛ս...

Չատիկը սարսափ էր դգում այս մտքից, աչքերը մթնում էին, գլուխը պտտվում էր:

Հետո, ո՞վ իրեն ազջիկ կտար...

Այս մտածումը լլկում էր նրա հոգին, չարչարում մղձախանջի պես:

Ու այլևս եռանդ չէր ունենում աշխատելու... Անկամ ու տխուր դնում էր այգի, մի քիչ փորում, հետո պառկում էր ծառի ստվերի մեջ և հառաչում թաքուն...:

5.

Գարնան սկզբին, տատը մի երկու օր հիվանդ պառկեց, տնքաց ու մեռավ:

Չատիկը միանգամայն որբացավ:

Աշխատանքից վերադարձին այլևս ոչ ոք չէր գի՞ մավորում իրեն դռան շեմի վրա: Տան մեջ ստվերն էր միայն իր ընկերը:

Մենակությունը ցուրտ էր: Մենակ կյանքը իմաստ

¹ Պատասխան.

² Իրավունք:

չունենք, ինչո՞ւ էր ապրում չգլխներ, և ի՞նչ էր իր հան-
ցանքը: Գլխներ միայն, որ եկեղեցին թույլ չէր տալիս
պահպանել, «տուն-տեղ ըլլալ», որովհետև ան «չան դա-
վակը» թողել հեռացել էր և պատճառ դարձել, որ իր
օջախը մարի: Եկեղեցու իշխանությունը երբեք այդ-
պես ահավոր չէր թվացել նրան: Ո՞վ էր տվել եկեղե-
ցուն այդ ուժը, աստված, թե մարդիկ... ո՞վ իրա-
վունք ունենք արգելք լինել իրեն կին առնելու, ընտա-
նիք կազմելու, ժառանգ ունենալու...:

— Ատանկ օրենք չըլլար, — ասում էր ինքնիրեն:

Ու նրա հոգու մեջ ներծծվում էր արհամարհանքի
և թշնամության զգացումը եկեղեցու դատան օրենքի
հանդեպ, որ անմեղին դժբախտացնում էր: Չատիկին
այլևս չէր ուզում ժամ դնալ, պատարագ լսել, տեր-
տերի երես տեսնել: Հարության ատնին, անօրհնեքի ե-
կող տերտերին չհանդիպելու համար անից դուրս եկավ
և տատի գերեզմանն էլ օրհնել չտվեց, որսկապի տեր-
տերի երես չտեսնի:

— Չատիկ, օղուլ, — արում էին դուռ-դրացիք
կարեկցությամբ, — ինչո՞ւ ժամ չես եթար:

— Ասածու հեռ քեն եմ ըրեր, — պատասխանում
էր նա:

— Մըսե՛ր, Չատիկ, մեղքը կմանես:

— Ի՛նչ մեղք, ի՛նչ բան, սուտ է, մեղք չիկա...

Մի օր, ամռան սկզբին, Չատիկը սուսվոսյան այ-
գի չգնաց:

— Տերտերին պեթամ, ասաց հարեաններին:

— Ինչո՞ւ...

— Կռիվ ընելու...

Նրա դեմքը մռայլ էր և աչքերի մեջ զայրույթ
կար: Դուրս եկավ անից, անցավ փողոցներով, արագ,
հեիհե ու ներս մտավ ժամի բակը:

— Տեր Գրիգորն աստե՞ղ է, — հարցրեց ժամկո-
չին:

— Աստեղ է:

Նա ներս մտավ ավազ երեցի սենյակը և առանց

«օրհնյա ի տեր» ասելու, տերտերի դիմաց կանգնած, դժգուշն ու հուզումնահար, ասաց.

— Տե՛ր հայր, յա՛ կնիկս տվեք, յա թող տվեք, որ պսակվիմ¹:

Չատիկը դողում էր ամբողջ մարմնով, Ֆեսը ցած էր բերել դիսից և արևահար դեմքի մկանները պըրկված էին:

— Համբերելն ալ ասքան կըլլա, — շարունակեց նա, — մարդիկ ալ դետեն, ասված ալ դիտե, որ աս գործին մեջ ես հանցանք չունիմ, դելիխանլը² եմ, անկնիկ կընամ³ ըլլալ, բերանս բանալ մի տաք...:

Ծխատուփը հանելով գոտիի ծալքերի միջից, նստենդոտ մատներով սկսեց ծխախոտ փաթաթել:

— Նստե՛, — ասաց տերտերը մտածկոտ:

Չատիկը նստեց տախտակամածի վրա, Ֆեսը դրեց ծնկին և սկսեց ծխել:

— Չատի՛կ, օղո՛ւլ, — ասաց տերտերը, — պսակը չլուծված քեզի եկեղեցին չի կրնար պսակել...:

Չատիկը բարձրացրեց գլուխը և շեշտակի նայեց տերտերին.

— Ատանկ օրենք չի կրնար ըլլալ, — ատիկա օրենք չէ, ատիկա անօրինություն է:

— Ատանկ բաներ մըսեր, մեղքը կմտնես, — մոմը ուսց տերտերը:

— Ինչո՞ւ մեղքը պի մտնիմ, — ասաց Չատիկը, — քանի որ կնիկս ինձի չի ուզեր, պսակը պետք է լուծվի, որ ես ալ պաշխա՞ կնիկ մը առնիմ...:

— Ըսածդ օրենքով չէ, տղու պես մի խոսիր Չատիկ, կարգ կա, օրենք կա: Կնիկդ ջահել է, մի օր «կուզիմ» պիտի ըսես:

— Ե՞րբ պիտի ըսես, — ընդմիջեց Չատիկը եռանդազին, — քանի՞ տարիեն պիտի ըսես, երկու ամիս հետո երկու տարի կըլլա, կուզիմ չըսալ, պելքի հիչ ալ չըսեք, ան ատեն ես ի՞նչ ընիմ...:

¹ Կամ.

² Երկասարդ.

³ Ուրիշ.

— Ես օրենքով կխոսիմ, — ասաց տերտերը...
Ու բաց անելով փոքրիկ սնդուկը, միջից մի ծրար
դուրս բերեց:

— Տեսի՛ր, — ասաց նա, — ասիկա պատրիարքարա-
նի նամակն է, գիտե՞ս ինչ կըսես:

— Ի՞նչ կըսես, — հարցրեց Չատիկը շփոթված:

— Հրաման չի տար, — ասաց տերտերը:

— Ինչո՞ւ չի տար, — հարցրեց Չատիկը հուզված:

— Ա՛ն, կարգա և տեսիր թե ինչո՞ւ չի տար:

— Ես կարգալ չիտիմ, դուն ըսես:

— Անոր համար, որ կնիկդ ողջ է:

Չատիկն ընդոտոտ ոտքի ելավ, ֆեսը գրեց գլխին,
հոնքերը պուտեց.

— Չի տար, հա՛... շատ աղեկ, ես ալ ասկե ետ-
քը նե՛ ժամ կճանչնամ, նե պատարագ...

— Ինչե՛ր կըսես, Չատի՛կ...
Բայց Չատիկը հեռացավ սենյակից՝ առանց ետ
նայելու:

Նա հուսահատ էր, ու դժգույն:

6.

Տերտերի բառերը մեխի պես ցցվել էին նրա ու-
ղեղի մեջ:

— Կնիկդ ողջ է...

Ահավոր վճիռ էր լսածը, իր անմեղության դեմ
արձակված դաժան ու անսիրտ դատավճիռ... Ի՞նչ էր
էր հանցանքը, որ այդպես անխիղճ էին վարվում էր
հետ:

Հույսի վերջին նշույլը հանգել էր, այլևս ոչ մի
տեղից սպասելիք չուներ, օրենքն ու մարդիկ երես էին
դարձրել իրենից, դատապարտել խոտորեն ու անողոք:
Չատիկը քայլում էր գիշովի պես, աչքերը մըթ-
նում էին և ակամջները դժժում: Գիտեր, որ պատրի-
արքարանի վճիռը վերջնական էր և անդառնալի: Վա-
ղը մյուս օրը, ամբողջ գյուղը կլսեր այդ մասին և բո-

լարը միաբերան նորից կհորդորեին իրեն՝ սպասել:

Բայց կյանքի ավիշը հորդում էր նրա երակների մեջ, աշխատելու, սիրելու և ապրելու տենչը անդիմադրելիորեն փոթորկվում էր նրա հոգում և եկեղեցու ու մարդկանց օրենքները չէին կարողանում հաղթահարել Չատիկի ապրելու և սիրելու թափը: Նա որոշակի տեսնում էր, որ այլևս անկարելի էր հուսալ ու երազել: Պատրիարքարանի պատասխանը խափանում էր ամեն հեռանկար: Չատիկն զգում էր, որ դաժան բոցը լավում է իր սիրտը: Հանկարծ մեկը բռնեց նրա թեփեց: Մարկոսն էր, մանկության իր ընկերը, Մարտիրոս աղայի յանաչման:

— Ուրի՞նչ կուզաս, — հարցրեց նա, — ասօր էզի չե՞ս գացեր:

Չէ՛, — ասաց Չատիկը, տերտերի քոյկն կուզամ:

— Աղեկ խաբար՝ կա՞...

— Չէ՛, — հառաչեց Չատիկը, — Ստամբուլն թուղթ էր եկեր...

— Ի՞նչ կըսես թուղթը, — ընդմիջեց Մարկոսը:

Չատիկը շրթները սեղմեց.

— Թող չեն տար... ասաց նա հառաչելով:

— Ետքը՞, — հարցրեց Մարկոսը, կարեկցորեն նայելով Չատիկին:

Չատիկն ատամները կրճատացրեց և այտուկըները շրճագորեն շարժվեցին.

— Ետքը զիտե՞ս ինչ կըլլա, — ասաց նա...

— Ի՞նչ...

— Ետքը ան կըլլա, որ մեկը կառնիմ կնստիմ, հասկցա՞ր՞ Մարկոս:

Չատիկի աչքերը վառվում էին բարկությամբ և շուրթերը դողում էին:

— Ես չէի ուզեր դորժը ատտեղ հասցնել, — շարունակեց նա, — ամա ի՞նչ ընիմ, համբերելն ալ ասբան կըլլա...

1 Կոր:



8003

11 27050

Մարկոսը լուռ ու չվար նայում էր Չատիկին, որի ձայնը վճռական շեշտ ուներ: Չգուժ էր նրա բախտի ամբողջ դառնությունը, մանկության իր ընկերն էր նա, բոլոր ցավերն ու ուրախությունները միասին էին բաժանել, դժբախտության այդ երկար շրջանում տմեն օր ցավակից էր եղել նրան, մխիթարել, սիրա տվել, հորդորել համբերության՝ բարեհաջող վախճանի հույսով: Ի՞նչ ասեր, ինչպե՞ս մխիթարեր հիմա նրան: Պատրիարքարանն ահա իր վճռով դալիս էր նրան մերջին հարվածը տալու: Մարկոսն զգում էր ընկերոջ ճակատագրի եղբրականությունը, որ նրան մղում էր ողբերգական որոշման:

— Մեկը կառնիմ, կնստիմ...

Այդպիսի բան կարո՞ղ էր լինել:— Գյուղում երբեք տեսնված բան չէր, օրինակը չկար, չէր էլ լքված... Իր ընկերն առաջինն էր, որ ուզում էր գարավոր կարգերին դեմ գնալ:

— Ի՞նչ կըսես, Մարկոս:

Մարկոսը շարունակում էր լռել, լեզուն չորացել էր, շուրթերը փակվել էին: Ակնապիշ ու զարմացած նայում էր Չատիկին, որի աչքերը փայլում էին ե. շուրթերը դողում:

— Դուն հանցանք չունիս,— ասաց Մարկոսը,— Իրենք ըրին...

— Անանկ չէ՞, յա,— ասաց Չատիկը՝ քաջալերված ընկերոջ պատասխանից,— ես ի՞նչ հանցանք ունիմ, որ ինձի կպատժեն, մա՞րդ եմ սպաններ, թե՞ գողություն եմ ըրեր...:

— Չէ,— ասաց Մարկոսը,— առ գործին մեջ դուն հանցանք չունիս, ատիկա ասված ալ դիտե, մարդն ալ:

7.

Չատիկի կյանքը միանդամայն փոխվեց:
Մոռացած՝ Մարիամին, հուռահատված՝ եկեղե

ցուց, տանջված՝ օրենքից, Չատիկը ելք որոնեց օրենքից դուրս, որոշեց դեմ գնալ ընդունված կարգերին ու սովորութեանց: Հիմա նա փնտրում էր մեկին, «առնի նատի»: Մտքի միջով անցկացնում էր դյուղի աղջիկներին, հանդարտորեն ու զմայլումով. դգվում նրանց պատկերն իր հոգում, ընտրութուն էր անում: Ամենց ավելի կանգ էր առնում մեկի վրա: Քսան տարեկան էր նա, մարմնեղ ու դեղեցիկ, այտերից արյուն էր կաթում ու սև մազեր ուներ: Էլմասի քույրն էր նա, — Հայրենը: Ամեն անգամ նրա մասին մտածելիս սարսուռ էր անցնում մարմնովը, աչքերը շրմբում էին: Նա դուրս էր գալիս տնից, բեխերը ոլորելով անցնում էր Էլմասի դռնով՝ Հայրենին տեսնելու հույսով:

Բայց հանկարծ ծանր ու սև մի միտք սրաչարում էր նրա ուղեղը, մղձավանջի պես նստում հոգու վրա: — Ո՞վ էի՞՞՞նի աղջիկ կուտա, — մտածում էր նա տրամորեն:

Այս միտքը սարսափով համակում էր հոգին, սիրտը կանգ էր առնում, շունչը բռնվում էր և աչքերը մթաղնում էին: Ու գնում էր Մարկոսի մոտ:

— Ի՞նչ կըսես Մարկո՛ս, — ասում էր նրան, — տա՞սօր չիմե՞նք...:

— Խմե՛նք, — համաճայնվում էր Մարկոսը, — կանչե տղաները, դացեք մեր տունը, ես եթամ աղայեն իղին՝ առնիմ, գամ:

Իր յանաչմա ընկերները, որոնք խորապես գգում էին նրա հոգու վիշտը, առանձին գուրգուրանքով էին չըջապատում նրան, միխիթարում էին և հուսադրում Մարիամի մոտայուտ և անխուսափելի վերադարձի տևնկալութեամբ:

— Մարիամը ուչ-կանուխ կուգա, — ասում էին նրանք, — մերախ մի ըներ...:

— Ասոր-աստուն «կուզիմ» կրսե ջանքմ, ջահելությունը քանի՞ տարի, կքաչե:

● Այն ժամանակ Չատիկը զայրանում էր և գինու բաժակը ջղաձգորեն սեղմում:

— Ի՞նչ, — ասում էր նա, — «կուզիմ» ըսե, ասոր վախիթն անցավ, ալ «կուզիմ» ըսիլը ֆայտա՞ չընեք, թող անիկա հիմա պսակն առնե նստի, ես իմ ընելիքս գիտիմ:

Եվ, աչքերը զայրույթի ու վրեժխնդրության կրակով վառված, բաժակը դատարկում էր մի ուսպով, հետո խփում սեղանին ու ասում:

— Լեցո՛ւր Մարկոս, սիրտս էրված է:

— Անուշ եղավ Չատիկ:

— Անուշով մնաք:

Ընկերներն անչափ խղճահարվում էին: Չատիկն իրենց ավազ ընկերն էր, սրտաբաց ու անկեղծ տղա, զգում էին, որ չար ճակատագիրը հալածում էր նրան՝ հասցնելով հուսահատության եզրը:

Եվ զգալով հանդերձ նրա վշտի խորությունը, արդարացնելով նրա սրտչումը, հարցնում էին անզգուշորեն.

— Հիմա որ Մարիամը գա, չե՞ս ուզեր:

— Չեմ ուզեր, խաչ որ չեմ ուզեր:

— Մըսէ՛ր, Չատիկ, մեղք է...

— Մե՞ղք ըսիք, — բացականչում էր Չատիկը եռանդագին, մեղքն ի՞նչ է պե... զողությո՞ւն եմ ըրեր, որ մեղք ունենամ, թե՞ մարդ եմ սպաններ... Ես ամեն բան ըրի, համբերել պետք էր՝ համբերեցի, պատրիարքարան գրել պետք էր, գրել տվի, է՛հ, տահա ի՞նչ պի՛նիմ... խիղճս հանգիստ է, ես հանցանք չունիմ, իրենք ըրին... պատրիարքարանը թող չի տար կարգվիլ, հա՞... շատ աղեկ... անանկ է նե, ե՛ս ինձի՛ թող կուտամ... Ասիկ ետքը քանի՞ փարայի կառնիմ թող չի տալը... Անանկ է յա, թող

չեն սար... Հարուստ չեմ որ թող տան... Թող հարուստ ըլլայի, թող ավուճով¹ ոսկի կերցնեի, դուն կանաները ինչպէս թող կուտային... Բերանս քանայ մի տաք... Ի՛նչ մեղք, ի՛նչ բան...

Հիմա դյուղում շատերը դիտեին Չատիկի դիտավորութիւնը:

— Ատանկ բան կըլլա՞, — ասում էին շատերն իրար՝ վախով ու զարմանքով: Գյուղում մատի վրա էին հաշվում մարդիկ, որոնք համամիտ էին Չատիկին:

— Ի՞նչ ընե, — ասում էին դրանք, — մարդս անկնիկ կըլլա՞...:

— Թող համբերե, — ասում էին խտտաօրտները:

— Մինչև ե՞րբ, համբերե, Չանըմ, քանի՞ տարի համբերե, երկու տարին անցավ, ապա որ մինչև մահն ալ կնիկը չի դա՞, մարդը անկնիկ մեռնի:

— Թող անկնիկ մեռնի, — ապա ի՞նչ դիտցար, Բրիստոսի դրած օրենքը չոջուխի օյինջա՞խ² է... Իր խաչն է՝ պի տանի...

— Գնա՛ Չանըմ, ատանկ օրենք չըլլար...:

8.

Չատիկը դնաց դյուղի գերեզմանատունը և նստեց տառի գերեզմանի մոտ:

Սաղա՛ղ երեկո էր: Արևի վերջին շողերը թրթրում էին կապույտ տարածութեան մեջ և դաշտավայրը դանդաղ ծածկվում՝ ստվերով:

Հեռվում, լճակի կապույտ ջրերը հեռոցհետե մրթադնում էին և բլուրները մանիչակի երանգ հագնում:

Իաչաի ճամփաների վրա երևում էին տուն դարձող արտավորները և հեռուններից լսվում էր կովերի բառաչն ու ոչխարների մայունը:

Գերեզմանատանը ոչ ոք չկար, միայն ծառերի սո-

¹ Բուռ:

² Սաղ:

տալին էր լավում և ծղրիղների մեղալար ծվվոցը՝ ողբի պես ախուր ու լալաղին:

Գյուղը տարածվում էր բլուրի կոնդ թվար և իրիկնապահի կապույտ տարածության մեջ բուխերիկների, ծուխը բարձրանում էր հանդարտորեն ու տարածվում քամու շնչով:

Հեռվում, լճակից այն կողմ, լեռների պարն էր և հորիզոնի մաքուր գիծը երևում էր մայրամուտի մորող լույսերի տակ:

Չատիկն ընկել էր տառի գերեզմանի վրա, կողքին ծնողների գերեզմաններն էին: Շուրջը—բոլորը մեկ առ մեկ երևում էին սպիտակ շիրիմներ, որոնց մարմարը մեղմորեն փայլում էր իջնող մութի մեջ, իսկ դրանց շուրջը խոնարհ հողակույտեր, որոնց վրա հասարակ քարի կտորներ կային դրված՝ երբեմն տափակած, հողին հայխասար, կամ կիսովին թաղված առատորեն բուսած խոտերի և սիգարմատների մեջ:

Իր ծնողների գերեզմաններն էլ այդպիսի քարեր էին կրում: Ինքն էր բերել դրել նրանք: Տարին երկու անգամ հողակույտերը թարմացնում էր, քարերը դուրս բերում սիգարմատների միջից և նորից տեղավորում հողակույտերի վրա... Հետո, «երկու ծունկ» աղոթք էր անում նրանց վրա և հոգին թեթևացած տուն դառնում:

Տառի գերեզմանը թարմ էր: Սեղերը ծիլ էին տվել այնտեղ և երիցուկները ցցել իրենց ճերմակ գլուխները:

Խեղճ տատը «մուրատին չհասավ»... Ինչպիսի՞ դուրգուրանքով էր սիրում իրեն և ինչպե՞ս վշտահարված էր իրեն հասած դժբախտության համար: Ինքը հորն ու մորը երբեք չէր ճանաչել, բայց ահա նրանք ապրում էին իր մեջ, իր բազուկների և հոգու արիության մեջ, իր դժբախտության ու տվալտանքների մեջ: Կունենա՞ր արդյոք ինքն էլ իր շառավիղը, մահից հետո կլինե՞ր մեկը, որ այցելեր իր հողակույտին և երկու կաթիլ արցունք թափեր գերեզմանի վրա:

Չատիկի հոգին փոթորկիլեց այս դառնաղին մտածումներից և նա ոտքի ելավ, իջավ գերեզմանատան բլուրից, անցավ ձորակի աղբյուրի մոտով և ուղղվեց գեղի տուն՝ սիրտը լի տրամուլթյամբ ու արցունքով:

Մարկոսի տան մոտով անցնելիս, պարտեզից լսեց երգի ձայն, իր ընկերներն էին: Նրանք լսում էին, երգում և ուրախանում:

— Կիտեն, — մտածեց նա՝ ալանջ դնելով երգին:

Մտնոթ երգ էր լսածը: Քանի՞ տարի է ամեն տեղ երգում էին այն... Աշուղն էր հորինել գյուղի գեղեցիկ կանանցից մեկի վրա... Չար լեզուներն ասում էին, որ նա բաց կին էր, նրան հլմաս էին անվանում:

Վերեն ի վար փչեց հովը,

Փրփրեր է, կեթա ծովը,

Եկուր պազնիմ բերնիդ քովը,

Ա՛խ պի մեռնիմ, ա՛խ պի մեռնիմ

Ես հլմասին կարոտովը...

Եկո՛ւր պազնիմ բերնիդ քովը...

Մարկոսն էր երգողը: Չատիկը ճանաչեց նրա ուժեղ ու թրթռուն ձայնը: Մյուսները ձայնակցում էին: Երբը տարածվում էր պարտեզում, թթենիների կանաչ տերևների տակ, իրիկնային սովերի մեջ և գինու արբեցուցիչ բուրմունքը հասնում էր մինչև ցանկապատը, տարածվում փողոցում, ուր անցորդները, լսելով այդ երգը, չարախինգ ծիծաղում էին և ասում իրար.

— Էլմասը չյսե՛...

Նրանց ձայնի ելևէջները առանձնապես ուժեղ էին հնչում, հատկապես բարձր ու տարփաղին, երբ կրկնվում էր, —

«Եկո՛ւր պազնիմ բերնիդ քովը...»:

Չատիկը ճանաչում էր բոլորին: Երիտասարդներ էին, նրանց հոգում հույսը վառ էր, նրանց սրտները եռում՝ կարոտի ու սիրո կրակով, աչքերը՝ կյանքի ու սիրո հրայրքով բոցալուռ...

«Ա՛խ պի մեռնիմ, ա՛խ պի մեռնիմ

Ես հլմասին կարոտովը,

Եկուք պազնիմ բերնիդ քովը...

Չատիկը ճանաչում էր էլմասին, նա գեղեցիկ կին էր, մեծ ու սիրուն աչքերով, կրակոտ, մարմնեղ ու հալթակազմ:

Նրա ամուսինը, Մկրտիչ աղբարը, մի խղճուկ բարի մարդ էր, ճղճիմ ու փոքրիկ, գլխին խոլված մի մարդ, իսկ և իսկ կնոջ հակապատկերը:

Բայց Չատիկը լավ էր իմանում էլմասի անվանարկվելու պատճառը:

Մի օր, տարիներ առաջ, էլմասը գյուղի հարուստներից մեկի տանը լվացք էր անում: Աղան դայթակղվելով նրա, գեղեցիկությունից, գնացել քովել էր էլմասին և... մինչև իսկ համարձակվել էր կամթել նրա փափուկ մասերը...: Է՛հ էլմասը կհամբերե՞ր: Դարձել էր աղային և շրա՛խի, ապտակը հասցրել նրա քթին բերնին այնպես, որ տունը թնդացել էր: Հետո կանչելով հանրմին, առել էր նրան.

— Մարդուդ բռնե, չէ՛ նր ոտքիս տակը կաննի՛մ...

Ու հեռացել էր աղայի տնից՝ լվացքը կիսատ թողնելով:

Դեպքի մասին գյուղում լսվել էր չարափոխված ձևով. էլմասն ուղեցել էր աղային գլխից հանել, հանրմն էլ «անոր թևեն բռնածին պես տունեն դուրս էր ըրեր»:

Չատիկը հիշեց նրա քրոջ՝ Հայրենին, տունը մնացած այդ «փառացած» գեղանի, աղջկան... Ինքը դիտեր նրա «տունը մնալու» հիմնական պատճառը:

— Անոր քրոջն «անպատկառ էլմաս» կրսեն, հազար մարդու հետ ջյումբյուլ¹ կրնե...»:

Այսքանը բավական էր, որ ոչ ոք չբախեր էլմասի դուռը՝ նրա խնամքի տակ ապրող որբ քրոջ ձեռքը խնդրելու:

Բայց Չատիկը համոզված էր, որ էլմասը «կաթի պես մաքուր էր, Հայրենն ալ լուսի ճրագ»:

1 Ուրախություն, խաղ:

«Այս պի մեռնիմ, ա՛յս պի մեռնիմ
ես էլմասին կարոտովը...»

Եկուր պագնիմ բերնիդ քովը...»:

Չատիկը բարձրացավ ցանկապատի վրա և դռուց
ամբողջ ուժով:

— Մարկո՛ս...

Մարկոսը չլսեց և շարունակեց երգել:

— Եկուր պագնիմ բերնիդ քովը...»

Նրա ձայնը տարածվում էր կանաչ պարտեզում
հորդառատ հնչյուններով և բոլորը ձայնակցում էին
նրան:

— Մարկո՛ս...

Չատիկի ձայնն այս անգամ հնչեց ավելի ուժեղ:
Երգը դադարեց:

— Մարկո՛ս... — դռուց նորից Չատիկը:

— Չատիկ, դո՞ւն ես, — լավեց պարտեզի խորքից:

— Հա՛, ես եմ, աստին եկուր, Մարկոս:

— Ինչո՞ւ հեռուեն կոտոաս, — ասաց Մարկոսը, —
ներս եկուր, դուն օտար մա՞րդ ես, որ աստեղեն կխո-
սիս, ազբորդ տունն է աս, ներս եկուր, երկու հեղ
մարդ խրկեցի ետևեղ, տունը չէիր:

— Թե որ ինձի ազբարդ կընդունիս, — ասաց Չա-
տիկը, — քեզի իրճա՞ մը ունիմ:

Բայց այդ միջոցին մոտեցավ Մարկոսի մայրը,
Սրբուկ մարը և ասաց:

— Ինչո՞ւ դուրսեն կխոսիս, ներս եկուր, օտար
մա՞րդ ես դուն:

— Իրճաղ ի՞նչ է, — ասաց Մարկոսը:

— Իրճաս ան է, որ էլմասին խաղը չի երգես:

— Ես քու խոսքդ երկուք չեմ ըներ, — ասաց Մար-
կոսը, — ներս եկուր, մեկ այ չես լսեր:

— Էլմասը ի՞նչ ըրած ունի, որ միամ խաղ են հա-
ներ, — ասաց Սրբուկ մարը, — ես Ստամբուլ գացած
եկած կնիկ եմ, ես աղեկը դեչեն կզատիմ, էլմասը
լուսի պես մաքուր է:

1 Խնդրանք (ըհճա բառի աղավաղված ձևն է):

— Այլ չեմ երգեր ըսի յա, — ասաց Մարկոսը մորը: Բայց Սրբուհի մորը շարունակեց.

— Աղեկ, ամա էլմասն առտուն կլսե, որ մեր պաղ-
չան թուի՞ են եղեր և իր խաղն են կանչեր: Իզմե կնե-
զանա, իրավունք ալ ունի նեղանալու, «Սրբուհի մար,
բրածնիդ կվայլե՞» որ ըսե, ան ատեն ես ի՞նչ ըսիմ... :
Ու դառնալով Չատիկին ասաց.

— Աղեկ, որ եկար, քսան հեղ աչք ըրի Մարկո-
սին, չհասկցալ: Ատոնք որ խմեն, աչխարհքը կմոռ-
նան:

— Յանի՞ դուն չե՞ս դիտեր որ էլմասն ատ գործին
մեջ հանցանք չի ունեցե, — ասաց Չատիկը Մարկո-
սին... :

Մարկոսը խոնարհեց դուռիը հանցավորի պես:

— Տաճա շիտակը կուզես նը՞ էլմասի քրոջը տունը
մնալու պատճառը ատ խաղն է, չէ նը Հայրենի պես
քանի՞ տղջիկ կճարվի գեղին մեջ, — ասաց Սրբուհի
մորը:

— Իրա՛վ է, — ասաց Չատիկը եռանդազին:

— Ամա՞ «վրաները խաղ կա» կըսեն, չեն մոտենար:

— Այ մի ըսիր, հասկցա, — ասաց Մարկոսը:

Ու դառնալով Չատիկին ասաց.

— Ներս եկուր:

Բայց Չատիկը հրաժարվեց:

— Գերեզմանեն կուգամ, — ասաց նա, — դացեր էի
մեռեխներուս վրա երկու ծունկ աղոթք ընելու, սիրտս
լեցված է, խմել չեմ կրնար, դուք քեֆերնիդ ըրեք,
աղաներուն ըսե, որ չնեղանան իզմե... :

Ու հեռացալ:

Տխուր ու մտածկոտ Չատիկը քայլում էր նեղ ու
փոշոտ փողոցով և այլևս չէր լսում էլմասի երգը:

1 Հավաքվել են:

2 Այսինքն:

3 Մակայն:



Գերեզմանատան ներքևի կածանով աղբյուրի ձորն
 Բջնեկս, Չատիկը տեսալ մի ջահել աղջկա, որ նստել
 էր աղբյուրի գուռի վրա:

Չատիկը ճանաչեց աղջկան.— Էլմասի քույրն էր,
 Հայրենը: Նա թեքվել էր դեպի գուռը և կուժը բռնել
 էր ջրի դեմ:

Հայրենը հագել էր հասարակ երկնադույն կտորից
 կարած բարակ շոր, մազերը երկու հյուս էին արած
 և աջ ձեռքի բաղուկի վրա կրում էր գունավոր ապա-
 կուց ծաղկանկար ապարանջան:

Բահն ուսին, Չատիկը մոտենում էր աղբյուրին,
 սրի մոտով ձգված էր իր տան ճամփան: Իրիկուն էր և
 սափերը ծածկել էր աղբյուրի ձորը: Գերեզմանատան
 ծառերի կատարները դեռ ողողված էին արևի դժգույն
 շողերով և բլուրի վրա տների լուսամուտները փայ-
 փլում էին հրախառ լույսով: Աղբյուրի ձորում լուս-
 թյուն էր: Միայն հոսող ջուրն էր աղմկում հանդար-
 տորեն... Չուրը հոսում էր գուռից՝ և դլլալով իջ-
 նում բարակ աւով:

Չատիկը հեռվից տեսալ Հայրենին ու կանգ ա-
 նալ: Այդ անակնկալ ու քաղցր հանդիպումը ճշմարիտ
 բախաավորություն էր Չատիկի համար: Նրա սիրտը
 տրոփեց և աչքերը լույսով վառվեցին: Նա հիացմուն-
 քանքից և ուրախությունից քիչ էր մնում ճշար: Այս
 պահին ոչ մի աղջիկ չէր դա գերեզմանի աղբյուրից
 ջուր տանելու: Ի՞նչն էր ստիպել Հայրենին՝ այսպես
 անժամանակ այդ աղբյուրը գալ ջրի համար:

Չատիկը նայեց նրան երկա՞ր: Նա մարմնեղ էր ու
 սիրուն: Հիշեց Սրբուկ մարի բառերը:

— Հայրենի պես քանի՞ աղջիկ կճարվի գեղին մեջ:

Չատիկը շարժվեց դեպի գուռը և տեսալ թե ինչ-
 պես Հայրենը նայեց իրեն ու հետո գլուխը խոնարհեց
 ամոթխածարար:

«Կուսնկայի պես է», — մտածեց Չատիկը և զգաց:

որ սիրտը ետում է կրծքի տակ: Դանդաղ քայլերով մոտեցավ աղբյուրին ու երբ անցնում էր նրա մոտով, տեսավ, որ Հայրենը դաղտապողի նորից հայացք նետեց իրեն: Բայց Չատիկն անցավ աղբյուրի մոտով՝ Հայրենի հայացքի կրակը սրտի մեջ: Նա շփոթված էր ու երջանիկ: Երանության դպացումը երբեք այսպես հանկուրձակի ու լիովին չէր վայելել: Անհարթ ու փոշուր փողոցով քայլում էր գինովի պես: Երեխաները խաղում էին փողոցներում ու աղմկում, փոշին բարձրանում էր նրանց ոտների տակից և նրանց ծիծաղն ու ազազակը լցնում էր շրջապատը:

Ետք երեկո էր: Իռների առաջ նստոտած դյուզայիները խոսում էին հանդարտաձայն՝ իրենց օրվա հոգուերից ու աշխատանքից, դաշտերի ու այգիների պտղաբերությունից, սպասվող բերքի հեռանկարից: Նրանց ձայնը մեղմ էր, հեզ էին ու բարի, ինչպես խաղաղություն երազող իրենց հոգիները:

Բահն ուսին, Չատիկն անցնում էր նրանց մոտով ու բարևում:

— Նոր տունկդ ապ տարի խաղող կուտա՞, Հատիկ,— հարցնում էին ոմանք:

— Բանի մը բեռ կըլլա:

— Քեսթանեիդ՝ ծառը աշլամա՞ դրի՞ր:

— Չէ՛, ասված կամենա նը՝ պահարին՝:

Բայց Չատիկը մտածում էր Հայրենի մասին: Նրա մեղմ ու շողուն հայացքը գարմանալի կախարդող հրապույր ունեք, դերող ու այրող զորություն:

Չատիկը կանգ առավ ու ետ դարձավ: Կուժն ուսին, Հայրենն իջնում էր գառիվայրով: Նրա բարձր հասակը գծազրվում էր ստվերոտ Փոնի վրա: Նա անցնում էր հանդարտաքայլ, ստվերի պես սահելով:

Հայրենի սիլուետը ծածկվեց տների ետևում և Չատիկի սրտում նրա քաղցրության դգվանքը մնաց:

1 Ետգոնակներ

2 Գատխաս:

3 Քարնան:

Լույսը նոր էր բացվել: Չատիկը գուրս եկա՞ք սը-
նից և դնաց այսի: Բահն ուսին, հանդարտ բարձրու-
նում էր բլուրի նեղ ու քարոտ ճամփով: Լույսը սզ-
ղել էր դաշտավայրը, որ տարածվում էր գյուղից
ներքև, մինչև լճակի կապույտ ջրերը: Դաշտավայրը
ծածկված էր ձիթենու պարանդներով: Ձիթենու հա-
մատարած գորշության մեջ թթաստանների ու խաղողի
այդինների կանաչը ժպտում էր ինչպես կախարդական
տեսիլ: Բլուրի ճամփին ոչ ոք չկար: Միայն մոտիկ
քարածայրի ստորոտում տարածվող հարթության
վրա գյուղի հովիվն էր քշում հոտը ու լավում էր սչ-
խարների մայունը: Թռչունները զվարթ ճովողում էին
թփերի միջից կամ սլանում արագ թռչող նետի պես ու
թաքնվում ծառերի սաղարթների մեջ: Առավոտյան
քամին փչում էր թեթև, զգվում թփերն ու քարերը և
օրորում ծառերի բարձր կատարները հանդարտորեն:
Հեռվում, դաշտավայրի խորքում, լճակն էր պսպղում
ու նրա եզերքին տարածվող ազարակը մթին էր տա-
լիս ձիթաստանների գորշ ֆոնի վրա:

Չատիկը ճանաչում էր այդ ազարակը: Իսկ ազարակի
ազարակն էր, ուր աշխատել էր նա յանաչմայության
վերջին հինգ տարին:

Լճակում տարածվող այդ ազարակում Չատիկն
ինչե՞ր չէր տեսել... Պուրակի ծառերի տակ, վաղ
դռների ետևում, քեֆի, ուրախության անունի տակ
պարակվող ի՛նչ անխոստովանելի բաներ, որոնք հիշե-
լիս նրա մարմինը սարսռում էր:

Ինքը յանաչմա էր, ո՞ւմ կարող էր ասել տեսած-
ների մասին: Հարուստների գաղտնիքը գուրս տալիս
վտանգավոր էր, յանաչմայի առաջին «պարտքն» էր
գաղտնապահ լինել, այլապես անից-տեղից կվճռվեին,
իրավունքն էլ չէին տա, այն ժամանակ «որո՛ւ կուզես՝
գնա բողոքե, քեզի լսող չրվար»: Իրա ինչի՞ն էր
պետք, ի՛նչ ուղեին, թող անեին:

Միայն մեկը կար, որին Չատիկը հայտնում էր իր տեսածներն ու լսածները.— դա Մարկոսն էր: Նա էլ իր հերթին նրան էր հայտնում իր աղայի տան դադունիքները:

— Անոնք հարուստ են, ասում էր Մարկոսը, — հարուստի համար մեղք չիկա:

Այն ժամանակ, երբ դեռ չէր անբախտացել, այդ բաների խմաստը լավ չէր հասկանում, խիստ հիմա ուրիշ էր: Հիմա որոշակի տեսնում էր, որ խսկապես աշխարհի կարգերն ու օրենքները հարուստների համար էին, տերտերն էլ նրանց համար էր, պատրիարքարանն էլ, եկեղեցին էլ: Եթե ինքր հարուստի տղա լիներ, գործը ուրիշ կլիներ: Չկա՞ր օրինակը... «Պուրտա, Ստամբոլ, Իզմիր, ինչե՞ր չէին ըներ փարայի ուժով, — ասում էր Մարկոսի մայրը, Սրբուկ մարը, որ Չահլուժյան ժամանակ երկար տարիներ Ստամբոլ խզմեթ-քյարուժյուն՝ էր արել և կյանքը լավ էր ճանաչում:

— Է՛հ, — ասում էր Սրբուկ մարը, — փարան աստված չէ՛, ամա՞ աստծմե ալ վար չի մնար:

Մտածկոտ ու վշտահար, բահն ուսին, Չատիկը բարձրանում էր բլուրի նեղ ու քարոտ ճամփով և դառնադին այս մտածումներն ակոտում էին նրա ուղեղը:

Հանկարծ Չատիկը հեռվից նշմարեց մի կնոջ սիրտեալ: Կինը նստել էր մենակ՝ այդու եզերքին, ընկուզենու բնի մոտ: Ճանաչեց: Ելմասն էր, — Հայրենիքույրը: Հիշեց գերեզմանատան աղբյուրի ձորում Հայրենին հանդիպելն ու նրա գաղտագողի հայացքը: Չատիկի սիրտը նորից լցվեց տարփառին սարսուռով: Ու մտածեց. — Եթե էլմասի տեղը Հայրենը լիներ կանգնած, այս անգամ լուռ-ժյամբ չէր անցնի մոտովը, կխոսեր հեաը, Մկրտիչ աղբարի մասին կհարցներ, էլմասի մասին կհարցներ... Ի՞նչ է, հո մեղք չէ՞ր խոսելը: Չատիկն աշխուժ քայլերով մոտեցավ էլմասին:

1 Աղախնու թյունը

2 Սակայն:

— Բարի լուս, առաուն կանուխ աստեղ ի՞նչ կը
նես, էլմ'ս:

էլմասը ժպտաց.

— Չե՞ս գիտեր, ասիկա մեր էզլին է, եկեր եմ խոտ
քաղելու:

— Մինա՞կդ ես:

— Չէ', — ասաց էլմասը սիրալիբ ժպտով, — Մկրտիչ
աղբարին հետ եմ եկեր, անիկա էգուռն մեջն է,
խոտ կքողես: Հեռուեն քեզի տեսա, չի ճանչցա, «տես-
նեմ ս'մ է» ըսի, նստեցա հոս, ճամփուն բերանը, տե-
սա որ գուռն ես եկողը: Մեղա ասված, իշքա՛ն փոխվեր
ես, Չատիկ, շատոնց է չէի տեսեր... Սրբուկ մարը
կըսեր, չէի հավանար:

Չատիկը խոնարհեց գլուխը՝ հառաչելով, ցած բե-
րեց բահն ուսից ու ծխախոտ փաթաթեց:

— Հրաման եկո՛ւր, մեր էզլին տեսիր, — ասաց էլ-
մասը, — քիչ մի կնատիք, կխոսիք Մկրտիչ աղբարին
հետ:

Չատիկն ուրախությամբ ընդունեց հրավերն ու
մտավ այդի: Այդու ներքևում ուր ձորն էր բացվում,
Մկրտիչ աղբարը եռանդով շարժում էր գերանդին:

11.

Մկրտիչ աղբարը թողեց գերանդին ու երեքով
նստան այդու մեջ, թթենու բնի մոտ:

— Թուփուն մը փաթթե, — ասաց Մկրտիչ աղբա-
րը՝ ծխատուփը դնելով Չատիկի առաջ:

Ու մինչդեռ Չատիկը թուփուն էր փաթաթում,
Մկրտիչ աղբարը հարցրեց.

— Էզլիդ աս տարի խաղող կուտա՞, Չատիկ:

— Էզլես նոր տունի է, — ասաց Չատիկը, — աս
տարի քանի մը բեռ խաղող կուտա, եկող տարի
կկթվի:

— Չըսե՞ս, աս տարի է նեղությունդ:

— Նեղութուն չունիմ, — ասաց Չատիկը, — մի-
նակ մարդը ի՞նչ նեղութուն կունենա:

— Ինչո՞ւ ասանկ կըսես, — միջամտեց էլմասը, —
ասոր մինակ ես, աստուն ասն-տեղ կըլլաս:

Նրա ձայնը քաղցրութեամբ լի էր:

Չատիկը շնորհակալ հայացք ուղղեց էլմասին այն
հողածութեան համար, որ նա ցուցարերում էր իրեն:
Հետո վշտագին ձայնով ասաց.

— էլմաս, ցաւս մի նորեր, էքսիզը ե՞րբ է խնդա-
ցեր աս աշխրջիս մեջ, որ ես խնդամ:

Մկրտիչ աղբարն ու էլմասը կարեկցարար նայե-
ցին նրան:

— Մտքը խոք կրերե, — ասաց էլմասը, — քեզի
բան մը պի հարցնիմ, Չատիկ:

— Հարցո՞ւր:

էլմասը գլխաշորն արձակեց և կախ տվեց գլխի
էրկու կողմերէց, թույլ աւելով, որ երեսն սև ու ա-
ստա մազերը:

— Մտածողեն, կըսեն թուղթ է եկեր կնկանդ հա-
մար, իրա՞մ է:

— Կնկա անուն մի տար, — ասաց Չատիկը զգալի
ջղայնութեամբ, — ես կնիկ չունիմ:

էլմասը քնքշարար բռնեց Չատիկի բազուկը:

— Մի նեղանար Չատիկ, ասոր համար քե՞ֆդ մի
տվեր, բտե նայիմ թուղթը ի՞նչ կըսե:

— Ի՞նչ պի բտե, հրաման չի տար կարգվելու...
«պղտիկ է» կըսե, կընա ըլլալ որ աստուն խելքը դա
«կուզեմ բտե» կըսե: Հիչ, Գանրմ, փոր չկտացնող
խոտքեր, ես գիտեի, որ աստանկ պի ըլլար, ասոր հա-
մար գրել չէի ուզեր, ամա դուռ-դրացիք զոռ ըրին,
գրել տվին:

Չատիկը լռեց, գլուխը կախեց կուրծքն ի վար՝
այտերի վրա ջղածգորեն զնդերները խաղացնելով:

— Զավալը տղա, — ասաց Մկրտիչ աղբարը, —
իբով են բտեր, որ «էքսիզը աս աշխրջիս մեջ չի խըն-
դար»:

Բայց էլ մասը բողոքեց Մկրտիչ աղբարի խոսքերէն
դեմ.

— Ինչո՞ւ դավալը պի ըլլա, առտուն մեկալ օր
կկարգվի, անցածն ալ կմոռցվի, կլմննա:

— Ինչա՞նկ կարգվի, — առարկեց Մկրտիչ աղբարը, — սլատրիարքարանը թող չի տար կըսես:

— Պատրիարքարա՞ն, — բացականչեց էլ մասը, — պատրիարքարանին որ մնա, կո՞վք կապ կմնա, ի՞նչ պատրիարքարան, ի՞նչ բան: Հիմա ի՞նչ դարու մեջ կապրինք, գիտե՞ս... Թող մեկն առնես, նստի:

Հետո դառնալով Չատիկին, հարցրեց.

— Իրավ չե՞մ ըսեր, Չատիկ:

— Հոգիիս տունեն կխոսիս, — ասաց Չատիկը, — խարարո՞ւ ասանկ ալ տված եմ, ալ մարդ չեմ ճանչընար, ո՞չ ի՞նչ կուզես թող բսե...:

— Սրբուկ մարին հարցուր տե՛ իմացիր, Ստամբուլ ինչե՞ր կընեն, անոնք քրիստոնյա չե՞ն, ամա աստեղ գեղ է տես, կքաշվին:

— Սրբուկ մարն ինձի ալ պատմած է, — ասաց

Չատիկը:

Մկրտիչ աղբարը լուռ յտում էր: Նա զարմացած էր այն որոշման համար, որ Չատիկն էր տվել և այն քայլի համար, որ իր կինն էր առաջարկում առնել:

— «Ասանկ բան կընա՞ր բլլալ, — մտածում էր նա, — մեկը առնել-նստելը օրենքով չէ...»

Բայց իրոք որ աշխարհը փոխվել էր, «հիմա ի՞նչ դարու մեջ կապրինք...»: Ինչե՞ր չէին պատմում ստամբուլցիներէ և պուրսացիներէ, մասին... Էրիկ-կնիկ իրար թողնել, նորր առնել, նորից թողնել ու դարձյալ կարգվել... Ստամբուլ գնացող-եկողներն էին խոսում այլ բոլորի մասին: Չատիկի մտածածն ի՞նչ բան էր նրանց արածներէ կողքին:

Մկրտիչ աղբարը նայեց Չատիկին, որ նստել էր իր գիմաց, թիկունքը դեմ տված թիկնուն, այտերը

կարմիր, աչքերը հրացայտ, բազուկները պիրկ, լեռան
պես տղամարդ... .

— Հախ¹ ունի, — մտածեց նա:

Ու դառնալով կնոջը, ասաց.

— Էլ մաս, չիշեն² բեր, Զատիկին ըրախի³ մը հրամ-
ցընիմ:

Էլ մասը ոտքի ելավ, բերեց օղու շիշը, հաց ու պա-
նիր, և դրեց նրանց առաջ:

— Մկրտիչ աղբարն ըրախիսիզ չըլլար, — ասաց
էլ մասը ու լցրեց բաժակները:

— Էզի ունեցողն ըրախիսիզ կըլլա⁴, — պատասխա-
նեց Մկրտիչ աղբարը, — առտուն մեկալ օր Զատիկի
նոր տունկը, որ հասնի, ինքն ալ տուն-տեղ ըլլա, ան
ալ մեզի պես կըլլա... .

Հետո վերցնելով բաժակը, ասաց.

— Զատիկ օղո՛ւլ, ի՞նչ ըսիմ. որը որ բարին է,
թող ասված ան կատարե

— Ամեն... .

Թթենու սովերում նստած, հանգիստ, ցածրաձայն
նրանք սկսան զրուցել: Մկրտիչ աղբարն իր այգու,
տնտեսության և բախտի մասին էր խոսում: Մկրտիչ
աղբարի այգին հորենական ժառանգություն չէր: Այն
տարածությունը, որտեղ հիմա նստած են իրենք,
տասնհինգ տարի առաջ քարքարոտ մի բլուր էր՝ մո-
րենիններով և վայրի թփերով պատած, սողուններն
այնտեղ իրենց պորտերն էին քում և օձերը ձագ հա-
նում, «Ո՞վ կրնար մոտենալ աստեղին... Պզտիկ էիք,
չեմ գիտեր, միաքո՞ւ կիյնա՞մ, Յըլան թեփեսի⁴ կըսեին»
... Բայց Մկրտիչ աղբարը քաջությամբ և համառու-
թյամբ զործի կպավ, մաքրեց թփերն ու մացառները,
օձերն ու սողունները փախան, ձագերն այլովեցին և
այգի տնկվեց: Ահա արդեն շնորհքով այգի է, «Գեղին

1 Իրավացի է:

2 Շիշը:

3 Օղի:

4 Օձի բլուր:

մեջ մատով կցուցրեն են իմ էզին», շուրջը բոլորը պարսպի նման բռնել են ընկուզենիներն ու թթենիները: Նրա ամբողջ ունեցվածքն է այդ, մի այգի միայն, իր քրտինքով ու բազուկների ուժով հասցրած մի այգի, ուրիշ ոչինչ չունի, ոչ ձիթաստան, ոչ արա: Մեկ էլ մի կով ունի, որ անասնոտ-երեկո իրենց հետ այգի են բերում ու տանում: Այլելին ի՞նչ են անելու, այգիքանն էլ բավական է իրենց, «ասված միայն սողություն տա», զավակ չունին, բան չունին, իրենց զավակը Հայրենն է, էլմասի քուբը, որ մանկուց որբ, վերցրել պահում են: Հայրենն էլ, «պարծենալ չըլլա», բարի զավակ է, համեստ, աշխատասեր, կար-կարկատել, եփել-թավել, — ամեն բան իմացող: Մկրտիչ աղբարին պապա է կանչում, ինքն էլ զավակից շատ է սիրում նրան:

— Մտչ որ, զավակս որ բլլար, սաքան չէի սիրեր: Վաղը մյուս օր կովը կծնի, հորթ կունենան, «Տանը մեջ կթան որ եղավ, ատ տունը ալ բանե չի վախնար»: Այգու բերքն էլ, որ կարկուտ չեղավ, այս տարի լավ է լինելու, էլ ի՞նչ է ուզում... Մկրտիչ աղբարը հարստության ետևից ընկնող մարդ չէ, աչքը կուշտ է, հորից մնացած ոչինչ չունի, ինքն էլ Չատիկի նման յանաշմայությամբ առաջ եկած մարդ է:

— Տասը տարի ալ ես եմ յանաշմայությունը բեր, գիտե՞ս... էլմաս, բրախի լեցուր:

— Հաց կեր, Չատիկ, մի քաշվիր, — ասում էր էլմասը՝ բաժակները լցնելով:

Չատիկը չի քաշվում, Մկրտիչ աղբոր սեղանն իր սեղանին պես է, նո՞ր պիտի ճանաչի Մկրտիչ աղբարին, գյուղում նրա նման աշխատասեր ու պատվով քանի՞ մարդ կա... Չատիկը վաղուց կցանկար Մկրտիչ աղբարին հետ «նատիլ-եղնել», բայց առիթ չէր լինում: Ի՞նչ գարմանալի է մարդուս բախտը. «Ասովածությունն աստեղ մատ ունի, չէ նը՝ ո՞վ կըսեր, որ ասօր ձեր սեղանին վրա կըլլամ»: Չատիկը օդի չէր սիրում խմել, տարին մի անգամ հազիվ «բերանն էր դնում»,

բայց հիմա, որ վշտոտ է, մեկ-մեկ խմում է: Թող չմեղադրեն իրեն, «ցավը մարդուս շատ բան ընել կուտաս»: Ողորմած հողի տատը, որ տեսնում էր խմելը, ձայն չէր հանում, չէր նեղանում: Խեղճ պառափն անշուշտ հասկանում էր, որ Զատիկը ցավից է խմում:

— Հիշ հողդ մըներ, Զատի՛կ, — ասաց էլմասը կարեկցութեամբ, — «կյուն դողմադան նեւեր դողար՞»: Ըսված է՞ ամեն շարիքի տակ բարիք մը կա:

Մկրտիչ աղբարը հաստատեց էլմասի խոսքերը:

— Ի՛նչ գիտես, Զատի՛կ, պեւքե՞ աս է բարին: Չի գիտցվիր, «կյուն դողմադան նեւեր դողար», — էլմասն իրավ կըսէ:

Այն օրից երբ էլմասը լսել է պատրիարքարանի պատասխանի մատին, մտահողված է Զատիկի բախտով: Էլմասը գիտէ, որ Զատիկը հանցանք չունի, Զատիկի պես աղնիվ ու պատմամբ տղան ինչո՞ւ անկնիկ մնա, մեղք չէ՞: Զատիկն անմեղ է ասածու դառան պես: Սրտի տեր մարդը չի կարող չախտոսալ Զատիկի ճակատագրի համար: «Պուզուկնցմե աղջի՞կ կառնըվեր»: Անթառամ մարն այլ խնդրում սխալվեց, բայց անցածն անցած է...:

Էլմասը գյուղի տղաներին լավ է ճանաչում, բոլորին գիտէ իր հինգ մատի պես, լավին էլ է ճանաչում, վատին էլ, նրան էլմաս կասեն, «ասեղին ծակեն» աշխարհն է տեսնում: Նա կմոռանա՞ Զատիկի բարությունը: Երկու ամիս առաջ է եղել այդ, բայց միայն երկու շաբաթ առաջ է նա խմացել Սրբուկ մարի հարեաններից: Զատիկի արածը միայն հարազատ եղբայրը կաներ, ահա թե ինչո՞ւ էլմասը սիրում էր Զատիկին իր եղբոր պես:

Զատիկը հասկանում է ակնարկը և համեստորեն խոնարհում գլուխը:

Սրբուկ մարի պախչայի քեֆին համա՞ր կըսես, — հարցրեց Մկրտիչ աղբարը:

¹ Լույսը չձագած ինչեր կձնին

² Գուցե.

— Հա՛... պղտի՞կ բան է, — ասաց էլմասը ողե-
փորված, — գինով շուներուն ձանը կրչել տալը պղտի՛կ
բան է... քեփաղենները¹... Ես, ան օրեն, — դարձավ
էլմասը Չատիկին, — քեզի տեսնել կուզեի, չէր ըլլար,
աղեկ որ ասօր տեսա: Հաց կեր Չատիկ, մի քաչվիր...
Հետո դառնալով ամուսնուն, ասաց.

— Ըրախին դուն լեցուր, Մկրտի՛չ, ես կմոռնամ:

— Հերի՛ք է, շատ խմեցինք, — ասաց Չատիկը:

— Չէ՛, հերիք չէ, խմե, անուշ ըլլա, մորդ կաթի՛ն
պիտ հալալ ըլլա, քեզի չի խմցնիմ, որո՞ւ պի խմցնիմ,
դուն իմ աղբարս ես, ես քու ըրածդ չեմ մոռնար:

Չատիկը հմայվածի պեմ նայում էր էլմասին և
թվում էր իրեն, թե երազումն է: Ոչ մի կին չէր ցու-
ցարեերել իրեն այնքան քնքշություն, որքան այդ կինը:

Մկրտիչ աղբարը նորից ուղեց լցնել բաժակները,
բայց Չատիկը թույլ չտվեց:

— Այ կօգտե, — ասաց նա, — շատ խմեցինք, արևն
ալ բարձրացավ, յավաչ յավաչ երթամ...
Բայց էլմասը կանգնեցրեց նրան.

— Խատեհ² մըն ալ խմե, Չատիկ, իմ խաթեր հա-
մար խատեհ մըն ալ խմե, ետքը դնա:

Ու դարձավ դեպի ամուսինը.

— Լեցուր:

Երբ Չատիկը բաժակը տանում էր չրթներին, էլ-
մասն ասաց.

— Կեցի՛ր, բան մը պի ըսիմ:

Ու շարունակեց.

— Ես կուզիմ, որ Չատի՛կ, քու սրտիդ մուրադը՝
կատարվի, մեղք ես, ինչո՞ւ անկնիկ մնաս, ատիկա
ասված ալ չընդունիր, մարդն ալ, ես ալ կաշխատիմ
քեզի համար, դուն չե՞ս գիտեր, ես վարձք ընելու հա-

1 Խայտառակ:

2 Բաժակ:

3 Յանկություն:

ժար հոգի կուտամ... Քեզի անանկ կնիկ մը գտնիմ,
որ գեղը զարմանա, սանկ փողոցեն անցած ատենը մա-
տով ցուցունեն, «Չատիկին կնիկը կանցնի» ըսեն...
Դե՛ խմե հիմա, անոր աշխրնա՛ խմե:

Չատիկի աչքերը շմորեցին, թվաց իրեն, թե ե-
քազումն է, հոգու մեջ պայծառափայլ լույս շողաց և
սիրտը երանությամբ լցվեց:

Չատիկը ոտքի կանգնեց բաժակը ձեռին, երախ-
տագիտությամբ նայեց էլմասին ու ասաց.

— Ատանկ բան մը որ ընես, մինչև գերեզման էյ-
լիկդ՝ չեմ մոռնար, ամա...

— Ինչո՞ւ ամա կըսես:

— Շախա՞ չե՞ս ըներ, — հարցրեց Չատիկը:

էլմասը լուրջ գեմք ընդունեց և ասաց.

— Ես անանկ գեվգեկ՝ կնիկներեն չեմ, իմ խոսքս
խոսք է:

Չատիկը շնորհակալությամբ հրաժեշտ տվեց
Մկրտիչ աղբարին:

— Մաքիդ մեջ ո՞վ կա, — հարցրեց Չատիկը էլմա-
սին, որ ընկերանում էր իրեն մինչև այգու սահմանը:

— Չեմ ըսեր, ետքը կիմանաս:

— Ե՞րբ կիմանամ, չեմ ուզեր որ ուշանա...

էլմասը լռեց ու երբ հասան այգու եզերքին ընկու-
ղենու մոտ, ասաց նրան.

— Առտուն կանուխ աստեղեն անցած ատենդ կը-
տեսնես...:

12.

Բահն ուսին, Չատիկը գնում էր բլուրի նեղ ու քա-
րոտ ճամփով: Արևը այրում էր նրա գեմքն ու ճակատը:

1 Սիրույն համար:

2 Բարիքդ:

3 Հանար:

4 Անուրջ:

Էլմասի բառերը դեռ թրթուում էին նրա ականջներում և սիրտը պարուբում բերկրանքով: Քայլում էր նա ժիր ու թեթե, ցատկոտելով քարերի վրայից, երազելով անդադար Հայրենին, որին ականբեարար ականբղում էր էլմասը, երբ ասում էր թե «փողոցեն անցած ատենը մասով ցուցունեն»: Այդպիսի ուրախություն երբեք չէր զգացել: Ի՛նչ քաղցր և հուսադրող էին էլմասի բառերը և ի՛նչ բարի ու մտերիմ՝ նրա վերաբերմունքը: Ձգում էր, որ նոր արչայույս է բացվում իր խափար կյանքի հորիզոնում: Քայլում էր և թվում էր իրեն, թե չըջատատի բոյոր իրերը զարմանալի սրտազրբով փայլ ունեն և թփերն ու ծառերը, հողի կոշտերն ու ժայտերն անգամ, ժպտում են իրեն: Նա զգում էր, որ մի ճնշող, մղձախանջալին ծանրություն հանկարծ ընկավ իր ուսերից և հոնին յգվեց կենդանարար շնչով:

Սրբելով ճակատի քրտինքը, Չատիկը քայլում էր ու մտածում Մկրտիչ աղբարի այգու մասին, ընկուզենու բնի մոտ, քարին վրա նստած էլմասի մասին, այն թթեհու մասին, որի ստոկերում նստած խմեցին, և այն քաղցր, սրտապարար ու խենթացնող բառերի մասին, որ էլմասն արատասանեց, երբ ինքը վերջին բաժակն էր ըմպում... «Իե՛ խմե հիմա, անոր աշխրհա խմե...»:

Հասնելով այգի, Չատիկը հացի տուրբակը կախեց ծառից ու սկսեց աշխատել: Նա փորում էր եռանդով ու բահը թեթե էր նրա ձեռների մեջ: Կյանքն արդեն իմաստ ուներ և այգու մշակումը նպատակ:

— Անկնիկ ապրի՞ր կրկա...

Չատիկը բահը եռանդազին խրում է չոր հողի մեջ, չըջում կոշտերը, սրբում ճակատի քրտինքը՝ բարակ բեխերի եզերքին խնդության ժպիտը պահած, աչքերի դեմ մի լուսեղեն պատկեր, որ հեռախց ժպտում է իրեն ծիրանի մշուշի միջից, ականջներին մեջ էլմասի քաղցր բառերի արձագանքը.— խմե հիմա, անոր աշխնա խմե:

Չատիկը համայլածի պես էր, աչքերը լմորել էին, աշխարհն հանկարծ լուսավորվել էր պայծառափայլ

լույսով և ինքը խմել էր մինչև վերջին կաթիլը՝ «անոր աշխնա»:

Բայց ո՞վ էր նա... Ո՞վ կարող էր լինել. անշուշտ Հայրենին էր, որի հայացքի կրակն զգաց աղբյուրի մոտ:

— Ասոր շյուխն՝ չիկա, — մտածում էր Չատիկը: Նա մտածում է այդ բոլորի մասին ու փորում: Նա փորում էր արագ՝ անցնելով մի թմբից մյուսը, չղկալով հողմություն, սիրտը խնդությամբ լի:

Ապրելն ի՞նչ է, միայն թե կին՝ ունենա... Այդին անա սկսել է արդեն բերք տալ, սնդուկի տակն էլ մի քանի դուրուշ ունի սև օրերի համար պահած, կով կառնի, Մկրտիչ աղբարը ճիշտ է ասում, «Տան մեջ, որ կթան եղավ, ան տունը ալ բանն չի վախնար», ապրելն ի՞նչ է, ինքն է, մեկ էլ կինը, «իրար հոսվրտալով ալ կապրին», միայն թե «սիրով ըլլան»: Չատիկը կանգ առավ, հենվեց բահին, սրբեց ճակատի քրտինքը, կոշտ մատներով ոլորեց բարակ ու երկար բեխերը և նորից բահը խրեց հողի մեջ: Հեռվում, դաշտավայրի խորքում, լճակի ջրերը պսպղում էին հուլիսի արևի պայծառ ճառագայթների տակ ու արևի ճերմակ լույսը հեղեղի պես է ամեն կողմ, դաշտավայրի ու բլուրների վրա: Բլուրներից իջնող առուն գլգղում է Չատիկի այգու կողքով, հետո խփում է ձորը և հոսում դեպի դաշտավայր, դեպի ձիթաստանի ու այգիների զմբուխ գոտին:

Հուլիսի բարկ արևը ողողել է ամեն կողմ, լույսը թրթռում է կապույտ տարածության մեջ, ասես կաթավում է հողերի ու թփերի վրա և լույսը բարի է, քաղցր ու արդար, ինչպես իր հոգու տենչանքը: Եվ արևի ջերմագույ շոյանքի տակ ավիշը հողի արգանդից բարձրանում է վեր, մինչև ծառերի կատարները, կյանք ու խնդություն է տալիս իր նոր տունկին, այդ

չքնաղ պարտեզին, ուր տերևների արանքից անա
ժպտում են խաղողի ճուլթերը:

Առաջին բերքն է այդ, մի ամիս հետո ճուլթերը
կփափկեն, կքաղցրանան, դեղնահատիկ ողկույզներ
կդառնան ու ամեն երեկո Զատիկը կողովը կլցնի խա-
ղողով, վրան կծածկի որթատունկի կանաչ տերևնե-
րով, կչալակի և հողնած, համրաքայլ ու երջանիկ կեջ-
նի բլուրի նեղ ու քարոտ ճամփով: Դռան շեմի վրա
կանգնած կլինի Հայրենը, — սիրահարոտ կժպտա իրեն՝
լուսե ժպտով, ու ցած կբերի կողովն իր ուսից:

Զատիկի հոգին թռավ դեպի Հայրենի լուսեղեն
պատկերը, նրա մեծ ու պայծառ աչքերի, քաղցրու-
թյունն զգաց ու սիրտը փուլ եկավ, երակները մեջ
հորդեց ջերմության ու տարփանքի խենթացնող սար-
սուռը:

Զատիկը բահը խրեց հողի մեջ, բազուկները խա-
չաձևեց նրա կոթի վրա ու ճակատը հենելով ձեռնե-
րին, սասց.

— Հայրենն է, Հայրենն է, աստղ շյուտե չի կա...

13.

Առավոտյան երբ Զատիկը զարթնեց, սենյակը ո-
ղողված էր արևի զվարթ լույսով: Գիշերը երկար ժա-
մանակ անքուն էր մնացել ու միայն լուսադեմին էր
քնել: Երկա՛ր մտածել էր այն անակնկալ երջանկու-
թյան մասին, որ պարզեւել էր իրեն էլմասի հանդի-
պումը:

Զարթնելիս առաջին միտքը, որ ծագեց նրա գըլ-
խում, դա էլմասի հանդիպումն էր: Այդ հանդիպումից
առաջացած երջանկության զգացումը առավոտվա
լույսի հետ քնքշորեն թափանցեց նրա հոգու մեջ:

Ուշացել էր... Հիմա Մկրտիչ աղբարի այգու մո-
տով անցնելիս արդյոք կհանդիպե՞ր էլմասին ու Հայ-
րենին:

Եթե առավոտյան շուտ զարթներ ու այգի գնար

սովորական ժամին, նրանց կտեսներ՝ ըստ էլմասքի
խոստման... Ափսո՛ս, ի՞նչ վատ եղավ...

Նորից բա՛նն ուսին, Չատիկը ճամփա ելավ դեպի
իր նոր տունը: Ածիլվել էր և բեխերը խնամքով ոլո-
րել: Արևն արդեն երեք մարդահասակ բարձրացել էր
հորիզոնի վրա, լեռվորները վերադառնում էին: Այդ
ժամին Չատիկը երեք այգի չէր գնացել:

Սրտատրոփ ու անձկագին քայլում էր արագ, հե-
լհե, ցատկոտելով քարերի վրայով, աչքերը հառած
հեռո՛ւն, դեպի Մկրտիչ աղբարի այգին, դեպի ընկու-
զենին, որի սաղարթների կանաչ բոլորակը երևում էր
հեռվից:

— Ինչո՞ւ ես ուշացել, — հարցնում էին լեռվորները:

— Քիչ մը գործ ունեի, — խաբում էր Չատիկը:

Այդ քեքուշ սրտի մեջ պահվածն իր սրտի նվիրա-
կան գաղտնիքն էր: Ու գնում էր արագաքայլ Հայրե-
նին տեսնելու տենչով վառված: Ահա ընկուզենին: Նրա
սաղարթների կանաչ բոլորակը երևում է լրիվ, ահա և
Մկրտիչ աղբարի ամբողջ այգին, բայց էլմասք
կա...

Չատիկը մոտեցավ այգուն ու կանգնեց ընկուզենու
զիմաց: Էլ չէր կարող շարունակել ճամփան, հոգու
մեջ սարսափելի դատարկութուն էր ստեղծվել: Այ-
գուց նա լսում էր Մկրտիչ աղբարի գերանդու ձայնը,
բայց կնոջ ձայն չէր առնում:

Չատիկն ուղեց կանչել Մկրտիչ աղբարին ու
հարցնել, թե նրանք ինչո՞ւ չէին եկել: Բայց անհարմար
կլինե՞ր այդ, Մկրտիչ աղբարը կկուսներ հարցնելու
նպատակը և ջահելի տեղ կգներ իրեն:

Բայց Չատիկը չէր կարող հեռանալ այգուց:
Հմայվածի պես կանգնել ու նայում էր կանաչ ծա-
ռերին... Ի՞նչ կասեին անցնող-դարձողները, ի՞նչ
կար, ինչո՞ւ էր կանգնել:

Չատիկը ետ դարձավ եկած ճամփով և գետնին
ծռած, կորցրածը փնտրողի ձևով սկսեց դանդաղ քայ-
լել...: Նա նայում էր քարերի ու թփերի արանքը,

երբեմն ոտով բաց էր անում ճյուղերը, նայում նրանց մեջ, իբր թե բան էր փնտրում և հետո, զգուշ ետ դառնալով, աչքի տակով նայում էր դեպի ընկուղենին, էլ մասի սիլուետը տեսնելու հույսով:

Եվ հուսահատ, նորից քայլում էր առաջ, միշտ հակված դեպի գետին, աչքերը թփերին, կորցրածը որոնելու պես:

— Ի՞նչ ես կորսնցուցեր, Չատիկ, — հարցնում էին լեռվորները, որոնք մտաովն էին անցնում:

Չատիկը մեջքը շտկում էր ու պատասխանում.

— Սղոցս մեջքես ինկեր է, ինչ որ կրնիմ չեմ գտներ:

Ու երբ լեռվորներն անցնում էին, Չատիկը նորից ետ էր դառնում ու նայում ընկուղենուն, որի բնի մոտ համառորեն չէր երևում էլ մասը: Ընկուղենու ճյուղերն օրորվում էին ու Մկրտիչ աղբարի կանաչ աչքին ավելի ու ավելի հմայիչ էր դառնում, — կախարդական պարտեզ:

Հանկարծ Չատիկը կանգ առավ և հետո տրապաքայլ գնաց դեպի ընկուղենին:

Որոշել էր մանել աչքի:

Սուանց տատանման ներս մտավ ու ձայնեց:

— Չատիկ, դո՞ւն ես, — ասաց Մկրտիչ աղբարը՝ հենվելով գերանդուն:

— Ես եմ, Մկրտիչ աղբար:

— Բարի եկար, հազար բարով, ասդին եկուր, Չատիկ, ինչո՞ւ օտարի պես կկենաս:

— Սղոցս մեջքես ինկեր է, ասաց Չատիկը, — փնտրեցի, չգտա, սղոց չունի՞ս տուր ասօր գործս տեսնիմ, իրկունը կուտամ:

— Չատիկ, օղուլ, հեռուեն մի խոսիր, ասդին եկուր:

Չատիկը մոտեցավ Մկրտիչ աղբարին, որ հենվել էր գերանդուն:

— Սղոց չեմ բերեր, — ասաց Մկրտիչ աղբարը, — պետք չէր, ատոր համար չեմ բերեր, ի՞նչպես ինկեր է, որ չես գիտցեր:



— Հիչ չեմ դիտցեր... Ամեն դի փնտրեցի չի գտա,
պեղքի¹ դուն կունենաս ըսի...

— Սղոցի գո² ըծ ունեիր:

Չատիկը շփոթվեց, բայց հետո ասաց.

— Նոր տունկիս մեջ հինեն մնացած ընկուզի ծառ
մը կա, վրան չորցած տալեր³ կան, պի կրցեի:

Մկրտիչ աղբարը թողեց գերանդին և հրավիրեց
նստել:

Չատիկը չնստեց: Նա շփոթված էր և հուսահատ:
Արդեն տեսնում էր, որ ոչ Հայրենը կար, ոչ էլ մասը:

— Ձերիններն ասօր չե⁴ն եկեր, — հարցրեց հուզ-
մունքից խեղդված ձայնով:

— Եկեր են, — ասաց Մկրտիչ աղբարը, — փարչի⁵
ջուրը թափեր էր, Հայրենի հետ գացին ջուր բերելու:

— Ուրկե⁶...

— Քու էգու մոտի պաղ-աղբուրեն:

— Ի⁷նչ կըսես, — գոչեց Չատիկը ցնծությամբ, —
հիմա անտե⁸դ են:

— Հա՛, անտեդ են, նստե, հիմա կուգան:

— Անանկ է նը, ինձի միսաֆիր⁹ են գացեր, չը-
սե¹⁰ս...

Ու նորից ուսն առավ բահը, որ մի բոպե ցած էր
բերել:

— Չատիկ, — ասաց Մկրտիչ աղբարը, — նստե՛,
թութուն մը փաթթե...

Բայց Չատիկն այլևս չէր լսում: Նա մի շնչով
դուրս նետվեց այգուց և սկսեց բարձրանալ բլուրը՝
հեիհե, գրեթե վազելով:

14.

Չատիկի այգու գեմ ու գեմ բլրի կատարին բու-
սած դարավոր շագանակենու ստվերում, պաղ-աղբու-

1 Թերևս:

2 ճյուղ:

3 կուժ:

4 շյուր:

քի գուռի մոտ նստել էին էլմասն ու Հայրենը: Կուժը,
որ լցրել էին ջրով, դրել էին գուռի մեջ և նայում էին
Ձատիկի այգուն: Մոտիկ քարաժայռի ստորոտում
տարածվող տափարակի վրա արածում էին գյուղի ոչ-
խարները և հովվի բարակ ու երկար սիլուետը երևում
էր ծովակի պսպղուն ջրերի դեմ:

Ձատիկը հեիհեւ բարձրացավ գառիվայրով, հեռ-
վից տեսավ էլմասին ու Հայրենին, խելագարի պես
բահն ուսից այգի նետեց և արագաքայլ գնաց դեպի
աղբյուրը: Նա ցատկեց քարերի վրայով, կոխտեց
թփերը, սասնեց փոսերից և քրտնաթոր հասավ աղ-
բյուրին:

— Ես գիտեի, որ հոս եք, — ասաց, — ասոր համար
վազել են եկա:

— Ո՞վ ըստվ, որ հոս ենք:

— Միքտիչ աղբարն ըստվ:

— Մեր էգի՞ն էիք գացեր:

— Անկե կուգամ:

Եվ կանգնած, երջանկությամբ ու շվարումով լի
հայացքով, նայում էր փոխնեփոխ երկու քույրերին,
որոնք նստած էին աղբյուրի գուռի մոտ, մեկը՝ փար-
թամ ու սիրուն, մյուսը՝ գեղամի, ամաչկոտ և արևի
պես պայծառ ու հմայիչ:

Ջրով լցված գուռի մեջ, որի մակերեսն ալեկոծ-
վում էր անդադար հոսող բարակ ջրից, նրանց պատ-
կերները կտրատվում էին և՛ փայլվում:

Ողջ գիշերը երազել էր... էլմասի բռները տար-
փազին սարսուռով լցրել էին սիրտը և Հայրենի տեն-
չալի պատկերը քաղցրությամբ ողողել էր հոգին: Իսկ
հիմա նրանք նստել էին իր դիմաց:

Լույսը, որ հեղեղի պես թափվում էր իր չորս
կողմը, քարերի ու մացառների վրա, որ շողում էր
Հայրենի աչքերի մեջ ու հակատի պայծառության վրա,
լցնում էր իր էութունը խնդությամբ:

— Ասիկա ոչ որ երազ է ոչ որ էշկերե՞, — մտա-
ծում էր նա:

Հայրենը դուռին էր նայում՝ մատները մեջ բռնած
մի տերև: Նա շառագունած էր կակաչի նման և քուն-
քերի վրա քրտինքի կաթիլներ էին փայլում:

— Ինչո՞ւ նստեր եք, — ասաց Չատիկը, — ելեք մեր
էջին էթանք:

— Մենք քեզի միտաֆիր¹ էինք եկեր, դուն որտե՞ղ
էիր, — ասաց էլմասը՝ ժպտալով:

— Ես առանկ ալ դիտեի, — ասաց Չատիկը, — ա-
ռանկ է նը՝ ինչո՞ւ նստեր եք, ելեք էթանք... Հայ-
րեն, ելիր, էթանք խաղող ուտինք...

— Էզիդ խաղող կա՞, — հարցրեց Հայրենը:

Չատիկն առաջին անգամն էր լսում Հայրենի ձայ-
նը: Այնքան քաղցր էր այն, որքան սովակի կարկաչը
ծարավից պապակած մարդուն:

— Քեզի համար ամեն բան կա, — պատասխանեց
Չատիկը, — քեզի համար թռչունի կաթ ալ կճարվի ան-
տեղ:

Հայրենն ու էլմասը ժպտային:

— Քիչ մը նստե, — ասաց էլմասը քնքշությամբ, —
սանկ ծառին տուր մեջքդ, հովուն բերանը մի նստիր,
բրտնած ես, կմսիս:

— Մի վախնար, ինձի բան չըլլար:

Ու նստեց էլմասի կողքին:

— Ասօր ինչո՞ւ ուշացար, — հարցրեց էլմասը:

— Գիշերը քունս չի տարսի, — ասաց Չատիկը,
լուսեմին քունս տարեր է, մեռելի պես ինկեր մնացեր
եմ, ատոր համար ուշացա:

Հայրենը նայում էր Չատիկին: Չատիկն զգում էր
նրա հայացքի շոյանքն իր դեմքի վրա և սիրտը լցվում
էր երջանկության զգացումով:

— Ինչո՞ւ համար չքնացար, — հարցրեց էլմասը:

— Աչքերս փակ, կմտմտայի:

¹ Ազկարտ

² Հյուր:

— Ի՞նչ բանի վրա:

— Քու երեկվա ըսածիդ վրա կ'ամտայի:

Էլ մասը ժպտաց ու հարցրեց.

— Հիմա հասկցա՞ր, ես որո՞ւ համար կ'ըսեի:

— Ստիկա ես աղեկ հասկցեր էի, — ասաց Չատի:

Կը՝ հայացքը խոնարհելով:

Քայց Հայրենը, որ նայում էր հեռուն, նկատեց, որ քարաժայռի ստորոտում կանգնած հովիվն իրենց է նայում, ձեռքովը հովանի արած աչքերին:

— Չորանը մեզի կնայի, — ասաց նա:

— Թող նայի, չորանը մեզի ի՞նչ կ'ընա ընել, — պատասխանեց էլ մասը:

Հայրենը խոնարհեց աչքերը և ինքնիրեն խոսողի պես, ասաց.

— Առտուն գեղին մեջ չայլ՝ կ'ընե:

— Ստիկա հոգ ընելիք բան չէ՞, — պատասխանեց էլ մասը վճռականորեն:

Ու դարձավ Չատիկին.

— Խարարդ² տվի՞ր, — ասաց ցածրաձայն:

— Տվի... Ելտակը կուզես նր երեկվան տվեր էի:

— Ետ աղեկ, առանկ է նը՝ էթանք, — ասաց էլ

մասը ոտքի կանգնելով:

Ու երեքով, զառիվայրի կածանով սկսեցին քայլել: Կուժն ուսին, Հայրենը գնում էր առաջից, կապտազույն շոր հագած, ապակյա ծաղիկենկար ապարան-ջանը բազուկի վրա, առողջ ու հաղթակազմ: Չատիկը քայլում էր ետևից, էլ մասի հետ, սիրատարի հայացքը Հայրենին ուղղած, սիրտը բերկրանքով լի:

Չատիկի այդու մոտ բաժանվելիս, էլ մասն ասաց.

— Առտուն չէ, մեկալ օր, առավոտ կանուխ մեր էգին եկուր, որ նշանածիդ կենացը խմես:

Չատիկի աչքերը շողացին: Ու մինչդեռ Հայրենն ու էլ մասը գնում էին բլուրի նեղ ով քարոտ ճամփով,

1 Կտարածե,

2 Որոչում:

ինքն այգու եզերքին կանգնած, նայում էր նրանց՝
կարտառակին հայացքով, անվերջ կրկնելով իր մտքում
էլմասի վերջին բառերը.

— Առտուն չէ, մեկայ օր, առավոտ կանուխ մեր
էզին եկուր... :

15.

Կիրակի, երեկո, արևը մայր մտնելիս Չատիկը վե-
րադարձավ այգուց: Նա հիշում էր ամեն բան: Առա-
վոտյան հազել էր նոր շորերը, բեխերը սլորել, սըն-
դուկի մեջ պահած զարդոսկին ու մատանին գրպանն էր
դրել և դյուղից դուրս գալով, գնացել էր էլմասենց
այգին:

Ճանապարհին և այգիներում ոչ ոք չկար:

Իլուրի ճամփով բարձրանալիս, լսվում էր ժամի
զանգի հեռավոր զոզանջը:

Այգում իրեն էին սպասում:

Առաջինն իրեն դիմավորել էր էլմասը:

Այգի մտնելիս նա կանգնել էր Չատիկի առաջ և
ասել.

— Քեզի բան մը պի ըսեմ, Չատիկ:

էլմասը լուրջ ու հուզված գեմք ուներ:

— Խարբուղ խարա՞ր է Չատիկ:

Չատիկը զարմացած նայել էր էլմասին ու ասել.

— Խարբուղի համար ինչո՞ւ կհարցնես, մտքիդ մեջ
բան մը կա նչ՞ ըսե, մի պահեր:

Այն ժամանակ էլմասը խոսել էր Մարիամի մա-
սին, նրա հեռագայի «կուղիմ» ասելու հավանականու-
թյան մասին և Չատիկի՝ իր քրոջ հանդեպ բանելիք
դիրքի մասին:

— Աշխարհ է, օղուլ, ամեն բան կըլլա, մի նեղա-
նար հարցնելուս համար, առաջմեկ ամեն բան հա-
կընալն աղեկ է, որ ետքը սիրա կտարուք բաներ չըլլան:

Իսկ Չատիկը ետանդագին լնդհատել էր նրան,
ասելով.

— Սո՛ւս կեցիր, էլմաս, չոջուխի՛ պես մի խոսիր, իմ խոսքս խոսք է, անիկա մինչև գերեզման ուժ ունի, ես մոր կաթ եմ կերեր, դուն ինձի ս՞իլ գիտցար...

Չատիկի բառերն անկեղծ էին ու վճռական:

— Ես ատանկ ալ գիտեի, ասել էր էլմասը, — հիմա սիրտս հանգիստ է, ես քիչէն շատ կհասկնամ. էթանք, Մկրտիչ աղբարը քեզի կապան...:

Մկրտիչ աղբարը առանձին ուրախությամբ դիմավորել էր Չատիկին: Թթենու ստվերում սեղան էին բացել: Չատիկը հանել էր գրպանից զարդոսկին ու մատանին, և հանձնելով էլմասին, ասել էր.

— Ստոնք Հայրենի համար եմ բերեր, քիչը շատ սեպեցեք:

Էլմասը քրոջ մատն էր անցկացրել մատանին, ու զարդոսկին կախ տվել նրա վզից, հետո առաջարկելով վերցնել լցված բաժակները, ասել էր.

— Աչքե չս լուս... Չատիկ, օղուլ, աչքդ լուս, Հայրեն, օղուլ, քու աչքդ ալ լուս, իրարու խեր տեսնեք, ապրիք ու գորանաք, չար օրեր չի տեսնեք, մինչև գերեզման կանաչ մնաք, ալ ինչ ըսիմ...

— Ամեն բան ըսիր, ավելի չէր ըսվի, — ասել էր Մկրտիչ աղբարը և համբուրել էր Հայրենին ու Չատիկին:

Չատիկը նստել էր Հայրենի դիմաց, մեջքը դեմ տված թթենուն, երջանիկ ժպիտը դեմքին, աչքերը բոցկլաուն, հայացքն ուղղած Հայրենին, որ լսում էր երջանիկ ամոթխածությամբ:

Չատիկը հիշում է Հայրենի բոլոր շարժումները, նրա թաքուն ժպիտներն ու ցածր արտասանած բառերը, մատի վրա փայլող մատանին ու կուրծնքի վար շողացող զարդոսկին, որոնք վեհաշուք ու քնքուշ քաղցրություն էին տալիս նրան:

Քանի՞ անգամ խմեցին բոլորի կենացը, և օղին քաղցր էր անմահական նեկտարի պես:

Չատիկը կարող էր խմել մինչև իրիկուն: Բաժակը դատարկելիս աչքերը հառում էր Հայրենին և տեսնում նրա ամոթխած ժպիտը: Սիրան ուռչում էր բերկրանքով, հոգին լցվում երանությամբ:

Գյուղի մեջ երբեք այդպիսի բան չէր եղել—որ նշանածն իր նշանածի հետ մի ամբողջ օր անցկացնի, քեֆով, ուրախությամբ «ըսե՛ խոսի, ուտե՛ խմե՛»:

Իր բոլոր ընկերներն իրենց նշանածի երեսը չտեսած ամուսնացել էին: Ի՛նչ հիմար բան էր: «Առանց սիրելու կարգվի՞ր կըլլա»:

Վաղը մյուս օր Հայրենն իր կինն էր լինելու: Չատիկը դիտեր, որ բոլորը պիտի կոկոռային ճահճի գորտերի նման: Ի՛նչ փուլթ, «Հայրենի պես ջոհարը՜ առնելը, արքայություն էթալու պես բան մըն է»: Գյուղն այսօր կխոսի, վաղը կլռե:

Չատիկի մոայլ հոգու վրա պայծառ արև էր ծագել: Հիմա կյանքը իմաստ ուներ, աշխատանքը՝ քաղցրություն:

Մի քանի օր հետո ինքը, Հայրենն ու իմասը երկու օրով պետք է հեռանային գյուղից, գնային մոտակա Գարձի գյուղը, իմասի մորաքրոջ տունը և վերադառնային «պսակված»:

Պսակն ի՞նչ է...

Պսակը սերն է:

Չատիկը սիրում է Հայրենին:

«Սուսիկ-փուսիկ», առանց մարդ իմանալու, Ջատիկն ու Հայրենն ամուսնացան: Քարձիի տերտերը պսակել էր նրանց: Ո՞վ կհավատար... Ի՞նչ պսակ ինչ բան... Նրանք իրար «առեր-նստեր» էին:

Գյուղը երբեք այսպիսի բան չէր տեսել: Մի օրում գյուղն իմացավ այդ մասին, դռնե-դուռ հաղորդվեց նրանց պսակվելու լուրը, բերնե-բերան ծավալվեց և բոլոր խողները ցնցվեցին: Պատիվ չբերող բան էր կատարվածը, չլաված ու չտեսնված բան: Ու հարցնում էին իրար՝ վախով, զարմանքով.

— Իրա՞վ պսակվեք են...

— Անանկ կըսեն...

— Աղջիկ, ի՞նչ պսակ, ինչ բան, որո՞ւ կհավոցնեն, աղջիկը տարեր տղուն ծոցն են տվեր...

— Քուրն է ըրեր, էլմասր:

Գյուղի բոլոր աներում խոսում էին այդ մասին, դռների առաջ նստոտած կանայք ուրիշ նյութ չունեին, անգամ շուկայում, խանութների առաջ, դաշտի ճամփաների վրա, այդ մասին էր խոսվում: Բոլորի «բերնի ծամոցը» դարձան, երիտասարդները քրձում էին, ծերերն ու պառավները շամել մնացել էին, ահով բռնվել էր այդ անօրինակ փաստի առաջ:

— Տե՛ր ասված, տահա ինչե՛ր պի տեսնենք:

Ու նրանց աչքին բարձրանում էին, սրբանում գյուղի տերտերները, որոնք հավատարիմ իրենց սուրբ կարգին, չէին պսակել այդ «չան զավկները»:

Եղելությունն այնքա՛ն անսովոր էր, որ շատերը չէին ուզում հավատալ համառորեն չրջող լուրին:

Գյուղի հեռավոր թաղերի բնակիչներն ուզելով ստուգել տարածված լուրի ճշտութունը, պատկվածների հարեաններին բռնում էին փողոցներում, կանգնեցնում ժամի դռանը և հարցնում.

— Աղջի՛, իրա՞վ է լսածնիս:

— Իրա՞վ է, — պատասխանում էին նրանք հառաչազին:

Բայց նորից, վարանոտ, լսածին չհավատացողի պես, աչքերը վարձանքից չռած, ստում էին.

— Չըսե՞ս ամեն բան թամամ՞ է:

— Հա՛, օղուլ, հա՛, թամամ է, աղջիկը աղուն աունն է:

Մարդիկ ստելությամբ ու դայրույթով էին լցվում այն տերտերի, հանդեպ, որ խախտել էր վարավոր կարգը, ապօրինաբար լուծել եկեղեցու սուրբ պատկը մի քանի դուրուշի համար:

— Աս տերտերին մորուքը վար պի առնել:

Մտկաջն չտեսքը թերահավատում էին:

— Սուս է, ջանք՛, պատկ-մսակ չի կա:

— Անանկ է նը, իրար տեր-նստեր են չըսե՞ս:

Գայթակղությունը մեծ էր, թաղական խորհուրդն ականջ չունե՞ր, քնա՞ծ էր, ժամի ավագ-երեցի պարաբըն էր՝ գիմել պատրիարքարան:

— Շատ աղե՛կ, ամա՛, պատրիարքարանը ստոնցի՞նչ պի ընե, մարդս որ ամոթ ու խիպ չունենա, ասածմե չի վախնա, պատրիարքարանեն կվախնա՞:

«Աչքի՛ քնկնող» մարդիկ, գյուղի հարուստները հատկապես, սաստիկ վրդովված էին:

— Օրինակը գեչ օրինակ է: Ասանկ էթա նը, վերջը աղեկ չըլլար, մարդս քանի՞ կնիկ կառնե...:

2.

Շարաթներ անցան բայց գյուղը չէր լուծ: Ամեն մարդ համոզված էր, որ Զատիկն ու Հայրենը իրար

«տուր-նատեր» էին, որ Քարձիի տերտերի պատմութ-
յանը էլքասի, հորինած սուան էր:

Չլսված մի բան էր կատարվածը: «Կաթուղիք չէր
ըներ, բողոքականն ալ: Փութփերեստի՞ դործ էր»,
ուղղակի շուռթյուն:

— Հողինին դժոխքի կեր ըրին:

— Անոնք հոգի չունին, շո՛ւն են շո՛ւն...:

— Անպսակ կարգվի՞լ կըլա:

— Ասանկ էթա նը, գեղը Սողոմ-Գոմոր կըառնա:

Ու ամեն կողմից կատաղորեն հարձակվում էին
Չատիկի և Հայրենի վրա: Փրփուրը բերանին, գյուղի
հարուստները, որոնք օրվա հացի հոգսը չունեին, ո-
րոնք թեզրէհը՝ ձեռքներին խանութների առաջ, սըր-
ճատներում, գրուցում էին ստավոտից մինչև իրիկուն,
չարախոսում էին Չատիկի ու Հայրենի հասցեին, որ
օրինակ եղան գյուղում, խայաստակեցին գյուղի ա-
նունը, կոտրեցին գյուղի սյառիվը:

— Գեղի թեմեղը՞ գրվել են ասգին, ասանկ բան չէր
եղեր:

Բայց յուրեն էլ Չատիկից ու Հայրենից ավելի մե-
ղադբում էին էլքասին:

Չգիտես ինչպե՛ս, գուցե Մկրտիչ աղբարի բացը-
բանության շնորհիվ, լավել էր գյուղում էլքասի հան-
դիմման մասին Չատիկի հեա, այգու ճանապարհին,
կամ գուցե գյուղի հովիվն էր տեսել նրանց աղբյուրի
գուռի մոտ ու դնացել խոսել գյուղում: Ու հիմա ամեն
մարդ համոզված էր, որ այս գործը էլքասն էր «եփեր»:

— Անոր գործն է, շյուփե չիկա:

էլքասն ամեն օր այցելում էր քրոջը: Նստելով,
քույրերը խոսում էին, բերնե-բերան չէջող գրույցնե-
րի, բամբասանքների ու չարախոսությունների մասին:

— Հիչ հոգդ չընես, — ասում էր էլքասը, — մար-
դիկ են կխոսին, կանցնի, շուն չեղած գեղ չիկա:

1 Կապալաշու:

2 «Տերողորմյա»:

3 Հիմք:

- Իրավ է, — ասում էր, Հայրենը:
- Գիտցած եղիր, որ մեզի հախ ավողներ շատ կան... Անցած օր ինձի ճամփուն օրթան¹ կայնեցուցին ու ի՞նչ ըսին դիտե՞ս:
- Ի՞նչ ըսին:
- ԱՖերիմ² էլմաս ըսին, շատ ալ աղեկ ըրիք, քուրդ Չատիկին ավիր ըսին, Չատիկն ալ հախ ունի, դուք ալ՝ ըսին, տահա՞ ի՞նչ պի ըսեին:
- Իրա՞վ կըսես:
- Հպա՛...:
- Ո՞վ էր:
- Սրբուկ մարն էր, հաճի Թադուկն էր, Քուժուկանց էխասն էր... Ժամեն կուղային, մեր դռան առաջ ըրաստ³ եկան, խնդալեն ձեռքս բռնեցին, առանկ ըսին: Հայրենն ուրախանում էր ու ծիծաղում:
- Դրացիներդ ինչպե՞ս են հետդ, — հարցնում էր էլմասը:
- Գեշ չեն:
- Իայց Հայրենի շեշտի մեջ վարանում կար, էլմասն զգում էր այդ ու հարցնում.
- Հետդ կխոսի՞ն:
- Է՛հ, իշտե՞... կխոսին, ամա անչափ ալ տաք չեն:
- Ատոր համար մի մտմտար, — ասում էր էլմասն արհամարհանքով, — ասօր պաղ են, առտուն կտաքնան:
- Ու նորից հարցնում էր.
- Դուն ան ըսե, Չատիկն ի՞նչ կըսե:
- Հայրենը ծիծաղում էր.
- Անոր հիչ հոգը չէ, «Ի՞նչ կուղեն թող ըսեն»:
- կըսե:
- Քեզի հետ ինչպե՞ս է:

1 Մեջտեղը

2 Կեցցես:

3 Գեռ:

4 Հանդիպել:

5 «Ինչպես»-ի իմաստ ունի այս բառը:

— Եեքերի պես է, — պատասխանում էր Հայրենը՝
գոհունակ հպարտութեամբ:

— Դուն ատոր նայե, — ասում էր էլմասը, — քեզի
ատ է պետք, քեզի ուրիշ բան պետք չէ, օտարն ինչ
կուզե, թող ըսե:

Արդարև, Հայրենը որոշակի սառնություն էր նը-
կատում հարևանների դիրքի մեջ, երբեմն մինչև իսկ
հեղձանքի նուրբ խայթ կար նրանց խոսքերի մեջ:
Պատուհանե պատուհան, դռնե-դռու փոխանակված
խոսքերն ու ժպիտները շատ անգամ կասկածելի ի-
մաստ էին ստանում, նրանք իրեն չտեսնել և չլսել էին
ձևացնում, խուլս էին տալիս իրենից:

Երեկոները, երբ Չատիկը վերադառնում էր այ-
գուց, Հայրենը ժպտադեմ դիմավորում էր նրան դռան
շեմի վրա, ցած էր բերում նրա ուսից խաղողի փոքրիկ
կողովը, հետո նրանք առանձնանում էին սենյակում.
Հայրենը նստում էր նրա կողքին, արմունկը հենում
ծնկանն ու պայծառ հայացքն ուղղելով նրան, պատ-
մում էր օրվա ամբողջ կյանքը, իբր ապրումներն ու կա-
րուար:

Չատիկը երջանկորեն ժպտում էր, դալում էր
Հայրենին և համբույրի մեջ մոռանում օրվա ամբողջ
հոգնությունը:

3.

Հարևանների հետ գրուցելիս, երբ պսակի խոսք
էր վինում, Հայրենի սիրտը թունդ էր ելնում, նա
դույնը դցում էր, շփոթվում, լեզուն բռնվում: Հարե-
վանները նկատում էին այդ և թաքուն իրար երես էին
նայում:

Հայրենն զգում էր այդ ծածուկ նայվածքների
ծանրությունը, մինչև ականջները կարմրում, բայց
մինչև վերջը մնում էր խոսակիցների մոտ, սպասում
էր խոսակցութեան վախճանին՝ որսալու համար նրանց
ականարկները, գուշակելու համար նրանց բառերի ու
չեչտերի իմաստը: Առաջիկաները, երբ Չատիկն այդի

էր գնում, ինքն էլ դուռն էր գալիս, փողոցում պատե-
րի ստվերում նստոտած կանանց ու հարսերի հետ զրու-
ցելու: Համբերութեամբ և անձանձրույթ խոսում էր
նրանց հետ, շատ անգամ անհետաքրքիր նյութերի
շարժը՝ աշխատելով գրավել նրանց սերը, ջանալով
կապվել նրանց հետ մտերմութեամբ: Բայց դուռն էր,
որ նրանք արհամարհանքով են նայում իրեն և իրենից
խույս են տալիս:

Վերաբերմունքի ու շարժումների այս բոլոր ման-
րամասնությունները Հայրենը սրտին մոտ էր ընդու-
նում:

— Ինձի խորթ աչքով կնային, — մտածում էր նա:
Տան դռան առաջ հարևան պառավների տեսնելիս,
չտապում էր նրանց մոտ և ձեռներն էր ուզում՝ համ-
բուրելու ըստ սովորութեան: Բայց տեսնում էր, որ
նրանք դժկամութեամբ էին ձեռները երկարում: Շատ
անգամ էլ ձեռները պահում էին ծալած և՛ ցուրտ ու
անժպիտ «ապրիս» էին ասում միայն:

Մեծահասակ կանանց այս վերաբերմունքը խոցո-
տում էր Հայրենի սիրտը: Թաքուն հաշվում էր մըտ-
քում թե ո՞ր հարևանք քանի՞ անգամ ձեռքն երկարել է
համբուրել տալու և քանի՞ անգամ առանց ձեռք տալու
միայն «ապրիս» է ասել: Այս հաշվարկումը ամօտանա-
գին ապրումների և ուրախությունների առիթ էր
դառնում:

Հարմութեան առաջին օրերին, երբ պարուր-
ված էր Չառիկի սիրով ու դուրզուրանքով, հարևան-
ների վերաբերմունքի հոգսը ճնշում էր իր սիրտը:
Հայրենը տեսնում էր, թե ինչպես ոմանք առանձնապես
վառ էին ընդունում իրեն: Նրանց նայվածքը ցուրտ էր
ու անհրապույր: Բայց, հեղ ու բարի, Հայրենը հատ-
կապես քաղցրութեամբ էր խոսում այդպիսիների հետ,
իջ փոքրիկ ծառայություններն առաջարկելով նրանց,
լիպայքին օդնելու, բակը մաքրելու կամ կոյր կթելու:

— Պելքի, աստված սրտերնուն քաղցրություն կու-
տա, — մտածում էր նա:

Ու ամեն իրիկուն, երբ Չատիկը վերադառնում էր աշխատանքից, Հայրենն իր փոքրիկ հաշվետվությունն էր անում:

— Աննա մարը, նորեն ձեռքը չտվավ պագներու:

— Մաննիկ քուրը մենակ «ապրիս» ըսավ:

— Ամենեն աղեկը Սրբուկի մարն է, անիկա ամեն օր ալ ձեռք կուտա պագներու:

Չատիկը թաքցնում էր հուզումը, ժպտում էր, չոյում Հայրենի գլուխը և պատասխանում.

— Իրենց հարսներուն մոտ դուն լուսի ճբագ ես տես, անոր համար կընեն, հասկցա՞ր:

— Իրա՞՞փ ատար համար է:

— Հելբեթ՞ ատոր համար է, ալ ուրիշ ինչո՞ւ համար պի ըլլա:

Հայրենը լուռ մտածում էր և վարանոտ պատասխանում.

— Չիտիմ՞...:

4.

Բայց Չատիկը գիտեր, հաստատուպես գիտեր հարեանների սառը վերաբերմունքի բուն պատճառը: Չէ՞ որ նրանք իրեն հանդեպ էլ նույն ստանությունն էին ցուցաբերում: Նրանց խոսքերի մեջ առաջվա քաղցրությունը չկար, ո՛չ իր հալն էին հարցնում, ո՛չ քեֆը: Մի ժամանակ իր նոր-տունիկի մասին, իր այդու-ժաների մասին, իր առողջության մասին ամեն օր հարցնող ու հեռաքրքրվող հարեանները հիմա միայն լուռ բարեւում էին ու անցնում: Անգամ նրանք, որոնք գիտեին իր որբությունը, ճանաչում էին իր շարքաչ կյանքը, որոնք հեռուէլ էին քայլ առ քայլ իր ճակատագրի բոլոր ելիէջներին, հիմա չէին ուզում հարցնել իր բախտից, իր երջանկությունից: Չէ՞ որ նա հիմա կին ուներ, սիրուն ու սիրող կին, չէ՞ որ այնքա՛ն տա-

1 Անշուշտ

2 Չեմ գիտեր

ուսականքներից հետո երջանկացել էր: Կինը կյանք ու խնդուխտուն էր բերել իր տանը: Հարևաններ էին, մի օր հավաքվեին, գային իր առևը, նստեին, խոսեին, դինի խմեին, ուրախանային...

Սյգուց վերադարձին Չատիկը նստում էր դռան առաջ և առաջիա նման զրուցում հարևանների հետ: Բայց նկատում էր, որ նրանք նախկին մոտիկուխտունը չէին ցուցաբերում իրեն, շատ անգամ անպատասխան էին թողնում իր հարցումները կամ չլսել էին ձևացնում, հետո քաշվում էին տները՝ մենակ թողնելով իրեն՝ Հայրենի հետ:

— Մեր դրացիները չեն մարդիկ չեն, — դանդաղվում էր Հայրենը:

Ու դիտենալով հանդերձ հարևանների վերաբերմունքի պատճառը, սրտատրոփ սպասում էր Չատիկի պատասխանին: Չատիկը, որ լսում էր այս դանդաղ սրտի սեղմումով, հաստատում էր կոտջ խոսքը, աչխոտելով խուսափել մեկնարանումից: Նա ասում էր.

— Մեր դրացիները տայմա՞ տտանկ են եղեր:

Հայրենն դգում էր, որ Չատիկն ինչ որ բան թաքցրեց իրենից: Ինչպե՞ս թե «տայմա տտանկ են եղեր»: Նույն այդ հարևանները, իրենց բացակայությամբ, դռների առաջ հավաքված խոսում են, ծիծաղում, հանաքներ անում: Քանի՞ անգամ իր ականջներովն է լսել նրանց քա՛հ-քա՛հ ծիծաղելը, բայց երբ իրենք իջնում են ցած, մթնոլորտն անմիջապես փոփվում է, ծիծաղը դադարում է, հանաքները վերջ են գտնում և հետո, նրանք կամաց-կամաց գնում են ներս, իրենց տները և շրջապատն ամայանում է:

Սակայն երեկոները, ճաշի սեղանի վրա, փոքրիկ ճրագի աղոտ լույսով, երբ նստում էին իրար կողքի, մոռանում էին իրենց վիճակի բոլոր դառնությունները: Ո՛վ ինչ կուզեր թող ասեր, ինչպե՞ս կուզեր թող

մտածեր, իրենց ինչի՞ն էր պետք, ի՞նչ դորձ ունեին ուրիշի մանր ու ճղճիմ հաշիվների հետ: Ձերմ ու կըրքոտ սիրով լի իրենց սրտերում տեղ չկար «պզտիկ» բաների համար:

Ճաշից հետո նրանք նստում էին բաց պատուհանի առաջ ու դուրսը դիտում: Հեռվում, դաշտի ներքևում երևում էր լճակը՝ լուանի կաթնալին շողերի տակ, հալած արծաթի փայլով: Աստղերը ըթթում էին երկրնքի կապտալույս մթուժյան վրա և խաղաղությունը տարածվում էր ամեն կողմ:

Պատուհանի մոտ նստած, նրանք ցածրաձայն խոսում էին իրենց ապրումներից ու կարոտից.— օրը տարի էր, երեկո չէր լինում, արևը կանգնում էր երկնքի վրա, ե՞րբ պիտի մայր մտներ, որ Չատիկը տուն գար: Քանի անգամ մտածել էր թողնել այդին ու կեսօր չեղած վազել տուն, մի անգամ տեսնել Հայրենին ու նորից վերադառնայ:

— Ստանկ բան մըներ, մրանիս կիսնդան:

— Գիտիմ, որ կիսնդան, ասոր համար չեմ ըներ, խաչ ոք, չէ նը՝ պի ընիմ:

Ու ծիծաղում էին երջանկորեն:

Գյուղում ձայները դադարում էին, միայն Հայրենն ու Չատիկն էին մնում պատուհանի մոտ նստած:

Հեռվում, մութի թևերի տակ, նիրհում էին այգիներն ու պարտեզները, լուանի ճերմակ լույսը քնքշորեն թափվում էր դրանց կանաչ կուրծքի վրա, ուր ավելը, ինչպես մայրական կաթ, քաղցրանում էր հանդարտորեն: Պատուհանի մոտ, գիշերային սյուրք տարուբերում էր մազերը՝ պատուհանին դեմ տված Հայրենի գլխի վրա, փայփայլում էր այտերն ու ճակատը՝ հեշտանքով ու արբեցությամբ պարուրելով նրա հոգին:

Չատիկը երջանկորեն ու երկա՛ր դիտում էր Հայրենի սիրուն դեմքը և ընի հեշտագին թմբիրով փակվող նրա մեծ աչքերը:

— Չովուխի՞ր պէս քնացաւ, — մտածում էր Չատիկն ու ժպտում:

— Հետս մտտենում էր նրան.

— Հայրեն, եկուր պառկէ, կմսիս հոս, հովուն դեմ...:

5.

Հայրենի՞ ամուսնութեան առաջին ամիսը լրանալիս, էլմասը եկաւ քրոջ մոտ և հարս ու փեսային հրաժիրեց իրենց տուն՝ ըստ ընդունված սովորութեան:

— Ես հիմա Հայրենի առջևը կիյնամ, կտանիմ, — ասաց էլմասը Չատիկին, — քիչ ետքն ալ դուն կուգաս:

Ամբողջ մի ամիս Հայրենն իրենց տան ու հարե՛վաններէ դուան առաջից դենը չէր գնացել, առաջին անգամն էր, որ դուրս պիտի գար փողոց:

— Կխտնիմ, — ասաց նա քրոջը:

— Ինչո՞ւ կխտնիս, հանցա՞նք ունիս որ կխտնիս, նե գողութեան ես ըրեր, նե բան: Թե՛զ՞ ըրէ, հագվէ, որ եթանք:

Հայրենը հագաւ հարսի նոր շորերը, զարդուսկին կախեց վզից, մատանին անցկացրեց մատին, հարսի վարդագույն շղարչը գցեց գլխին ու քրոջ հետ դուրս եկաւ փողոց:

էլմասը երկու քայլ առաջից էր գնում, իսկ Հայրենը ետևից: Նա քայլում էր նորահարսի իր ամբողջ գեղեցկութեամբ: Բոյով էր ու գիրուկ, առատ մազերը երկու հյուս սրած, մինչև գիտեբն էին հասնում՝ քայլերի հետ համաչափ տատանվելով, մատները հինալված էին, ճակատը սլաճառ, աչքերը հմայիչ:

Սրբուկ մարը, որ նստել էր դուան շեմի վրա, առաջինը ձեռքն երկարեց Հայրենին: Հայրենը ջերմորեն ու շնորհակալութեամբ համբուրեց նրա ձեռքը:

1 Երեխա:

2 Ծոռապիր:

— Ասված չնորհքդ ավելցնես, — օրհնեց Սրբուկ մարր:

Ու դառնալով էլմասին, ասաց:

— Տուն կտանիս:

— Հա՛, տուն կտանիմ, ամիսը լմնցավ:

— Ի՞նչ կըսիս, ամիս մը եղա՞մ:

— Ասօր թամամ ամիս մը եղավ, — հաստատեց Հայրենը՝ երջանկորեն ժպտալով:

Շարունակեցին քայլել՝ էլմասն առաջից, իսկ Հայրենը ետեկց: Հեռվից երեւաց Աննա մարի մոայլ սիրուետոր: Նա ժամ էր գնում, սպիտակ քոզը գլխին, քայլելով ծանր ու հանդիսավոր, խոսելով մի պառավի հետ, որ իր կողքովն էր գնում: Երբ Հայրենը մտակեցավ Աննա մարին՝ ձեռքը համբուրելու համար, Աննա մարը դիտմամբ զգայիորեն ձայնը բարձրացրեց և ասաց խոսակցին.

— Հիմա անպսակ կնիկ տանելն ատելի է, օղուլ:

Նրանք երկուսով շարախինդ քրջացին: Հայրենը ստեղծեց, որ ակնարկը հասկացավ, չլսել ձեացրեց, չպատասխանեց և հեռացավ առանց ձեռքն ուղեղու, մինչև ականջները կարմրած: Հասնելով քրոջը, որ առաջ էր անցել, ջղայնորեն ասաց.

— Թեզ քալի...

— Աննա մարին ձեռքն ինչո՞ւ չուղեցիր, — հարցրեց էլմասր:

— Պետք չէր, անոր համար չուղեցիր:

Էլմասը նկատեց, որ Հայրենի դեմքն այլայլված էր:

— Շատ աղեկ, ամա, ինչո՞ւ չուղեցիր:

— Չլսեցի՞ր ի՞նչ ըսավ, — ասաց Հայրենը:

— Չէ՛, ի՞նչ ըսավ:

— «Հիմա անպսակ կնիկ տանելն ատելի է» ըսավ քովինին, ատանելով ինձի հասկցնել ուղեց, որ ես անպսակ եմ:

Էլմասը կանգ առավ, հոնքերը կիտեց:

— Աղջի՛, ե՞րբ ըստվ, որո՞ւ ըստվ, ըպա ես կիչո՞ւ չլսեցի:

— Դուն հեռուն էիր, ատոր համար չլսեցիր: Որու հետ որ կխոսեր, անոր ըստվ: Մախտուս՝ բարձր ըստվ, որ լսիմ: Ամա առնելիքը բլլա տա ջադուլն՞:

Էլմասը գայրացավ:

— Անանի է նը, կեցիր ասաց, ատոր բերնին չափը տամ: Ատ ալ լեզու ունի, մարդու վրա՞ կխոսի, թող էք էտեպսիդ՞ հարսին նայի:

Բայց Հայրենն արդիլեց էլմասին.

— Քալե՛, քալե, ատ շանը բերանը բանալ մի տար:

Էլմասը լսեց Հայրենին ու շարունակեց քայլել:

Երբ իջան գյուղի դլխավորը՝ փողոցը, տեսան, որ պատուհաններից ու դռներից իրենց են նայում: Արտասովոր այս աշխուժության մեջ և՛ զարմանք կար, և՛ հետաքրքրություն: Բոլորը նայում էին նրանց՝ հիացմունքով, աչքերը լայն բացած, հետևելով նրանց քայլերին ու շարժումներին, գովելով նրանց գեղեցկությունը, ապշած նրանց համարձակության ու աներես հանդգնության վրա:

Էլմասը մի երկու քայլ առաջից էր գնում, իսկ Հայրենը ետևից՝ դլխի վարդագույն թողը բարձր բռնած, հինայլած ձեռներով, փայլուն կոշիկները ոտներին, վզից կախ տված զարդոսկին, աջ ձեռքի վրա կրելով փայլիլուն ոսկի մատանին:

— Աղջի՛, աղջի տեսա՞ր ով անցավ...

— Հայրենն է... Հայրենն է...

— Էլմասը տուն կտանի...

— Չեն ալ խոսիր, դորեկ աչքով կանցնին:

— Ճիտինը հինգը-մեկնոց է...

— Ատեն մը, ատ հինգը-մեկնոցը Մաքիամը կկախեր:

— Հի՛, հի՛, հի՛...

1 Դիտմամբ:

2 Չար պատավ:

3 Մնամոթ:

— Ասված չնորհքդ ավելցնես, — օրհնեց Սրբուկ մարր:

Ու դառնալով էլմասին, ասաց.

— Տուն կտանիս:

— Հա՛, տուն կտանիմ, ամիսը լմնցավ:

— Ի՞նչ կըսիս, ամիս մը եղա՞մ:

— Ասօր թամամ ամիս մը եղավ, — հաստատեց Հայրենը՝ երջանկօրեն ժպտալով:

Շարունակեցին քայլել՝ էլմասն առաջից, իսկ Հայրենը ետևից: Հեռվից երևաց Աննա մարի մոայլ սիլուետը: Նա ժամ էր գնում, սպիտակ քոզը գլխին, քայլելով ծանր ու հանդիսավոր, խոսելով մի պառավի հետ, որ իր կողքովն էր գնում: Երբ Հայրենը մտակեցավ Աննա մարին՝ ձեռքը համբուրելու համար, Աննա մարը դիտամա՞ք զգայիտրեն ձայնը բարձրացրեց և ասաց խոսակցին.

— Հիմա անպսակ կնիկ տանելն ատելթ է, օղուլ:

Նրանք երկուսով չարախինդ քրքջացին: Հայրենը ապիպան, որ ակնարկը հասկացավ, չլսել ձևացրեց, չպատասխանեց և հեռացավ առանց ձեռքն ուղեղու, մինչև ականջները կարմրած: Հասնելով քրոջը, որ առաջ էր անցել, ջղախոտրեն ասաց.

— Թեզ քալե...

— Աննա մարին ձեռքն ինչո՞ւ չուղեցիր, — հարցրեց էլմասր:

— Պետք չէր, անոր համար չուղեցիր:

էլմասը նկատեց, որ Հայրենի դեմքն այլայլված էր:

— Շատ աղեկ, ամա, ինչո՞ւ չուղեցիր:

— Չլսեցի՞ր ի՞նչ ըսավ, — ասաց Հայրենը:

— Չէ՛, ի՞նչ ըսավ:

— «Հիմա անպսակ կնիկ տանելն ատելթ է» ըսավ քովինին, ատանկով ինձի՞ հասկցնել ուղեց, որ ես անպսակ եմ:

էլմասը կանգ առավ, հոնքերը կիտեց:

— Հողինին դժոխքի կեր ըրին, տահա ի՞նչ պի
ընեն...

— Ամա՛ն, վազ անցեք, — բացականչում էին ու-
րիչները, — իրար հավներ, աւեր-նատեր են... Ստամ-
բոլ գացող եկողները անանկ բաներ կպատմեն, որ ա-
սոնց ըրածը անոնց մոտ ի՞նչ է...

Փողոցի անցորդները կանդնած նայում էին նր-
բանց, ջահելները հմայված էին, ծերերը հիացած՝
նախանձելով Չատիկին, որ Հայրենի պես սիրուն կին
ունի:

— Չատիկի կնիկն է, — ասում էին իրար:

— Ի՞նչ կըսես, իրավ աղվոր է եղեր, կըսեին, չէի
հավանար:

— Աղվո՛ր է, շա՛տ աղվո՛ր է...

— Գեղին մեջ մեկ հատիկ է:

Ծանոթների հանդիպելիս, էլ մասը ետ էր դառնում
և ասում քրոջը.

— Մարգրիտ մարին ձեռքը պող:

— Հաջի աղբոր ձեռքը չմոռնաս պագնելը:

Բայց Մարգրիտ մարերն ու Հաջի աղբարները շատ
անգամ զլանում էին նորահարսին պատիվ անել, ձեռ-
ները չէին երկարում և միայն «ապրիտ» էին ասում:
Այն ժամանակ, Հայրենը նորից վերավորվում էր սրտի
խորքում և ասում էր քրոջը ցածրաձայն.

— Թեզ քալե:

Էլ մասը հասկանում էր քրոջ միտքը, զգում էր,
որ այդ բառերի մեջ քրոջ հասցված վերավորանքի ամ-
բողջ ցավն էր թաքնված, խոցված արժանապատվու-
թյան ամբողջ դառնագին վիշտը: Ու սրտապնդելու
համար նրան, ասում էր.

— Ձեռք չտալերնուն համար հիչ հողդ մըներ, ա-
տեն մը ինձի այ ասանկ կընեին, հիմա հողի կուտան
հետս խոսելու համար:

— Ատոնք ո՞վ բանի տեղ կընես, — ասում էր Հայ-
րենն արհամարհոտ շեշտով:

Բայց նորից խոտոված ու Ղլային, երբ մեկի մերժումն էր ստանում, ասում էր.

— Թեզ քալե...

Սաղայն երկու քայլ այն կողմ, երբ մեկն իրեն ձեռք էր երկարում, դեմքը պայծառանում էր, հոգին լցվում խնդությամբ և աչքերը երանությամբ ճառագայթում էին:

6.

Փողոցի անկյունում, աղբյուրի մոտ, ուր կանայք խմբվել էին ջրի համար, կանգնել էր աղայի կինը, Սոֆիկ հանրմը:

Յանաչմայության վերջին հինգ տարին Չատիկն աշխատել էր Սոֆիկ հանրմենց տանը: Սոֆիկ հանրմը մոտ քառասուն տարեկան կլիններ, դիրուկ, կարճահասակ ու ազեղ, ուներ մթին աչքեր, ցցված ու չար ծնոտ:

Նա հայտնի էր գյուղում որպես չար ու բամբասող կին—գյուղի բոլոր երեակալական սիրահարությունների հեղինակը:

Քանի՜ քանի կանայք ու տղամարդիկ, աղջկերք ու տղաներ, «կտաքնային» իրար վրա ու «կպաղենին», փողոցով անցնելիս աչք էին անում իջար, ժպտում էին, անդամ խոտքեր նետում, հետո դաշտի ճամփաների վրա լուսումութին իրար սպասում, համբուրվում... Ու այս բոլորը Սոֆիկ հանրմը կամ ինքն իր աչքերովը տեսած էր լինում, կամ թե չէ ականջնեղով լսած...

— Սոֆիկ հանրմի բերանը փիս՝ է:

— Ասված մարդս անոր բերանը չձգե...

Աղբյուրի դիմաց, մեջքն հենած պատին, նա կանգնած էր երկու կանանց հետ: Ժամ դնալիս հանդիպել էր նրանց ու խոսում էր, զրուցում տաք-տաք ու ծիծաղում:

Եվ կանայք, որոնք խմբվել էին աղբյուրի մոտ, դիտում էին նրան հարգալիր ակնածությամբ, հիացած նրա թանկ շորերի, համարձակ շարժումների և իշխանական ձևերի վրա:

Էլմասը հեռվից նկատեց նրան:

— Սոֆիկ հանրմն է,— ասաց քրոջը:

— Ձեռքը ուզի՞մ,— ասաց Հայրենը:

— Ուզե, ինչո՞ւ պի չուզես, անիկա մեզի ի՞նչ ունի բրած, որ չուզիս:

Սոֆիկ հանրմը տեսավ, որ էլմասը դալիս է հեռվից, առաջնորդելով իր քրոջը:

— Սուս եղեք,— ասաց նա խոսակիցներին,— նայեցեք ո՞վ կուզա...:

— Էլմասն է, քրոջ առջևն ինկած, տուն կտանի,— ասացին նրանք:

— Գիտիմ...:

Ու կամաց նրանց ականջին շնչաց, ապա թքեց դեմնին՝ մի բանից գարշածի պես, հետո կանգնեց անշարժ, լուռ և չար, անժպիտ հայացքն ուղղեց էլմասին:

Եվ մինչդեռ Հայրենն առաջ անցնելով մոտենում էր աղայի կնոջը, էլմասը հարկ համարեց խոսել նրա հետ.

— Ինչպե՞ս ես Սոֆիկ հանրմ, աղե՞կ ես:

— Ես աղեկ եմ, դուն քեզ նայե,— պատասխանեց Սոֆիկ հանրմը՝ չար հեզուությամբ:

Էլմասը կանգ առավ ու ատամները սեղմած, դիտեց աղայի կնոջը:

Հայրենը մոտենում էր Սոֆիկ հանրմին:

Հանկարծ Սոֆիկ հանրմը մի քայլ առաջ եկավ ու կատաղությամբ գոռաց Հայրենի վրա.

— Ո՞ւր կուզաս, ո՞ւր, ձեռք պագնե՞լ կուզաս, դուն հա՞րս ես, որ ձեռք պագնես, դուն սուտ հարս ես, օղուլ, սուտ հարս, իրավ հարսերը ձեռք կպագնեն, գնա՛, գնա՛, քեզի ձեռք տվող չըլլար:

Հայրենը քարացած կանգ առալ ու շփոթված և ամոթահար, ետ դարձալ՝ փնտրելով էլմասին:

— Քու տեղդ բռնված է, օղուլ,— շարունակեց Սոֆիկ հանրմը,— Պուզուլենց Մարիամին կվայլե ձեռք պաղնելը, իրավ հարսը անիկա է, դուն սուտ հարս ես... Գնա՛, դնա՛, չես ալ խպնիր, ձեռք պաղնել կուզես:

Աղբյուրի մոտ խմբված կանայք նայում էին Հայրենին, որ գլխիկոր ու անշարժ, քարացածի պես կանգնած էր, քողը գլխին, շփոթված, ամոթահար, հիշույված ձեռքերը կրծքի վրա, դատապարտյալի պես լուռ ու դժգույն:

Սոֆիկ հանրմը կատաղած էր:

— Աղջի էլմաս, էտեպսիդ, դարձալ նա Հայրենի քրոջը,— սա ի՞նչ է քու ըրածդ, դուն ասված չունի՞ս,— դուն քրիստոնյա չե՞ս, դուն շունե՞ ծնած ես:

Բայց էլմասը, որ մի րոպե շփոթվել էր աղայի կնոջ այդ անպատկառ վարմունքից, հալաքեց ինքն իրեն ու կատաղորեն հարձակվեց Սոֆիկ հանրմի վրա:

— Էդեպսիդն ալ դո՛ւն ես,— սասց նա,— շունե ծնածն ալ, խողի ձագ ալ... Աղայի կնիկ չըլլաս նե, հետդ խոսող չըլլար, դուն քեզ մա՞րդ գիտցար, պիչի միդ¹ նայե տե՛ ետքը խոսե, ալեմը² քեզի հետ կխոսի նը, փարայիդ պատիվ կընե, կխոսի: Ամա, գիտցած եղիր, որ Եաֆայի էշերն ալ Երուսաղեմ կեթան, նորեն էշ կմնան...

Ու գառնալով քրոջը, սասց.

— Ասդին եկուր, աղջի, ատիկա ո՞վ է, որ մարդու տեղ ես դրեր, ձեռքը պաղնել կուզես: Ալ մարդ չգտա՞ր...

Ու բռնելով Հայրենի ձեռքից առաջ շարժվեց:

Սոֆիկ հանրմը դույնը պցեց: Նա դողում էր ամբողջ մարմնով: Աղայի կնոջ արժանապատվութունը

¹ Ձե, շոր՛քր:

² Մարդիկ, աշխարհը:

ոչ ոք այսպես հանդգնորեն ու հրապարակով չէր վերաժողորհել:

— Ըսածներուդ համար հաշիվ պի տաս ետքը, — ապառնաց Սոֆիի հանրմը էլմաստի ետեկց:

Հայրենը, որ մինչև այդ լուռ էր, ուզեց պատասխանել, բայց էլմասը նրա բերանը փակեց.

— Գու՛ն սուս կեցիր, քեզի խոսք չիցնար, ես հոս եմ...

Ու դարձավ աղաչի կնոջը.

— Ընծի նայե՛, ընծի, իմ անունս էլմաս է, աչքերուս մեջ աղեկ նայե, ես քեզի պես էտեպսիղին հաշիվ չեմ տար... Ինչե՞րդ պի մախնամ, նե հացիդ ենք, նե ջուրիդ, մենք մեր ճակտի քրտինքով կապրինք:

Աղաչի կին դառնալու օրից, երբ սկսեցին Սոֆիի հանրմ անվանել նրան, ոչ ոք նրա վրա բերան չէր բացել, բոլորի մոտ նրա խոսքն անցուկ էր, բալորը հնազանդվում էին նրան, նրա քմահաճույքներին ու ցանկություններին, և ահա հանկարծ, էլմասը, որին կարող էր որպես խրզմեթքյար¹ ծառայեցնել, այդ փինթին², վրան խաղ հանվածը, խոսում էր իր դեմ ու պատասխանում ապշեցուցիչ հանդգնությամբ:

— Էտեպսի՛ղ, — գոռաց նա, — միտքդ պահե բամձներիդ...

— Էտեպսիղը ես չեմ, — ասաց էլմասը, — էտեպսիղը դու՛ն ես, ատիկա այեմը գիտե... Բերանս բանամ նր՛ տահա շատ բաներ կըսիմ...

Այն ժամանակ Սոֆիի հանրմը վազեց դեպի էլմասը, բայց կանայք բռնեցին նրան ու արգելեցին: Կախ բնկած նրանց ձեռների վրա, մոլեղնության փրփուրը բերանին, խուլ, հեղձամղձուկ ձայնով նա գոռաց.

— Քուրդ մեջտեղն է, օղուլ, գետնին տակը մտեք, գետնին տակը, մարդու մեջ դուրս մի դար...

Հայրենը պինդ բռնել էր քրոջ ձեռներից և արգի-

1 Ագախին:

2 Կեղտոտ:

լում էր նրան՝ գնալ դեպի Սոփիկ հանրամբ: Էլմասը
բացականչում էր.

— Թող տուր եթամ ոտքերուս տակն առնիմ աս
խոզի ձագը:

Աղբյուրի մոտ խմբված կանայք վազեցին դեպի
էլմասը, չըջապատեցին նրան ու հեռացրին:

— Էլմաս, օղո՛ւլ, — ասում էին նրանք, — դուն
նո՞ր պի ճանաչաս Սոփիկ հանրամբ: Սուս կեցիր:

— Սուս կենա՛մ... Աղջի, մենք իրեն ի՞նչ ըրած
ունի՞նք, ջուրս մարդու տեղ գրավ, գնաց ձեռքը պազ-
նելու... Ստանկ խոսքերը ըսելու պեսք կա՞ր... Խտեպ-
սի՛զ... Սնիկա ինձի ո՞վ գիտցավ... Մեռնելս գիտնամ
նր, ատանկներուն առջև գլուխ չեմ ծռեր... Փարս-
յա՞վը պի վախեցնե ինձի:

7.

Սոփիկ հանրամբի և էլմասի կռվի արձագանքը տա-
րածվեց ողջ գյուղում: Երկու կողմն էլ իրենց պաշա-
պաններն ունեին:

— Սոփիկ հանրամբ արուն-բերանին մեկն է, անոր
հետ չտիվի՞ր կըլլա, վարայի ուժով ամեն բան կընե:

— Աղայի կնիկ է ամա, ծանրություն չունի:

— Իրեն չի վայելող բաներ կընե, տեղը կա՞ր փո-
ղոցին մեջը աղջիկը քեփապե բնելու:

— Ի՞նչ է ըսեր... Սուս հարս է ըսեր, իրավ չի՞
ըսեր, Հայրենը սուս հարս չէ՞, ինչո՞ւ կայսանեք Սո-
փիկ հանրամբին:

Եվ օրերո՞վ, անկյունե-անկյուն, դռնե-դուռ,
խոսվում էր այդ մասին և այդ առնչությամբ «սուս
հարս» հորջորջումը պտտվում էր չըթնների վրա:

Շատերը ծիծաղում էին Սոփիկ հանրամբի այդ սրա-
միտ գյուտի համար:

— Շատ ալ ճիշտ է ըսեր, — ասում էին ոմանք, —
անպսակ կնիկը հա՞րս է, տան կնի՞կ է:

Ու զարչանքի զգացումով լցվելով սուս հարսի

Հանդեպ, երեսներն էին խաչակնքում բացակահանչելով:

— Տե՛ր ասված, դուն ատանկ բաները տունե-տեղե հետու ընես:

— Աղջիկ, մարդ որ պատկ չունենա, սեր կրնա՞ ու-նենալ:

— Պատկն է, որ սեր կուտա մարդուս:

Եվ դո՛ւ այն բանի համար, որ իրենց հարսնու-թյունն օրհնված է, անբիծ, հոգեպես թեթևանում էին, օրենքի և սրբության առավելությունն իրենց կողմն ունենալու համար, երջանիկ էին համարում ի-րենց և շարունակում էին ավելի եռանդալին բամբա-սել Հայրենին ու Չատիկին, որոնց հոգիներն անդիա-կան դժոխքի կեր պիտի լինեին:

Աննա մարն առավոտից մինչև իրիկուն շրջում էր գյուղում, այցելում էր ծանոթներին և բարեկամներին ու ժամերով նստում-խոսում էր այդ ընդհարման ման-բամանությունների մասին: Չատիկը լսում էր ամեն բան, բայց արիությամբ տանում էր բոլոր անախոր-ժությունները: Համոզված էր, որ այդ անդուրեկան գրույցներն ու բամբասանքներն անխուսափելիորեն պիտի լինեին, համոզված էր, որ մարդկային երջան-կությունը կատարյալ լինել չէր կարող, որ մարդու հոգու վրա միշտ մի ստվեր պիտի լիներ:

— Դերասիկ՞ մարդ չի կա,— ասում էր նա ինքն իրեն:

Բայց Հայրենի հետ խոսելիս, աշխատում էր սփո-փել նրան:

— Ատ խոսքերը թեզ չեն վերջանար,— ասում էր նա,— ատոնք տարի կբաշեն, ատիկա գիտցած եղիր... Ծունի պես պի հաչեն, ամա ետքը նորեն մենք պի հաղթինք... Քանի որ մենք իրար կսիրենք, մեզի բաժ-նող չըլլար:

Հայրենը հարցնում էր ահով:

— Անանկ է նը, մեղի բաժնե՞լ է մաքերնին:

Չատիկը հաստատական պատասխան՝ էր տալիս: Հայրենը գրկում էր Չատիկին և դուրսը դնում նրա կրծքին՝ ապավեն ու ապաստան փնտրողի պես:

Էլմասի ու Սոֆիկ հանրմի ընդհարումից հետո ամբողջ մի շաբաթ Հայրենը դուրս չեկավ տնից և ուշադիր հեռեց հարևան հարսների ու կանանց խոսակցություններին՝ աշխատելով որսալ նրանց բառերն ու հայացքները և դուշակել տրամադրությունները: Շատ անգամ նա լսեց Սուտ հարս բառերը, անսահման վիշտ դդաց, բայց համբերությամբ լսեց: Մի օր, սակայն, որոշակի նկատեց, որ հարևաններն այդ բառերը հատկապես բարձր արտասանեցին, իրեն լսելի անելու համար: Հայրենը, որ պատուհանից ցած էր նայում, ներս քաշվեց, փակեց փեղկերն ու լաց եղավ: Երեկոյան, Չատիկին դիմավորելիս, նրա աչքերն արցունքոտ էին:

— Ի՞նչ ունիս, — հարցրեց Չատիկը վախեցած:

Հայրենը դուռը փակեց ու սկսեց նորից լաց լինել՝ առանց պատասխանելու:

Չատիկը քնքշորեն համբուրեց նրան:

— Ըսե ինձի, Հայրեն, ցավդ ի՞նչ է, ինչո՞ւ կուլաս:

Հայրենը դուրսը դրեց Չատիկի կրծքին ու հեկեկազին լաց լինելով, ասաց.

— Ինձի Սուտ հարս կրտեն:

Չատիկի դեմքը վշտով պրկվեց, բայց նա պահեց իրեն և շոյեց կնոջ դուրսը.

— Ատո՞ր համար կուլաս, ի՞նչ անխելք ես եղեր... Հետո վճռակամ.

— Այս աշխարհի բոլոր հարսներուն մեջ, քեզմեն իրավ հարսը չիկա:

Հայրենն սփոփված սրբեց աչքերը:

Վստահությամբ և սիրո կրքոտությամբ արտասանված այդ բառերը ժամեր շարունակ հնչում էին Հայրենի հոգում՝ սփոփելով նրան, դպվելով նրա

Հպարտութիւնն ու պատիւը, բարձրացնելով նրան
օրենքի և սրբութեան ուժն ունեցող «իրավ հարսերի»
մակարդակին: Նա աշխարհի բոլոր հարսների մեջ ա-
մենից իրավն էր՝ այն պատճառով, որ Չատիկն ու ին-
քը սիրում էին իրա՛յ՛ կրքով ու խանդոտութեամբ,
որ նրանց սերն արդեն սկսել էր արգասավորվել և
մայրութիւնը նրա մեջ հասունանում էր օրեցօր:

8.

Աշնանային ցուրտ առավոտ էր: Տրեխները հա-
զին, ականջները ծածկած, էշն առաջը գցած, Չատիկը
գնում է այգի՝ փայտ բերելու: Կացինն ու սղոցը կա-
պել էր կենդանու համեաի վրա ու դանդաղ բարձրա-
նում էր բլուրի նեղ ու քարոտ ճամփով, երկինքը պա-
տած էր թուխ ամպերով և պարտեզներն ու այգիները
մերկացել էին: Դեղնած տերևները թրթռում էին ծա-
ռերի կտարներին և քամին իրան էր տալիս թթենի-
ների բարակ ճյուղերը, շվացնում՝ թփերն ու լերկ
ձգտոները: Լսվում էր ժամի դանդի հեռավոր զոզանջը:
Հեռվում տարածված էր գորշ գաշտավայրը, մինչև յը-
ճակի մթին ջրերը և ամեն կողմ, բլուրների ու կար-
տեզների վրա, իջնում էր աշնանային թախիժը: Չա-
տիկը մենակ էր: Ամեն մարդ սիրտ չէր անի աշնան այս
ցուրտ առավոտով դուրս գալ անից, բարձրանալ այդ
բլուրը՝ կուրծքը դեմ տփած սառեցնող քամուն, որի
սարսուռը թափանցում էր մինչև ոսկորների ծուծը:

Այգու եզերքին, առլի մաս, չորացած մի ծառ
կար: Չատիկը գնում էր կարելու այդ ծառը, ջարդե-
լու մաս-մաս բառնալու կենդանուն բերելու տուն:
Ֆրտերն ընկել էին, տանը վառելիք չկար: Վաղը մյուս
օր, երբ ձյունն սկսեր տեղալ, ճամփաները պիտի ծած-
կվեին, մրրիկ պիտի լիներ այդ բարձունքի, վրա և
անկարելի պիտի դառնար այդի դնալ, փայտ բերելը:
Երբ մարդ տուն-տեղ ունի և կին, ամեն բան իր
տեղը պիտի լինի: Այլևս հո առաջվանը չէ՞, հիմա ըն-



տանիք ունի, ազգականներ ու բարեկամ, կինն էլ ահա արդեն «երկու հոգով է, ի՛նչ կըլլա, ի՛նչ չըլլար», ամեն քան պիտի նախապատրաստել:

Երկու օր առաջ մի կով ու մի էջ գնեց: Հայրենի սաստիկ ուրախացավ, գնաց կանչեց ջրոջն ու Մկրտիչ ազգաբնիկ: Կովը միասին կթեցին ու երեկ գիշեր Մկրտիչ ազգաբնիկ հետ իրենց տանը գինի խմեցին:

Չատիկն ուրախութեամբ հիշում էր երեկ գիշեր իրենց տանն անցկացրած ժամերը՝ գինու սեղանի շուրջը, աաբուկ, մտերիմ զրույցով: Չատիկն իրեն գգում էր կյանքով ու արիութեամբ լի: Փառք ասածու, ի՛նչ կար մտածելու: Տան մեջ ամեն քան լավ էր գնում, Հայրենն օրեցօր թարմանում էր ու գեղեցկանում, «օր մը օրանց» իրեն վառ չէր գգում, տան մեջ ամեն քան իր տեղն էր, — եփել-թափել, բլանալ-մաքրել, կար-կարկառուք, — ամեն ինչ... էլ մասն օգնում էր ջրոջը: «Մենակ սա պառավների խոսք-խորաթան, որ չլինեք»... Ճիշտն ասած, ինքն ու չի դաբձնում գրբանց: «Անոնք ո՞վ մարդու տեղ կընեն»... Հայրենը սակայն ազգվում էր և երբեմն այնքան խոր, որ լսոյ էջ լինում:

— Ինձի Սուա հարս կըսեն, — ասում է նա հեկեկալով:

Չատիկը սաստիկ վշտահարվում էր, բայց իր միջան ու հուզումը թաքցնում էր և համբերութեամբ ու սիրով խրատում Հայրենին, համոզում էր նրան, սրբում արտասուքը և մխիթարում:

— Դուն երկու հոգով ես, ազվորս, քեզի համար լացն աղեկ չէ...

Չատիկը հիմա մտածում էր այդ բոլորի մասին և սիրտը լցվում էր վշտով: Ուզում էր սակայն մտանալ ամեն ինչ, միայն մտածել ապագայի մասին: Սիրուն ու առողջ կին ունի, շուտով հայր կդառնա, տունը կլցվի երեխայի զվարթ ճուլող լուծով, ինչե՛ր չի երազում նրա համար:

Բայց նորից մռայլ ամպի պես կախվում էր աչքե-

քի դեմ շրջապատի հարածանքը, երեկվա մտերիմների երես դարձնելը, Սոփիկ հանրմի, սպառնալիքը, թե՛ «դեղեն վունան էլ պի տամ», ծանոթների ու հարևանների սառը վերաբերմունքը, հետո Հայրենի լացը և նրա լուռ տանջանքները:

Չատիկը ճիպոտով խիտում էր կենդանուն և կենդանու քայլով դանդաղ բարձրանում էր բլուրը:

Մկրտիչ աղբարի այդու մոտով անցնելիս երկա՛ր նայեց այդուն: Այդին մերկացել էր: Բարդիների լեքի կատարները տարուբերվում էին քամու ցուրտ շնչի տակ և ընկուղենու կանաչ բոլորակի տեղ հիմա մերկ ճյուղերն էին ցցվել օդի մեջ: Չատիկը սիրում էր այդ ընկուղենին: Նրա բնի մոտ մի օր բախար ժպտաց իրեն լուսեղեն երազի նման: Իր այդուն մոտենալիս, նայեց պաղ-աղբուրին, որի դուռի մոտ մի օր նստած, իրեն էին սպասում Հայրենն ու էլմաք:

Ի՞նչ հիշատակներ են կապված այդ բլուրի ու այգիների հետ... Ոչ մի երիտասարդ իրա նման խանդազին չի սիրել և դժվարությամբ չի հաղթանակել: Հիմա երբ երջանկությունն իրենն է, ոչ ոք չի կարող խլել այն իրենից, թող բոլորը խորթ աչքով նայեն իրեն, թող ծանոթները երես դարձնեն, թող Հայրենին Սուտ հարս անվանեն: Պսակն ի՞նչ է տալիս մարդուն, սերն է էականը: Ու իր կի՛նն աշխարհի բոլոր հարսերի մեջ ամենեն իրայն է:

Չատիկը կանգնեցրեց էշին, ցած բերեց կացինն ու աղոցը, էշը կապեց թփից, բարձրացավ ծառը և սկսեց աղոցել նրա ճյուղերը:

Չորացած կաղնի էր: Մանկության ժամանակ քանի՞ անգամ եկել էր նրա սավերին պառկելու տատի ուլի հետ: Այն ժամանակ կաղնին կանաչ էր, ասվի եղբրքին բուսած վարթամ սաղարթներով մի ծառ, որ պտույտպանում էր արևի շոգից իրեն ու տատի ուլին... Ո՞վ կմտածեր, որ մի օր հենց այդ ծառի կողքին ընկած անմշակ տարածության վրա, այգի պիտի տնկի ու այդ ծառն ինքն իր ձեռքով պիտի կտրի՝ վերահաս

ձմռան ցրտի դեմ պաշտպանելու համար իր սիրած
կնոջն ու ընտանիքին:

Պաղ-աղբուրի ջուրը բարակ կրիզով դալիս միա-
նում էր առվին, որ ծառի տակովն էր անցնում, հետո
իջնում բլուրն ի վար և դնում դեպի դաշտավայր:
Այդ խեղճ ծառը, որ բուսել էր բլուրի լանջին, տարի-
ներ առաջ, ահա չորացել էր, որովհետև խնամող ձեռք
չէր մոտեցել նրան: Եթե էլ մասի ու Հայրենի սիրույ
սրտերը չմոտենային իրեն, ինքն էլ դոբովաղուրի ու
անսեր, կցամաքեր այդ ծառի նման:

Չատիկը նորից մտածեց Հայրենի մասին: Հիշեց
նրա աչքերի պայծառ ժպիտը և ձայնի զգլոզ քաղց-
բությունը, որ իր սիրտը բոցավառում էին և հոգին
կրակում սիրո և խանդաղատանքի հուրով:

Ծառի ճյուղերը շառաչյունով ցած էին ընկնում
իրար ետևից: Չատիկն այլևս ցուրտ չէր զգում և ե-
ռանդապին շարժում էր սղոցը:

Չատիկը կանգ առավ: Ժամի զանգակը նորից սկի-
սեց հնչել՝ այս անգամ բարձր ու հանդիսավոր: Քա-
մու շունչը տարածում էր նրա զողանջները հեռո՛ւ-
հեռո՛ւ...

Չատիկը հիշեց, որ օրը կիրակի է և եպիսկոպոս է
եկել գյուղը՝ պատարագ անելու: Նա խաչանկնքեց ե-
րեսը, ցած իջավ ծառից, ջարդոտեց ճյուղերը և պատ-
րաստվում էր բառնալ կենդանուն, երբ հանկարծ
նկատեց Մկրտիչ աղբարին, որ պաղ-աղբուրի մոտով
իջնում էր դեպի իր այգին:

Չատիկը զարմացած մնաց:

Ի՞նչ կար... Այդ ժամին Մկրտիչ աղբարն ինչո՞ւ
էր դալիս, դժբախտություն չի՞ պատահել արեյո՞ք
տանը:

— Իհեր ըլլա, ինչո՞ւ եկար, — հարցրեց Չատիկը:

Մկրտիչ աղբարն այլայլված էր:

— Քեդի կանչելու եկա, — ասաց նա:

— Ինչո՞ւ համար, Հայրենը հիվա՞նդ է...:

— Ձէ ջանրմ...:

— Անանկ է նը, ինչո՞ւ եկար...

— Եպիսկոպոսը քեզի՛ կուզէ, — ասաց Մկրտիչ աղբարը շնչահառուր:

Չատիկը զարմացել էր՝ լսածին չհավատալով:

— Եպիսկոպոսն ինձի հետ ի՞նչ դորժ ունի, որ ինձի կուզէ:

— Ես ի՞նչ գիտնամ...

— Գեղի, ո՞վ խրկեց՞:

— Հայրենն ու էլքասը... «զնա թեզ Չատիկին կանչե» ըսին:

Չատիկը հասկացալով ամեն ինչ ու այլևս հարց չալկեց: Ծոռալ բարձեց կենդանուն ու Մկրտիչ աղբարի հետ ճամփա ընկալ զեպի գյուղ:

9.

Ճանապարհին երկուսն էլ լուռ էին: Մի ծանր միտք տանջում էր Մկրտիչ աղբարին: Չեռները, ցրտից պաշտպանվելու համար, խրել էր գոտիի ծալքերի մեջ և գլխահակ ու ախուր հեռեւում էր Չատիկին: Նա գիտեր, որ եպիսկոպոսի հրավերը կապված էր ծանր խնդիրների հետ, որոնք նորից առիթ պիտի տային գյուղին՝ խոսելու և հորովելու իր կնոջ ու քենու անունն ու պատիվը: Սուլ երկյուղը պաշարել էր նրա հոգին: Չատիկը չէ՞ր հրաժարվի արդյոք Հայրենից, եթե եպիսկոպոսն առաջարկեր նրան այդ մանավանդ, որ լսել էր, թե Մարիամը Սոփիկ հանրձի դրողւմով, ինքն էլ բավականին խելահաս, ուզում էր Չատիկին:

Շատերից էր լսել այդ մասին, էլքասն էլ գիտեր, գիտեր մինչև իսկ Հայրենը: Մկրտիչ աղբարը համոզված էր, որ կինն ու քենին իրեն ուղարկելով Չատիկին կանչելու, նպատակ ունեին միայն այդ հարցը պարզելու:

Ի՞նչ ծանր ու ի՞նչ դժբախտ դրուժյուն էր: «Հայրենն ալ երկու հոգով չըլլար»:

Մկրտիչ աղբարի գլուխը պտտվում էր, ի՞նչ կանեին, եթե Չատիկը թուլանար և հրաժարվեր Հայրենից:

Բլուրի նեղ ճամփով իջնում էին կենդանու դան-
դաղ քայլերով: Աշնանավերջի ցուրտ քամին շարժում
էր ծառերի մերկ ճյուղերը, ցրիվ տալիս դեղնած
տերեւները: Մկրտիչ աղբարը դողում էր ցրտից և
սաքսոում այն դառն մտածումներից, որոնք լլկում
էին նրա հոգին: Գյուղը, որ այնքա՛ն մոտ էր, ան-
վերջ հեռանում էր կարծես, կենդանին ծանր բեռան
տակ կքած, այնքա՛ն դանդաղ էր քայլում: Բլուրի
լանջին տարածված էր գյուղը: Կղմինդրե տանիքների
մի խղճուկ կույտ էր այն: Տներն ասես վախից իրար
կողքի կուչ էին եկել ու նրանց վրա իշխում էր եկե-
ղեցու տարածուն ու ծանր սիլուետը:

Մկրտիչ աղբարը նայում էր դյուղին, նայում էր
եկեղեցուն, ու մտածում էր եպիսկոպոսի մասին: Թը-
վում էր, թե եպիսկոպոսի ուժն ու հեղինակությունը
անհաղթահարելի են, ընկճող, որին ոչ ոք ղեկադրել
չի կարող ու չզխտե՞ր, չէ՞ր ընկճվի արդյոք Չատիկն
այդ վիթխարի ուժի առաջ, չէ՞ր թուլանա... Գաղտա-
դողի նայում էր նրան՝ գուշակելու համար մտածում-
ները:

Իայց Չատիկը վրդովված չէր: Հանդիստ ու ան-
այլայլ ծխում էր, կամ բեխերը ոլորում՝ մերթ ընդ
մերթ ճիպտոտի թեթև հարվածներ հասցնելով կենդա-
նուն: Նրա քայլերի մեջ փութկոտություն կամ տաղ-
նապ չկար, աչքերը նույն քաղցր ու ժպտուն արտա-
հայտությունն ունեին:

Եպիսկոպոսի անունը լսելիս, Չատիկն անմիջա-
պես որոշել էր իր անելիքը. — չընկճվել ու չենթարկ-
վել կրոնական մեծավորի անվան հեղինակությանը,
զիմադրել մինչև վերջ ու անպայման, որպեսզի միան-
գամ ընդմիշտ պոկվեն իր բախտն ու ճակատագիրը
Մարիամի ու եկեղեցու հետ կապող վերջին թույլ կա-
պերն իսկ:

Իայց նա զգում էր, որ եպիսկոպոսի հրավերը
տաղնապ է առաջացրել իրենց տանը: Նա մտածում էր
միայն շուտ հասնել տուն և փարատել այդ տաղնապը:

— Որտե՞ղ են, — հարցրեց Չատիկը՝ ակնարկելով
Հայրենին ու Էլմասին, — ձեր տունն են, թե մեր տու-
նը:

— Մեր տունն են:

— Ինձի անանկ կուգա, որ շատ վախեցեր եք ա-
մենքդ ալ:

— Հայրենը վախցեր էր:

— Էլմա՞սը:

— Չէ՛, անիկա անքա՛ն չէ:

— Բո՞ւր Գո՞ւն, — հարցրեց Չատիկը՝ ուշադիր նա-
յելով Մկրտիչ աղբարին:

Մկրտիչ աղբարը գլուխը խոճարհեց:

— Չէ՛, ջանք՛, — ասաց նա, — ես ի՞նչ պի վախ-
նամ...

Չատիկը ծիծաղեց:

— Ամենքդ ալ վախկոտներ եք: Մարդ եպիսկոպո-
սեն կվախնա՞, մտիկա մեզի հետ ի՞նչ գործ ունի,
պա՞րաք ունինք իրեն, և հանցանք ենք գործեր: Ես
եպիսկոպոս-մեպիսկոպոս չեմ ճանչնար, պետք չի կար
ի՞մ ետևես դալու ինձի կանչելու համար:

Մկրտիչ աղբարը զարմացած մնաց:

— Անանկ է՛ նը՛ պի չերթա՞ս սրբազանին:

— Չէ, — ասաց Չատիկը՝ գլուխը թափ տալով:

— Ատանկ բան կըլլա՞...

— Կըլլա, ինչո՞ւ չըլլար:

Չատիկի շեշտը վճռական էր: Մկրտիչ աղբարին
թվաց, թե ոչ ոք նրան այդ որոշումից ետ դարձնել չի
կարող: Բայց նորից, վախով հարցրեց.

— Ետքը գեչ չըլլա՞ր...

Չատիկը որոշակի նկատեց Մկրտիչ աղբարի վա-
խը և հանդստացրեց նրան:

— Դուն հիչ մի վախնար, ետքը կտեսնես, որ շատ
աղեկ կըլլա: Ես գիտիմ քարը ո՞ր տեղեն է:

— Ո՞ր տեղեն է:

— Քարը Սոֆիկ հանքմին է:

— Էլմասն ալ ատանկ կըսես:

— Եպիսկոպոսը մեր դեղը դալուն պես կեթա Սոփիկ հանրմենց տունը: Գեղին ամենեն հարուստն անոնք են: Ես յանաչմայության օրերես գիտիմ... Սոփիկ հանրմը պատիվը պատիվի վրա կընե, սրբազանին ուզածն ալ աս է, քանի մը օր կմնա անտեղ, կուտե, կխմե, քեֆ կընե: Աս հեղուն ալ դացեր է, Սոփիկ հանրմ էրմասի խոսքերը մարսած չըլլալուն համար մեր խոսքն է բացեր եպիսկոպոսին, դեղին մեջ եղած խոսք-խորաթայի համար է խոսեր, ինքն ալ րսեր է, որ կանչե ինձի, համոզե... Ամա անոնք ո՛ր, ես ո՛ր... Եպիսկոպոս չէ, ասված ալ երկիրքես իջնա նը՝ փարա չըներ, ատիկա թող Սոփիկ հանրմը ադեկ գիտցած ըլլա:

Չատիկի շեշտն ավելի ու սոլելի վճռական էր դառնում:

— Իուն չես գիտեր, — շարունակեց նա, — ես հարուստներուն տունը քենե շատ եմ աշխատեր տե, ադեկ գիտիմ. — սերտեր, փարդապետ, եպիսկոպոս լավածնեքը հարուստի հրամանի տակ են, անոնց խոսքեն անդին չեն անցնիր, մեզի պես աղքատներու հետ գործ չունին:

— Իբա՞մ կըսես:

— Ըստ ի՞նչ գիտցար, — շարունակեց Չատիկը, — ասոր համար է, որ տերտեր-փարդապետ չեմ սիրեր: Ատոնք, ատեն մը երեսս ալ չէին ուզեր նայել, հիմա ինչո՞ւ կկանչեն... Նորեն հին բանե՞րը կուզեն խառնել, իրենց ո՞վ իրավունք տվավ իմ գործին խառնվելու: Ժամուն դուռը եթալ դալով իմ ոտքերը մաշեցան, ան ատեն ինձի չէին լսեր, ես ալ ուզածս ըրի, իմ խիղճս հանդիստ է, ես մեղք չեմ գործեր: Ես կարգված եմ, ասլանի պես կնիկ ունիմ, իրենցմե կնիկ չեմ ուզեր, թող ինձի՛ հանդիստ թողուն... Ինձի պսակմասկ պետք չէ, իրենց պսակն իրենց թող ըլլա, մեր պսակը մեր սերն է, հասկցա՞ր...:

Մկրտիչ աղբարը գոհունակությամբ նայեց Չատիկին ու ասաց.

— Հախ ունիս:

Էջը կանգ առալ զոան առաջ: Զատիկը ցած բերեց
բեռը և ասաց Մկրտիչ աղբարին.

— Գուն տուն զնա, զինին հաղբը ըրե, ես հիմա
կուզամ:

10.

Հայրենն ու էլմասը զոան շեմի վրա դիմավորեցին
Զատիկին: Երանց զեմքերից երևում էր, որ սաստիկ
տաղնապած էին: Տխուր ու անծպիտ, հուղարկավորի
տրամուխյամբ, նրանք նայեցին Զատիկին՝ աշխատե-
լով գուշակել տպավորութունը, որ անշուշտ եպիսկո-
պոսի հրավերը թողած պիտի լիներ նրա վրա: Բայց
Զատիկը սովորականից բարձր տրամադրությամբ դի-
մավորեց նրանց: Այդ տեսնելով, նրանք զարմանա-
խառն ուրախությամբ իրար նայեցին:

— Էլմաս, — ասաց Զատիկը, — զինին հաղբ՞ը է,
մսեր եմ, զինի խմել կուզիմ, որ տաքնամ:

Զատիկի այս խաղաղ վիճակը, ճայնի անխուղ
չեղան ու զեմքի անայլայլ հանդարտութունը հան-
կարձ արիությամբ լցրեցին երկու քույրերի հոգիներն
այն վտանգի հանդեպ, որով առավոտից ի վեր պաշար-
ված էին զգուժ իրենց: Տեսնում էին, որ Զատիկն այդ
վտանգը կատարյալ արհամարհանքով էր ընդունում՝
անվախ այն զորավարի նման, որ վստահ է հաղթանա-
կին՝ մարտի գնալուց առաջ: Բայց դիտմամբ, ստու-
գելու համար նրա գրության անկեղծութունը, իմա-
նալու համար, որ նա չի թաքցնում իրենցից իր եր-
կյուղը, էլմասն ասաց.

— Զատի՛կ, ամեն բան լմնցեր է, զինին է մնա-
ցեր, զիտե՛ս ինչու համար ենք կանչեր քեզի էգիեն:

Զատիկը, որ բարձրանում էր սանդուղքով, կանգ
առավ, նայեց էլմասին ու Հայրենին, և ասաց.

— Գիտի՛մ, ամեն բան գիտի՛մ, չըլա՞մ որ վախցեր
էք:

— Վախնա՛լը չենք վախցեր, — ասաց էլմասը վա-
րանոտ:

Ու հետո երկչոտ ու անվստահ, ասաց.

— Քեզի հարցնինք, դուն չես վախցեր:

Բայց Չատիկը խիստ հայացք գցեց էլ մասի վրա ու
ասաց.

— Դուն ինձի ո՞վ գիտցար:

Չատիկի գեմքը խիստ էր ու շեշտը հատու: Բայց
այդ խտուրթյան մեջ Հայրենն ու էլ մասը կարգացին
նրա կամքի ու վճռականության, նրա արիւթյան ու
հաստատակամության ուժը:

Մակայն էլ մասը հարկ համարեց ասել.

— Գիտցած եղիր, Չատիկ, որ աս գործին մեջ քիչ
մը ուրիշ բան կա...

— Ի՞նչ կա:

— «Ան մեկն» է կանչել տվեր:

«Ան մեկը» Մարիամն էր: Հայրենն ու էլ մասը
նրան այդպեա էին անվանում:

— Գիտիմ, — ասաց Չատիկը հանդարտորեն, — Սո-
ֆիկ հանրմն ալ անոր խլաղուղն՝ է, ամա Սոֆիկ հանրմ
չէ՛, «ան մեկը» չէ՛, ասված ալ կանչել աս նը, օգուտ
չունի, հասկցա՞ք...

Ու բարձրացավ սանդուղքով:

Սենյակում՝ Մկրտիչ աղբարը նստել էր օջախի
մոտ, սաները տարածած գեպի կրակը, որ վառվում
էր ճարճատյունով:

— Չանրմ, — ասաց նա Չատիկին, — ընձի ըսած-
ներդ ասոնց ալ ըսե, ընձի չին հավարնար:

Չատիկը ժպտաց ու նստեց Մկրտիչ աղբարի կող-
քին, ձեռները տաքացրեց:

— Մտեր եմ, — կրկնեց նա, — գիշին բերել տուր:

Մկրտիչ աղբարը գինի բերեց:

— Լեցուր:

Բայց Հայրենը տխուր ու անխոս կանգնել էր պա-
տուհանի մոտ:

— Սիրտդ ինչո՞ւ կհատցնես, աղջի, — ասաց Չա-
տիկը Հայրենին, — ինչո՞ւ կայներե ես հող՝ սգալորի
պես: Եկուր քովս նստե, մենք պարապ խոսքեր լսելու

¹ Պատմորդ, ուղի ցույց տվող:

վախի՞ք չունինք: Տեսա՞ր, քեզի համար աս ցուրտին-
բուքին էզի դացի, փատ բերի, առտուն ալ սոպա՛ մը
պի առնիմ, որ աղեկ մը տաքնաս: Հիչ բանի վրա մի
մտմտար, հանրմի պես ապրե: Եկուր օջախին մտա,
հող պաղ է:

Հայրենը մտտեցալ Չատիկին, նստեց նրա մտա ու
արմուկը դնելով նրա ծնկանը, հարցրեց.

— Եպիսկոպոսին պի չերթա՞ս...

— Չէ՛:

Այնքան ուժեղ էր ու վճռական նրա շեշար, որ բո-
լորն գզացին նրա անդառնալի վճիռը:

— Տեսա՞ք հիմա, — ասաց Մկրտիչ աղբարը հաղ-
թականորեն, — կըսեի, չէիք հավարնար:

Չատիկը վերցրեց գինու բաժակը, մի ուժպով դա-
տարկեց ու շրթները սրբելով, ասաց.

— Եպիսկոպոսո՞վ պի վախեցնեն ինձի, չէ՛, Քայ-
տա՞ չըներ, գինի լեցուր:

Ու դառնալով Հայրենին, ասաց.

— Քեֆդ մի ավրեր, աղվորս, մեզի իրարմե բաժ-
նողը տահա աշխարհ չի եկեր:

Հանկարծ տան դուռը խփեցին:

Հայրենը ցնցվեց:

— Ինչո՞ւ վախցար, — ասաց Չատիկը՝ շոյելով նրա
գլուխը, — ես որ կամ, դուն հիչ բանե մի վախնար:

Մկրտիչ աղբարը բաց արեց պատուհանը, դուրս
նայեց և ներս քաշվելով հայտարարեց վախեցած.

— Նորեն ժամկոչն է:

— Հողիս կվկայեր, որ ժամկոչն է, — ասաց էր-
մասը:

Իրորը ոտքի ելան, բայց Չատիկը, որ անշարժ
նստել էր տեղում, հանդիմանեց նրանց.

— Վախկոտանե՛ր, տեղերնիդ նստեցեք, տակն ու
վրա բլլալու պետք չիկա:

Ու ոտքի ելնելով, գնաց դեպի դուռը:

1 Վատարան

2 Չի օգնի

Բայց Հայրենը կանգնեցրեց նրան.

— Ի՞նչն մի եթար, քու եթարդ աղեկ չէ, թող քուրս եթա:

— Ինչո՞ւ:

պետք չիկա, դուք նստեցեք տեղերնիդ, ես կեթամ, որ Զատիկը հզինն չի եկեր...

— Ի՞նչ կըսեք, — նեղացավ Զատիկը, — ատիկա ըսել է, որ ես եպիսկոպոսեն կվախնամ: Սուտ խոսելու պետք չիկա, դուք նստեցեք տեղերնիդ, ես կեթամ, պետք եղածը կըսիմ:

Բաց անելով դուռը նա ցած իջավ:

Էլմասն ու Հայրենը դադտադողի հետևեցին նրան ու կանգնեցին սանդղքի գլխին՝ ականջ դնելով դեպի լակը:

Զատիկը բաց արեց դուռը և ասաց ժամկոչին.

— Բարով եկար, ժամկոչ աղբար, խե՛ր ըլլա, աս ի՞նչ հով փչեր է, քենուս տունն ես եկեր: Ներս հրամմե, ասիկա մեր տունին պես է, եկուր քեզի գինի մը հրամցնիմ:

— Զատիկ օղոււ, — ասաց նա, — գինին ետքը կխըմենք, աջելե՛ ըրե եթանք, քեզի կսպասեն:

— Ո՞ւր եթանք:

— Եպիսկոպոսը քեզի կկանչե, էլմասը չըսա՞վ:

— Ըսավ: Ե՞տքը:

— Ալ ի՞նչ ետքը: Եթանք:

— Ժամկոչ աղբար, — ասաց Զատիկը, — բարև ըրե քեզի խրկող սրբազանին ու ըսե, որ Զատիկը տունն է, ամա չի գար, չունքի՞² ատանկ պարապ բաներու հետ գործ չունի: Ըսե, որ Զատիկը քեզմե կնիկ չի ուզեր, ըսե՛, որ անիկա վարդի պես կնիկ ունի, ըսե, որ Զատիկի ձեռքեն մինակ ասված կրնա առնել կնիկը, հասկըցա՞ր...

¹ Շտապիր:

² Որովհետև:

Հայրենն ու Իրմասը սանդուղքի գլխից լսում էին
Չատիկի բառերը:

— Շախան՝ մեկդի, — ասավ ժամկոչը, — եթանք:
Բայց Չատիկը ձայնը բարձրացրեց.

— Ես չոջուխ չեմ, որ շախա ընիմ, ես մարդու
խոսք կընիմ քեզի: Մնիկա ինձի ո՞վ գիտցավ, — աս
սրբազանը: Մնանկ կերևա, որ զեմգեկին մեկն է: Գնա
առանկ ալ ըսե...

Ժամկոչը չպատասխանեց: Հետո դուռն ուժեղ փակ-
վեց: Հայրենն ու Իրմասն իրենց մատների վրա վազե-
ցին դեպի սենյակը, որտեղ Մկրտիչ աղբարը կուչ էր
եկել օջախի մոտ:

Սանդուղքի վրա լսվում էր Չատիկի ոտնաձայնը:

11.

Չատիկի տունը լցվեց փայտով: Նա վիթխորի
կազմին Չարդոտեց և մաս-մաս փոխադրեց տուն: Առա-
վտաները կանուխ վեր էր կենում, վառարանը վառում,
սենյակը տաքացնում և ասում էր կնոջը.

— Գուն պառկե, ես կովը կկթիմ:

Հետո կաթը տաքացնում էր վառարանի վրա, լրց-
նում բաժակը, դնում Հայրենի մոտ.

— Հիչ տեղեդ մի երերար, պառկած տեղդ խմե,
շաա խմե, դուն երկու հոգով ես:

Իրմասը համարյա ամեն օր այցելում էր քրոջը:
Հայրենը պատմում էր նրան մանրամասնորեն, Չատի-
կի հոգածության և դուրդուրանքի մասին:

— Մասս մոխիրը թաթխել չի տար, — ասում էր
նա, — առտուն աչքերս չի բացած, կաթը եփած կըլլա
ու պառկած տեղս կրերե ինձի:

— Ինիչտես² ոսկի է, ոսկի՛, գեղին մեջ մեկ հա-
տիկ է, ես ատիկա գիտեի, անոր համար քեզի կամե-
ցա, — ասում էր Իրմասն ուրախացած: Ու գնում
պատմում էր գյուղում՝ ծանոթներին և հարևաններին.

1 Հանար:

2 Քեռայր:

— Իմ էնիշտեիս պես մարդ տաճա չի ծնվեր, անոր պես կնիկ պահող կա՞, կնիանը վարդի պես կհոտախա, վրան թող չի նստեցներ:

Հայրենը լսում էր այդ և նեղանցւում.

— Աղջի, ինչո՞ւ կըսես, ետքը նազար՝ կրնեն:

— Մի նեղանա՞ր ազվորս, — ասում էր էրմասը, — ուրախացեր եմ, ատոր համար կըսիմ:

Երբեմն Չատիկն առաւում շուտ դնում էր կանչելու էրմասին ու Մկրտիչ աղբարին.

— Եկեք կաթ խմինք, — ասում էր:

— Ես չեմ գար, թող էրմասը գա, — ասում էր Մկրտիչ աղբարը, — ես չոջո՞ւնիս եմ, որ կաթ խմիմ: Էրմասը գալիս էր ու երեքով տաք սենյակում կաթ էին խմում և զրուցում:

Գուրաը ցուրտ էր ու քամի... Ծառերի մերկ ճյուղերը շվացնում էին, քամին թակում էր լուսամուտի փեղկերը, սուլում սաստկորեն: Գիշերը լուսամուտի ապակիների վրա նստած եղյամը հալչում էր վառարանի ջերմությունից, երևում էր փողոցը, որակզ մարդիկ անցնում էին ուսերը բարձրացրած մինչև ականջները, շտապաբայ, գրեթե վազելով, ու քամին սուրում էր նրանց եակից:

Շարաթ երեկոները Մկրտիչ աղբարը գալիս էր էրմասի հետ ու ամեն անգամ գինի էր բերում:

— Աս ալ իմ կաթս է, — ասում էր Մկրտիչ աղբարը՝ ու գինու շիշը տալով Հայրենին:

Հայրենը սեղան էր բացում, պանիր էր բերում և աղի ձուկ: Հացը կտրում էին, փռում սեղանի վրա և չորսով նստած ուտում էին, խմում ու զրուցում:

Հանկարծ Չատիկը հիշում էր տաաին: Տեսնում էր նրա բամբակի պես ճերմակ մազերը, փոսն ընկած ու կրակից գուրկ, բայց գորտիանքով լի աչքերը և հոգին ուռչում էր արցունքով: Գինու բաժակը ցած էր դնում, ընդոտս ոտքի էր ելնում, բերում էր խնկածուխը,

լցնում էր կրակով, դնում սեղանի վրա ու ասում էր
Հայրենին.

— Կտոր մը խունկ բեր Հայրեն, ողորմիս մը հա-
նիմ տատիս հոգուն, ասօր կիրականամուտ է:

Հայրենը բերում էր «կտոր մը» խունկ, գցում
կրակի վրա և խնկածուխից բարդ-բարդ բարձրանում
էր ծուխը, լցնում սենյակը քաղցր բույրով և հոգիներն
ու մտքերը «սպահ մը» վերանում էին: Բոլորը խաչա-
կընքում էին երեսները, չբխունքները լռելյայն բառեր
մրմնջում և սենյակում ծանր ու խորհրդավոր լու-
թյուն էր տիրում:

Հետո խնկածուխը հանդցնում էին և նորից վերց-
նում էին բաժակները:

— Հի՛չ չի մոռնար, — ասում էր Հայրենն էլժա-
սին, — ամեն կիրականամուտի ասանկ կընե:

— Ասիկա քառսուն ժամ-պատարագ կարժե, — աս-
ում էր Չատիկը:

Ու նորից վերցնելով բաժակները, շարունակում
էին գրուցել:

Նրանք ծրագրում էին գարնան աշխատանքների
մասին, երբ ձյունը հալչեր և արևը շողար: Ինչքա՛ն
բան կար անելու... Այդու չորս կողմը թթենիներ և
ընկուզենիներ պիտի տնկեր, հետո այգին փորելն էր,
էտելը, հողար գործ կար: Երբ գարունը բացվեր, Չա-
տիկը գլուխը քորելու ժամանակ չէր ունենա:

— Քեսթանեխն՝ ծառն աս տարի աշլամա՞ պի դնիմ,
ի՞նչ կըսես Մկրտիչ աղբար:

— Քանի՞ տարվա է:

— Չորս:

— Վախիթն է:

— Քեսթանեխն ծառն աշլամա դնելը գոտ է կըսեն,
ամեն մարդ չի կընար դնել, չեմ գիտեր որո՛ւ դնել
տամ, ո՞վ է վարպետ մեր գեղին մեջ:

— Վարպե՞տ կինտրես, — ասում է էլժասը, — ա-
տոր վարպետը քովդ նստեր է:

1 Շաղանակ:

2 Գատպատ

Չատիկն ուրախ զարմանքով ժպտում էր Մկրտիչ աղբարին.

— Իրա՞վ կըսես:

Մկրտիչ աղբարը ինքն էլ է ժպտում ու հպարտությամբ.

— Չէի՞ր գիտեր, — ասում էր, — աս դործին մենչո՞ւր՝ վարպետը ես եմ մեր դեղին մեջ:

— Չէի գիտեր...

Ու նորից խմում էին քաղցր գինին՝ շարունակելով հանդարտորեն զրուցել, երբ գրտում սառնամանիք էր, քամի, ու ամեն կողմ ծածկված էր ձյունով:

Երբեմն հանկարծ հիշում էին եպիսկոպոսի հրավերն ու Չատիկի մերժումը: Սյն ժամանակ բ. շորի գեմքերը լրջանում էին, որովհետև հիշում էին այդ հրավերի ու մերժման հետ կապված մեղադրանքներն ու բամբասանքները:

Ինչպիսի անախորժություններ չհաջորդեցին Չատիկի մերժմանը...

Սրբազանը սաստիկ գայրացել էր՝ ժամկոչից իմանալով, որ Չատիկը հրաժարվում է դալ իր մոտ: Ակնոցների ետևից նրա սև աչքերը փայլել էին կատաղությամբ, նա հոնքերը պռստել էր և սկսել ջղայնորեն խոսել երկար մորուքը՝ ետ ու առաջ շրջելով սենյակում, կուրծքի վրա թափթփված մորուքի ճերմակ թելիկները մեկիկ-մեկիկ թափ տալով:

— Ինչպիսի՞ մարդ է, աս Չատիկը, — հարցրել էր կողքի մարդկանց, — ատիկա քրիստոնյա չէ՞, փութփերեստ է, ի՞նչ է:

— Փութփերեստ որ չըլլար, ատանկ բան կընե՞ր, — ասել էին աղաները, որոնք շրջապատում էին եպիսկոպոսին:

Պատարազի ժամանակ, քարոզ տալիս, եպիսկոպոսը չէր մոռացել Չատիկին.

— Մեր դժբախտությունների պատճառը մեր մեղքերն են, աստված տեսնում է այդ բոլորը և հաշվի

1 Արարիկն մեշուր բառի աղավաղյալը — հայտնի, նշանավոր

առնում... Քաղաքներում նկատվող մոլորությունները
փոխադրվում են մեր նահապետական դյուղերը: Ապո-
րինի ամուսնություններ, առանց պսակի իրար անել-
նատիլներ և զանազան այլ անսակի խորթ բարքեր քրիս-
տոնյային վայել են... Սակայն ամենուրեք աստուծո
համբերությունն էլ սահման ունի ու եթե նրանք դար-
ձի չզան, առավաժ կպատժի այդպիսիներին՝ ամենայն
անպարտությամբ:

Սրբազանի քարոզի մասին խոսվել էր զյուզում
օրեր ու շաբաթներ: Չատիկն ո՞վ էր, որ սրբազանին
ընդդիմանար, հրաժարվեր նրա հրավերին պատասխա-
նել, քանի՞ վլխանի էր, դիմացինը ժամկո՞չ էր, թե
տիրացու: Չատիկին անվանում էին դինսիղ¹, բուզա-
լա՞, որ մի կնոջ համար հավատքն ու կրոնքն ուրա-
ցա՞վ: Վաղը մյուս օր զախակ որ ունենար, ի՞նչ պիտի
անեին, մոլլայի² ո՞չ պիտի տանեին սյուննեթ³ անելու:
Լսողներն ահանջները փակելով, բացահանչում էին.

— Աման տալաժ, տունե-տեղե հեռու ըրե առանկ
բաները:

— Ատ քարոզը մեր գեղացին պի չի մոռնա, — ա-
մեն տղա, ամեն աղջիկ ահանջին օղ պի ընե սրբազա-
նին խոսքերը:

— Ատանկ ալ քարոզ կըլլա՞ր, բերանեն մարդերու
կթափեր:

Բաժակները ձեռներին, հիշում էին եպիսկոպոսի
քարոզի հեռ կապված այդ բոլոր անախորժություննե-
րը և նրանց դեմքերը մթնում էին, մոռայվում:

— Ատ ամենը խառնողը Սոֆիկ հանրմն էր, — ա-
սում էր էլմար:

— Շատ աղեկ, ամա, — ասում էր Չատիկը բաժա-
կը ցած դնելով, — խառնողին ձեռքը բան մը անցա՞վ,
անիկու մերամին⁴ հասա՞վ:

— Անցած օր դրացիներս կըսեին, որ Սոֆիկ հանը՝

1 Անկրոն:

2 Խելագար:

3 Մահանդական կրոնավոր:

4 Թլխասեր:

5 Եպատակին:

մը գործը պատրիարքարան պի հասցնե եղեր, — առում էր հիմարը:

Չատիկը ծիծաղում էր Ղլայտրենն.

— Աստծո՛ւ, աստծո, թող հասցնե, ամա թող դիտնա, որ նորեն ձեռքը բան չանցնիր, հասկցա՞ր:

Հայրենը նայում էր Չատիկին՝ վախեցած պատրիարքարանի անունից, որի ինչ լինելը լավ չէր իմանում, բայց զգում էր նրա հեղինակութունը:

— Պատրիարքարան բսածնիդ եպիսկոպոսեն մե՞նծ է, — հարցնում էր նրա՛վախով:

— Մե՛նծ է, — պատասխանում էր Մկրտիչ աղբարը լրջությամբ, — ամա անկե մենծն ալ կա:

— Ո՞վ է:

— Կաթողիկոսը:

— Անիկա ո՞ւր է:

— Անիկա էջմիածին կնատի:

Այն ժամանակ Հայրենի գլուխը պտտվում էր, աչքերը մթաղնում էին ու վախեցած հարցնում էր Չատիկին.

— Բան չե՞ն կրնար բնել...

— Քեզի իզմե բաժնողը տահա աշխարհ չի եկեր, աղվորս, դուն քեֆդ մի ավերեր:

Չատիկի պատասխանը վստահություն էր ներշնչում Հայրենին և նա հանդատազած լցնում էր բաժակները և խոսքն ուղղելով քրոջն ու Մկրտիչ աղբարին, առում էր.

— Հիչ բան չի կերաք, միտաֆի՞ր՝ եք, ի՞նչ է, որ «կերեք» ըսիմ:

Սակայն Չատիկը Ղլայտանում էր եպիսկոպոսի ու քարոզի մասին հիշելիս:

— Նորեն ո՞րտեղեն բացվեցան աս խոսքերը:

Եվ բաժակը դատարկելով, բռունցքով սրբում էր չուրթերը, բեխերը ոլորում ու առում կնոջը.

— Ասված ցավ չի տա տե, դուն բարով խերով ազատվիս, ուրիշ բան պետք չէ...

Մկրտիչ ազգաբը, որ զգում էր Չատիկի Ղլայնությունը, մեղմությամբ ասում էր.

— Ասո՛ր վրա մամտանք, ուրիշ բան պետք չէ:

Մակայն Հայրենը տրամում էր, երբ խոսք էր լինում երեխայի մասին: Նա հիշում էր Աննա մարի և Սոֆիկ հանրմի չար դեմքերն ու նրանց սպանալիքը, թե՛ «չոջուխն անկնունք պի մնա»:

— Ապօրծինը՝ ո՞վ կկնքե, անպսակ մարդուն չոջուխը չեն կնքեր, օղուլ:

Չատիկը չգիտեր այդ, Հայրենն զգուշանում էր նրան ասել այդ մասին, բայց այդ միտքը որդի, պես կրժում էր նրա սիրտը և հաճախ առանձնության պահերին նա լաց էր լինում թաքուն:

Էլմասը սակայն մխիթարում էր նրան.

— Դուն հիչ հողդ մըներ, ես չոջուխն անկնունք չեմ թողուր:

— Ի՞նչ կրնես, որ անկնունք չեմ թողուր կրես, — հարցնում էր Հայրենը մասհոյ:

Էլմասը հայտնում էր քրոջն իր ծրագրերը: Էլմասն այդ մասին վաղուց էր մտածել, խոսել էր ու խորհրդակցել Սրբուկ մարի հետ: Սրբուկ մարը, որ «Մտամբող դացած եկած» կլն էր, տարիներով խզմեթքյար եղած, հազար տաք ու պսոգ քաջած, խոստացել էր էլ մասին՝ երեխային տանել Մտամբող և այնտեղ կնքել տալ:

— Ասոր համար հիչ մի մտմտար, — ասել էր Սրբուկ մարը, — տահա կուզես նր՝ հանրմիս էրիկն ալ կնքահար կրնիմ:

Այս մասին հաղորդելով Հայրենին, ասում էր.

— Ըստ ի՞նչ գիտցար, դուն որ կեթայիք, ես կուզայի...

Հայրենն սիրտովում էր ու խնդությամբ մտածում երեխայի մասին: Գարնան սկզբին երեխան պիտի ծննվեր: «Անիկա ազվոր աչքեր կունենա և ճերմակ-կաշի կըլլա»՝ իր պես... Ու մի առավոտ երեխուն «կթոցնեն, կտանեն Մտամբող, Սրբուկ մարի հանրմի էրիկը անոր

կնքահարը կըլլա», ու կնունքի թուղթը գրպանը դրած կվերադառնա գյուղ, և այլևս ոչ ոք գյուղի մեջ չի համարձակվի իր կնքված երեխային ապօրժին անվանելու...

12.

Հայրենի ստներն ուռչում էին:

— Մոցվորության ատեն ատանկ բաներ կըլլան, — ասում էր էլմասը քրոջը, երբ նա դարձացած ու փախա՛յց ցույց էր տալիս ստները:

Իսկ Հայրենը վախենում էր, ուստի մի օր էլ մասի հետ դիմեց Չատիկին՝ առաջարկելով բժիշկ կանչել:

Չատիկը կարուկ կերպով մերժեց այդ առաջարկը:

— Ի՞նչ կնկա մարմինը տոբթո՞ր չի կրնար տեսնել, — ասաց նա, — տոբթո՞ր կուզե՞ք՝ Սրբուկ մարին կանչեցե՞ք, Սրբուկ մարեն աղեկ տոբթո՞ր կա, անիկա Մառմբուլ գացած-եկած կնիկ է, անոր խելքն ամեն բանի կհասնի: Անցած տարի Մաննիկ քուրի հարսն անիկա չազատե՞ց... Հաջոր մահվան դուռն էր հասեր, տոբթորը ամիս մը գնաց-եկալ, բան մը չկրցա՛վ բնել, Սրբուկ մարը գնաց, երկու օրեն ոտքի կայնեցուց: Սրբուկ մարեն աղեկ տոբթո՞ր կա:

Չատիկի կամքը հրաման էր:

— Ես գիտեի, որ ատանկ պի ըսես, — ասաց Հայրենը հնազանդությամբ:

Ու դարձա՛լ քրոջը.

— Անանկ է նը, Սրբուկ մարին կանչե՞ք:

Եվ էլմասը գնաց Սրբուկ մարին կանչեց տուն: Ես եկա՛լ, քննեց Հայրենին: Ականջը դրեց փորին, կոպերը բաց արեց ու նայեց աչքերի մեջ, հետո ստները քննեց, չփեց-չիչփեց և հայտարարեց.

— Չեյիկի՛ պես է, հիշ բան չունի, աղեկ որ տոբթոր չէ՞ք կանչեր, փարանուղ մեղք կըլլար:

1 Գողգամ:

Բայց Հայրենը հարցրեց.

— Ըստ ինչո՞ւ համար սաքերս կուսեցի՞որին, Սըրբուկ մար:

— Ծոցլորության ատեն ատանկ բաներ կըլլան, օղու, մի վախնար, ատիկա մարդուկ նաթուռային՝ է:

— Տեսա՞ր հիմա, — ասաց էլմասը հաղթահանորեն, — ես չէի՞ ըսեր:

Հետո դառնալով Սրբուկ մարին, հարցրեց.

— Ե՞րբ կազատվի:

— Ապրիլին չոջուխն աշխարհ կուզա:

Հայրենն ու էլմասը երեխու շորեր էին կարած իսկ Մկրտիչ աղբարը նստել էր օջախի մոտ՝ ոտները տարածած դեպի կրակը:

Սրբուկ մարը դիտեց երեխու շորերը և ասաց.

— Թեզնիքներուն կողմակ մի դնեք, լան կարեցեք, թող չոջուխն ազատ մեծնա:

— Ստամբուլ թեզնիքներուն կողմակ չե՞ն դներ, Սրբուկ մար, — հարցրեց Հայրենը:

— Հոն չոջուխի լաթերը չեն կարեր, — պատասխանեց Սրբուկ մարը, — մաղաղաներեն հազրը կառնեն:

— Անոնք հարուստ են, ատոր համար մաղաղաներեն կառնեն, — ասաց Հայրենը, — մեզի պես մարդը մաղաղայի դի կրնա՞ եթալ:

Հետո հրճվազին մտածելով դեպի Ստամբուլ իր կատարելիք ճանապարհորդության մասին, բացակայեց.

— Ամա ասված խրամեթ² ընե տե, մենք ալ Ստամբուլ եթանք նը, ես ալ մաղաղային չոջուխիս համար լաթ պի դնիմ:

— Ինչալլա՞:

Տան դուռը բախեցին:

— Չատիկն է, — ասաց Մկրտիչ աղբարը՝ դուրս նայելով պատուհանից, — էլմա՛ս, դնա դուռը բաց.

1 Բնություն

2 Արժանի

դուն ալ, Հայրեն, կարդ ձգե ար, սեղանը դիր, գինիին շիշեն ալ բեր:

— Գինիին շիշեն հիշ չես մտնար, ասաց էլմասը դժգոհ:

— Ձե՞ս տեսներ դուքսն ինչ բորան՞ է, — ասաց Մկրտիչ աղբաշը, — գինին հիմա որ չխմինք, ե՞րբ պի խմինք:

Չատիկը ներս մտալ՝ իր հետ բերելով սառնության ալիք: Նրա շորերը կեղտոտ էին և ամբողջութեամբ յուզի մեջ թաթախված:

— Յաղհանե՞ն՞ կուգաս, — հարցրեց Սրբուկ մարը՝ նայելով Չատիկի յուզուտ շորերին:

— Հա, — ասաց Չատիկը, — հոնկե կուգամ: Աս տարի, նորեն Մարտիրոս աղան կանչեց, աս եղավ իրեք տարի, ձմեռները անտեղ կրանիմ:

— Մարկոսը չարաթ մըն է, տուն չի եկեր, հիմա ո՞վ գիտե անոր լաթերը ի՞նչ եղան:

— Ան ալ աղտոտեր է, ամա ժամանակ չունի տուն գալու: Ես ալ ժամանակ չունիմ, ասօր ալ եկեր եմ նը, քեզի համար եմ եկեր, դուն չըլլայիր նը, չի պի դայի: Ինչպե՞ն է Հայրենը, նայեցա՞ր ոտքերուն:

— Հիշ բան չունի, ջանք, չելիկի պես է, — ասաց Սրբուկ մարը: Ան է, կըսեի քիչ մը առաջ, աղեկ որ տոբե՞նք չեք կանչեր, փարանուդ մեղք կըլար:

— Ոտքերու ուռեցվորութեանը ինչե՞ն է:

— Ոտքերու ուռեցվորութենեն հիշ մի վախնաք, ատիկա մարդուս նաթուռային է:

Չատիկը վստահացավ ու հարցրեց.

— Ըսե նայիմ, Սրբուկ մար, մա՞նչ է, թե՞ աղջիկ:

— Ատիկա ասածն գիտնալիք բանն է, — ասաց Սրբուկ մարը, — ամա նշաններեն անանկ կերևա, որ մոնչ է:

Չատիկն ուրախացած նստեց սեղանի մոտ:

Մթնելու մոտ էր: Դեռ բուքը չէր դադարեր, դրը-

1 Բուք:

2 Չիթանան:

սում սառեցնող քամի էր: Փողոցով անցնում էին ժամ-
վորները, կանայք սպիտակ գլխաշորերի մեջ փաթաթ-
ված, ցածրաձայն խոսակցելով, սրտերն ու մաքերը
պարուրված խունկի բուրմունքի և օրորող եղանակների
ընդարմացուցիչ տրամությամբ, երբեմն կանգ առնելով
փողոցի անկյունում, հազարով սառեցնող քամու դեմ,
որ փչում էր սաստիկորեն: Նրանց մոտով անցնում էին
աղամարդիկ՝ ձեռները դատի ծալքերի մեջ խրած,
ակամջները փաթաթած գույնզգույն թաշկինակով, Փե-
սերը պարկեզաօրեն իջեցրած մինչև ճակատի մեջտեղը:
Սրբուկ մարը, որ պատուհանի մոտ էր նստել, դի-
տում էր փողոցով անցնող ժամվորներին:

— Ժամեն ելիք են, — ասաց նա՝ շարունակելով
դուրս նայել:

Հետո դառնալով էլմասին, հարցրեց.

— Աղջի էլմաս, ասօր ի՞նչ է:

— Ասօր շարաթ է, առտուն բարեկենդան:

— Ատանկ ըսե, ատօր համար դուրսը լեցուն է
ժամվորներով:

Հետո երեսը խաչակնքելով, ասաց.

— Մեղա տե՛ր, ժամ-պատարագ մոռցեր ենք:

— Ժամն ու պատարագը մարդուս սիրտն է, — ասաց

Չատիկը:

— Ատանկ է, — պատասխանեց Սրբուկ մարը, — ա-
մա ժամն ալ պետք է:

Եվ դառնալով Հայրենին, հարցրեց ցածրաձայն.

— Հաղորդություն առե՞ր ես:

— Չէ՛, — ասաց Հայրենը տրամօրեն, — աստեղ ինձի
հաղորդություն չեն տար կրսեն, օրերը որ տաքնան,
Չատիկն ինձի էջով Քարձի պի տանի, հոն պի հաղորդ-
վիմ:

— Ատանկ ըրե, — ասաց Սրբուկ մարը, — հաղոր-
դությունը թեթևություն կուտա մարդուս, անհաղորդ
մնայն աղեկ չէ:

Երեք տարուց ի վեր, ձմռանը, երբ ձիթահանման աշխատանքն սկսվում էր դյուղում, Չատիկը գնում էր աշխատելու Մարտիրոս աղայի յաղհանեում:

Գեկտեմբերին Մարտիրոս աղան կանչում էր Չատիկին և պայմանավորվում աշխատանքի համար:

— Քանի ես ողջ եմ, — ասում էր աղան, — իմ յաղհանեն դուն պի աշխատիս:

Չատիկի ինքնասիրությունը շոյվում էր այդ խոսքերից:

Ամեն ձմռան, երբ ուրիշները սրճարանների անկյունը պարսպ ժամանակ էին անցկացնում՝ սուրճ խմելով կամ նարդի խաղալով, իր համար սրտաբաստի աշխատանք կար, դիտեր, որ Մարտիրոս աղան իր երկարամյա յանաչմային՝ Մարկոսին, պիտի ուղարկեր իր մոտ՝ կանչելու և պայմանավորվելու, ինքն էլ «մեկին երկուքին» չէր նայում, ընդունում էր առաջարկը: Ի՛հ աղա մարդ է «պելքի օր մի պեռք կըլլա»:

Չատիկի աշխատանքը ծանր էր: Աղան դիտեր իր գործը: Չատիկից բացի, ուրիշ ո՞վ կարող էր տանել այդ դժվարին աշխատանքը: «Յաղհանեի գործն ամեն մարդու բերնի բանը չէ»:

Ու Չատիկն ամեն առավոտ, լուսումութիւն գնում էր յաղհան: Աշխատանքը տևում է առավոտից մինչև կես գիշեր: Գիշերներն էլ մասը մնում էր քրոջ մոտ: Հայրենն արդեն «ծանրացել» էր, նրան չէր կարելի մեծնակ թողնել:

Աշխատանքը տաժանագին էր, բայց Չատիկը սիրով էր կատարում: Նրան ոգևորում էր վարձատրության հեռանկարը: Երեխու աշխարհ գալը ծախսի հետ էր կապված: Ծանապարհորդություն դեպի Ստամբուլ հետո նրա կնուներն այնտեղ՝ մաղազայեն չորեր գնելը, որով այնքա՛ն ոգևորված էր Հայրենը, «ասոնք խոսքով

չեն բլար, չոջուխ ունեցողը քեսեին՝ բերանը լան պի բանա, չախա չէ»:

— Չոջուխի կնուռքի համար քանի մը ոսկի ծախք կըլլա, գիտե՞ս, — հարցնում էր Հայրենը:

— Գիտի՛մ, — ասում էր Չատիկը, — ատանք ամենը ես առաջվրնե հիսապ՞ ըրեր եմ, դուն հոգդ մի բներ:

Աշխատանքը ծանր էր: Գիշերը տուն վերադառնալով, անմիջապես պառկում էր և քնում մեռելի պես:

Առաջնության դարձնում էր հավախոսին, դուրս էր գալիս անից, գնում յաղհանե, թափում էր մեծ դուռը, Մարկոսը բաց էր անում ու Չատիկը մանում էր ներս: Պղինձները լցնում էր ջրով ու կրակը վառում: Մարկոսն ու ինքը նստում էին կրակի դիմաց, «հայր-մերի մը չափ», հացը տաքացնում էին կրակի վրա և ուտում պանիրով կամ աղը դրած ձիթապտուղով: Հետո երկուսով վեր էին կենում, ձիթապտուղի կթոցները դատարկում էին չրջանաձև ու գոգալոր պատվանդանի վրա, ուր կանգնած էր ծանր ու հսկա երկանաքարը: Մարկոսը բերում էր ձիերը և լծում քարին: Չատիկը ձեռք էր առնում երասանները, մտրակը շաշում էր ձիերի կոնակին և քարը պտտվում ձիթապտուղի դեզի վրա, ջարդոտելով, ձմլելով, խմոր դարձնելով այն:

Չատիկը ժամեր շարունակ պտտվում էր ձիերի ետևից, չրջանաձև պատվանդանի շուրջը, մտրակը իրած զոտի ծալքերի մեջ, փայտյա թիակը ձեռին, որով քարի բերանն էր տալիս երկանաքարի տակից խուսափող հատիկները, որպեսզի ոչ մի հատիկ չմնա տոանց ձմլվելու, որպեսզի հաճախորդը չնեղանա իրենից:

Վիթխարի ու սև երկանաքարը, ուղղհայաց դիրքով կանգնած, թավալվում էր առանցքի շուրջը: Հաճախորդները դեռ չէին եկել, յաղհանեում ինքն էր միայն ու Մարկոսը, և լուսթյան մեջ լսվում էր ձիթապտուղի կորիզների ճրթճրթյունը, վառվող փայտերի

1 Բոակ:

2 Հաշիվ:

ճարճատյունն ու ձիերի սմբակների դոխյունը հատա-
կի վրա:

Երբ գողավոր պատվանդանի վրա ձիթապտուղի
հատիկներից խմորաձև զանգված էր գոյանում, նա
Մարկոսի օգնութեամբ փոխադրում էր այն մագե տոս-
րակների մեջ, կասում էր տոպրակների բերանը, դար-
սում էր նրանք իրար վրա, դնում մամլի տակ, տաք
ջուրն առատորեն թափում նրանց վրա ու մամուլի լծա-
կը պտտում, տոպրակները ձմլում, պինդ, ուժեղ,
մինչև որ նրանք քամվեին, տափակեին, ձիթայուղը
թափվեր նրանցից հեղեղի պես, ավազանի մեջ, լճա-
նաթ այնտեղ:

Եվ այդպես, ամեն օր, առավոտից մինչև կես դի-
շեր, անդադար ու միակերպ, շաա անգամ ճաշը յաղ-
հանեում անելով, «պատառ մը հաց ուտելով», պանի-
րի հետ կամ «գիքա՝ մը աղի ձուկ», պատվանդանի վրա
նստած, ձիերի, կողքին, սրունք կեր էին ուտում, Ժա-
մանակ չունենալով մինչև իսկ «թութուն մը փաթթե-
լու», կամ բեխերը ոլորելու, թևքերը մինչև արմունկ-
ները քշտած, չորերն ու մարմինը յուղի մեջ կորած:

Հաճախորդները զալիս էին: Գյուղի ամբողջ ձի-
թապտուղը թափվում էր Մարտիրոս աղայի յաղհանեն,
մարդիկ հերթի էին կանգնում իրենց բռններով, կթոց-
ները շարված էին իրար ետևից, պատերի եղբերին,
յաղհանի մեծ դռնից մինչև ներսը, մութամբարը:
Տերերը կանգնած կողքերին, շտապեցնում էին.

— Թեզ ըրե, Չատիկ:

Չատիկը ո՞ր մեկին հասներ, աշխատում էր ան-
դազար, հեխհե, հողին բերանն էր զալիս, բայց ինչ
արած, ո՞ր մեկին հասներ, ախր դա մեկ հողու գործ
էր:

— Չատիկ, աղեկ քամե տոպրակները:

Չատիկը սեղմում էր մամուլը վիթխարի իր ու-
ժով, սրունքները դեմ տված հողի մեջ խրված ցիցե-
րին, իրանը երկու տակ արած, մեջքի մկանները
պրկվում էին, ձգվում, բազուկներն ուռչում պայթե-

լու չափ: Աւ երբ սեղմումը հասնում էր իր սահմանին, Չատիկը հանում էր մամլի ստեծը, փոխում էր անցքը և նորից սեղմում՝ մկանունքների ավելի պինդ լարումով:

Սչխատանքի դժվարությունը Չատիկը լավ էր պատկերացնում: Աղայից խնդրեց մի օգնական տալ իրեն, բայց աղան մերժեց և որպես վերջին զիջում, մեկ ոսկիով ավելացրեց վճարը:

— Քու օգնականը Մարկոսն է, — ասաց նա, — ինձի պաշխա՝ մարդ պետք չէ, ես քեզի էմնիեթ² ունիմ, իննի տեղ տասը ոսկի կուտամ, տահա ի՞նչ կուղես:

Չատիկը համաձայնվեց:

Ու այսպես վաղ առավոտից մինչև կես զիշեր աշխատելով, հողին բերանը եկած, գալիս էր տուն պտտկելու:

Էլմասը բաց էր անում դուռը: Հայրենը քնած էր լինում: Նա շատ անգամ չէր էլ դարթնում, քնում էր հրեշտակի պես հանդարտ ու խոր:

Ճրագի ազոտ լույսով Չատիկը դիտում էր կնոջը, որի սիրուն պչուխը հանգչում էր ճերմակ բարձի վրա, առատ ու սև մազերը փռած, շողում էին լույսի տակ երենոսի փայլով, պարուրելով ճերմակ ճակատն ու պարանոցը:

Չատիկը քայլում էր գգույշ, օտքի մասների վրա ու երբ էլմասն ուզում էր դարթեցնել Հայրենին, Չատիկը ցուցամատը տանում էր շրթներին ու շնջում:

— Սո՛ւս, մի արթնացներ, մեղք է, թող քնանա...

Հետո հարցնում էր.

— Ինչպե՞ս է, աղե՞կ է:

— Աղեկ է, ամա ասօր գլտես աք ձեռքերն ալ քիչ մը ուռեցվորեր են:

Ու ցույց էր տալիս Հայրենի ձեռները, որոնք վերմակից դուրս էին բնկած:

¹ Ուրիշ

² Կատանություն

— Նա՛յե, — ասում էր էլմասը, — չե՞ն ուռեցվորած:

— Աչքիդ կերևա, — ասում էր Չատիկը:

— Ի՞նչ երևալ, մեղա՛ ասված:

— Աղե՛կ, — պատասխանում էր Չատիկը, — թող քեզ մըն ալ ուռեցվորած ըլլան, ի՞նչ ընինք, «ուռեցվորութունը մարդուս նախուռայեն է», բայց Սերբուկ մարը, չլսեցի՞ր:

— Գիտիմ, — ասում էր էլմասը, — ամա տղթոր մը բերել տանք նը՝ աղեկ կըլլա...

Չատիկը ջղայնանում էր.

— Աս խոսքը մեյ մըն ալ չընես:

էլմասը լռում էր:

14.

Սև ու վիթխարի երկանաքարը պտտվում էր պատվանդանի վրա՝ ճմլելով, կտորատելով ձիթադուղի հատիկները: Ձիերը քայլում էին գանդաղ, գլուխները կախ, կարծես զեռ կես-ջուն վնեն: Նրանց ետևից Չատիկը գնում էր հանդարտաքայլ ու մտածկոտ, երբեմն ծուլորեն ու անկամ շարժելով թիակը՝ խուսափող հատիկները քարի բերանը տալու համար: Թիակը շարժելիս, ձիերը ցցում էին գլուխները, ընդոսս քնից արթնացածի պես ու վազում, բայց Չատիկը ձիդ էր տալիս փոկերը և ձիերը հանդատանում էին: Առաստաղից կախված նայլթի մրոտ լամպը, արյունոտամ աչքի պես, շառագույն լույս էր արձակում չորս կողմ և նրա լույսից խաղում էին պտտվող երկանաքարի ու ձիերի սովերները: Նրանք երբեմն երկաբուռում էին, բարձրանում մինչև առաստաղը, հետո կարճանում, իջնում էին գետին ու նորից բարձրանում և այսպես անընդհատ:

Ի՞նչ լավ էր, որ հաճախորդները չէին եկել, Մարկոսն էլ ամբար գնաց՝ թողնելով իրեն առանձին, իր մտքերի հետ: Աշխատելու սիրտ չունի, ձիերի և

տևելից զնուժ էր մեքենայարար, հատիկները խուսա-
փելով քարի տակից, բարձրացել հասել էին մինչև
պատվանդանի եզերքը և հաս-հաս ընկնում էին ցած,
որոնք նա ձմլում էր ոտներով: Ի՛նչ փուլթ: Կթոցնե-
րը պատվանդանի վրա դատարկելուց առաջ, քիչ մը-
նաց օջախները վառեր առանց պղինձները ջրով լցնե-
լու: Մարկոսն զգուշացրեց: Անկամ ու տխուր քայլում
էր ձիերի ետևից: Կոտրատվող հատիկների ճրթճրթ-
թյունն, վառվող փայտերի ճարճատյունը անախորժ
էին հնչում ահանջին, սրտնեղություն տալիս: Ինչ որ
ծանր բան նստած էր սրտի վրա, քարի պես:

Ահա ձիերի և երկանաքարի սավերները նորից
բարձրացան պատնիվեր, դեպի առաստաղը, հետո ի-
ջան արագ դեպի ցած: Ինչո՞ւ են բարձրանում նրանք
և իջնում, ամեն օր այդպես չէր լինում: Չատիկը եր-
բեք չէր նկատել: Ակնապիչ դիտում էր սավերների
խաղը: Չգուժ էր երասանները, կանգնեցնում սավեր-
ներն ու դիտում: Ահա ձիերի մարմինը, գավախներն
իրար կողքի ու ջրվեժի պես վար թափվող ապինները:
Հետո գլուխները բարձր ու ահանջները ցցուն, պատ-
նիվեր: Մարտափելի ու գարշելի են այդ ահանջները
իրենց գեղի տոբթորի ցցուն բեխերի նման:

Չատիկը փակում էր աչքերն ամեն անգամ, երբ
ձիու ահանջների սավերները ցցվում էին պատի վրա:
Իայց մտածումը մնում էր իր հոգու մեջ, սարսուռի
պես պաղ ու գալարուն: Օջախի մեջ վառվող փայտե-
րը ճարճատում էին՝ շառագույն լույսով ներկելով
հեռուն, պատերն ու կթոցները, որոնք շարված էին
իրար ետևից, արձանացած զինվորների նման:

Հեռվում, ամբարի խորքից լսվում էր Մարկոսի
հաղը և տակառների ու կթոցների ազմուկը: Եվ այդ
բոլորի վրա, ձիերի սմբակների, համաչափ ու միա-
կերպ դոփյունը: Չատիկը մոլորվել էր մտքերի մեջ:
Ամուսնությունից ի վեր երբեք այդպիսի դառն ու ճրն-
չող մտածումներ չէր ունեցել: Սև ու սպառնազին նը-
րանք շարվում էին նրա գլխի մեջ, կուտակվում,

ճնշում սիրաբ և նրանցից փշաքաղվում էր մարմինը: Չատիկը չէր մոռանում էլմասի խնդիրքը: Ի՞նչ, Չատիկն իր կնոջ համար տոքթո՞ր բերի... Գյուղի Չահել տոքթորը դա կանգնի իր ծոցվոր կնկա կողքին և սաի նրան.

— Ծոցդ բաց, փորդ սեսնեմ, չտբարներդ հանե, կոնակդ դարձուր...

Չատիկն այդ բանը թույլ չի տա: Իր կնոջ մարմինն ուրիշը չպիտի տեսնի, թեկուզ տոքթորը:

— Տոքթորը մարդ չէ՞: Ան ալ՝ իրենց գեղի տոքթորը, սրուն բեխերը չենգելի պես վեր-վեր անկված են:

Չատիկը բաց արեց աչքերը ու նորից նայեց սովերներին: Զիերի ցցուն ակունջները դարմանալիրբեն նման էին տոքթորի բեխերին... Այո՛, խկ և խկ տոքթորի, բեխերն են, ցցուն, ամբարտապան ու քսամները:

Երասանները պահեց ձեզ, ձիերը կանգնեցին և Չատիկը դիտեց սովերները՝ երկա՛ր, ուշադիր:

Չատիկի սիրաբ արտփում էր ուժգին, ուռչում էր խանդով ու զայրույթով, և նա քաշում էր մեջքից մտրակը, խփում ձիերին՝ սաստկորեն, անխնա: Զիերը ցնցվում էին և քառատրոփ վազում: Երասանները ձեռին, Չատիկը վազում էր նրանց ետևից սարսափած դիրտկլով ականջների ցցուն սովերները, որոնք կայծակնային արագությամբ երևում էին ու անհետում, տոքթորի բեխերի ստույգ սարսափը հոսեցնելով իր հոգում:

Չատիկը ուժգին ձգեց երասանները՝ աշխատելով կանգնեցնել ձիերին, բայց ձիերը վազում էին քառատրոփ, պատվանդանի առանցքի շուրջը պտույտ բերելով երկանաքարը, ինչպես փետուրը պատահողմի մեջ:

Պիրկ բազուկների ամբողջ ուժով նա ձգեց երասանները, ձգեց ուժգին, ոտները դեմ տալով գետնին: Զիերի գլուխները բարձրացան վերև, աղեղվեցին վզե-

բը, կեռացան մանգաղի պես, բայց նրանք չէին սան-
ձահարվում, վազում էին քառատրոփ՝ քարշ տարով
Զատիկին իրենց հետ:

Զատիկը թողնց երասանները, կարեց ձիերի ա-
ռաջը, հանգստացրեց նրանց, բռնեց բաշերից, շոյեց
և քրանաթոր ճակատը հենեց ձիու պարանոցին: Հե-
տո նստեց պատվանդանի եզերքին ու մտածեց վշտով
այդ առափոտ տանը պատահածի մասին:

Լուսազեմին Հայրենը զարթնել էր ու լաց եղել:
Զատիկն ընդոտ զարթնել էր, նստել նրա կողքին ու
հարցրել.

— Ինչո՞ւ կըլլաս:

Հայրենը հիմանդ էր: Ճրագի ազոտ լույսով
ցույց էր տվել ոտներն ու ձեռները: Ամեն կողմը ու-
ռել էր և մարմինը սեղմելիս, խմորի պես փրսանում
էր:

— Տեսի՛ր, տեսի՛ր, — ասել էր Հայրենը, — մար-
մինիս ո՛ր կողմ որ սեղմիմ փոս կըլլա ու ալ չե՛
բարձրանար:

Խոսակցութեան ձայնից զարթնել էր էլմասը:

— Մի վախճար, ազվորս, բան չիկա, — խրախու-
սել էր Զատիկը, — առտուն մեկալ օր կազատվիս, ա-
մեն բան կանցնի:

Ու Հայրենի կոնակը ծածկել էր վերմակով:

— Հազար աչք կա վրանիս, օդո՛ւլ, — ասել էր
էլմասը՝ ցավազինորեն գլուխն օրորելով, — հելրեթ՝
ատանկ կըլլա:

Զատիկը հատկապես այդ օրը որոշակիորեն նկա-
տեց ինչ որ հիվանդագին ու ապառուջ բան Հայրենի
մեջ: Նրա դեմքը մեծացել էր, լայնացել, կոպերը ու-
ռել էին և թշերը կախվել:

Քիչ հետո Հայրենը քնեց, առատ մազերը փոփե-
ցին բարձի վրա, կուրծքն սկսեց բարձրանալ ու իջնել

արագ, և վերմակի ծալքերը նրա մեծ և ուռած մարմնի վրա բլրակի պես դիզվեցին:

Համախոսին Չատիկը պատրաստվեց յաղհանել գնալ:

— Բան մը բլլա նը, բնծի խարար տուր, — ասաց էրմասին: Բայց էրմասն բնկերացավ նրան մինչև բակի դուռը և երբ Չատիկը ոտը դուրս դրեց շեմից, էրմասն ասաց.

— Գիտի՞մ որ կնեղանաս, ամա նորեն պի բսի՞մ...

— Ի՞նչ...

— Օղուլ Չատիկ, մի նեղանար, Հայրենի վիճակը աղեկ չեմ տեսներ, տղթոր մը բերել տուր:

Եեմին վրա Չատիկը կանգնեց լուռ ու գլխիկոր:

— Ետքը գլուխնիս չծեծենք, — ավելացրեց էրմասը:

Չատիկը ցնցվեց: Սմբողջ մարմնով անցավ սառցային սարսուռ, գլխահակ ու վշտարեկ հենվեց դռանը և ծանր հառաչեց: Հետո մութին մեջ, ցավագին հայացքն ուղղելով էրմասին, ասաց.

— Վեր գնա՛, Հայրենը կվախնա մինակը:

Ետա՞ծ պատվանդանի եղերքին, հիմա նա մտածում էր այդ բոլորի մասին: Հիշում էր Հայրենի լացը, էրմասի վերջին բառերը, որոնք հալած կապարի պես իջնում էին ուղեղի մեջ:

«Ետքը գլուխնիս չծեծենք»...

Կոշմարի պես ճնշող էին այդ բառերը և մահու չափ սարսափելի: Ուրեմն կարող էր այնպիսի բան պատահել, որ հետո գլուխները ծեծեին... Սպա Սըբբուկ մա՞րը... ուրեմն նա ոչինչ չի՞ հասկացել, նա, որ ամեն բան հասկանում է:

Չատիկի աչքերը մթնում էին և գլուխը պտույտ էր դալիս: Հիշում էր Հայրենի լացը և լսում էր նրա բառերը, որոնք ասես, հնչում էին իր ականջին. — «Տեսի՛ր, տեսի՛ր, մարմինիս ո՛ր կողմը որ սեղմի՞մ, շիտ կըլլա ու այ չի բարձրանար»:

Հետո նորից լսում էր էլմասի բառերը. — «Յաքը
գլուխնիս չծեծինք»:

Չատիկը ընդոտտ ոտքի ելավ, վաղեց դեպի ամ-
բարը և գոռաց բարձր.

— Մարկո՛ս...

Մարկոսը դուրս նետվեց ամբարից:

— Ի՞նչ կա, Չատիկ:

— Քիչ մը ձիերուն նայե, ևս տուն պեթամ:

— Ինչո՞ւ, ինչ կա...

— Բան չի կա, քիչ մը հիվանդ է Հայրենը:

Եվ շտապաբայլ գնաց յաղհանելի դուռը:

15.

— Սուտ հարսը պի ծնի:

— Առավա-իրիկվա է:

— Ուռեցվորեր պառկեր է՝ կըսեն, տեղեն չի
կրնար երերալ:

— Մեղքերը դուրս է տվեր, չըսե՞ս:

Ու չարախինդ ծիծաղում էին:

Յաղհանելի աշխատանքը վերջանալու մոտ էր:
Օրական հազիվ մի քանի կլթոց ձիթապտուղ էին բե-
րում, այն էլ Չատիկը մի երկու ժամվա մեջ արորում
էր ու քամում: Հիմա ամեն առափոտ ուչ էր գնում
գործի և երեկոները կանուխ վերադառնում: Նստած
Հայրենի մոտ զրուցում էր, զվարճացնում նրան, իր-
բախուսում, ծրագրելով Ստամբուլ կատարելիք ճանա-
պարհորդության, երեխայի կնունքի և մաղաղայից
կատարելիք գնումների մասին:

Հայրենը սաստիկ «ծանրացել էր»: Հարևաններից
ոմանք այցելում էին Հայրենին, հետաքրքրվում նրա
առողջական վիճակով ու հարցնում.

— Տոբթոր բերի՞ք:

— Երկու հեղ, — պատասխանում էր Հայրենը գո-
հունակությամբ:

— Ի՞նչ ըսավ:

— Ոտքերուս նայեցալ, իլաճ¹ տվալ, ատոր վրա քիչ մը ուռեցքներս իջան:

Հարեանները մեկնելիս փախում էին իրար:

— Աս ուռեցվորութիւնը խելք հասնելիք բան չէ:

Չաաիկը գոհ էր դեղերի արդշունքից: Հայրենն իրեն լավ էր գգում ու ճշտութեամբ կատարում էր բժշկի բոլոր պատկերները:

Իլմասը հսկում էր քրոջը: Սրբուկ մարն առաւուրերեկս չէր բաժանալում Հայրենի, անից ու երեքով նստած, նրանք ծրագրում էին դեպի Ստամբուլ կատարելիք ճանապարհորդութիւնը:

Երբեմն հանկարծ հիշում էր այն առաւուրը, երբ աչքերը բանալիս, տեսալ բժշկին Չաաիկի հետ կանգնած իր անկողնու մոտ:

— Շաշմիչ² էի եղեր: Չաաիկը, որ տոբթորի աշունքը չէր ուզեր լսել, գացեր տոբ բերեր էր...

— Չաաիկը տոբթոր չէր բերեր, — ասում էր Իլմասը, — ամա ան օրն անանկ խոսք մը ըսի, որ սրտին դարավ:

— Ի՞նչ ըսիր, — հարցնում էր Հայրենը:

— Ինչո՞ւղ պետք է, — ասում էր Իլմասը, — ինչ որ պետք էր ըսի և ան օրն ալ սահաթե մը տոբթորը գլխուղ վրա եկալ կայնեցալ:

Հայրենը ծիծաղում էր երջանկորեն:

— Մա՞նչ կուզես, թե աղջիկ, — հարցնում էր Սրբուկ մարը Հայրենին:

— Աղջիկ:

— Չաաիկն ալ, — ասում էր Իլմասը, — կխենթե՛նա տղու համար:

Աւ երբ Չաաիկը տուն էր գալիս, Սրբուկ մարն ասում էր նրան.

— Աղվորիկ մանչ մը կունենաս, Չաաիկ, հիչ հոգդ մըներ:

Այս բառերը լսելիս, Չաաիկը հրճվում էր և խըն-

¹ Դեղ:

² Զարմացիկ էի:

դուժյան ժպիտը դեմքին նստում էր պատուհանի մոտ, հանում էր ծխատուփը և գլուխը կախ, «ազվորիկ մանչուն» վրա մտածելով, մատների ծույլ ու դանդաղ շարժումով դլանակ էր փաթաթում: Բայց Հայրենը ծնունդից առաջ ուզում էր հաղորդվել, գյուղի բոլոր հարսներն այդպես էին անում: Քահանան դալիս էր նրանց մոտ և հաղորդություն տալիս: Սակայն ամեն անգամ այդ մասին մտածելիս, Հայրենի սիրտը տրտիւմ էր, որովհետև հաստատապես գիտեր, որ քահանան կմերժեր իրեն հաղորդություն տալ:

Սրբուկ մարն ու էլմասն էլ այդ կարծիքին էին: Իսկ առողջական վիճակը չէր ներում Քարձի գնալ և այնտեղ հաղորդվիլ:

— Քարձի ալ չի կրցինք եթալ,— ասաց մի օր Հայրենը Չատիկին:

Չատիկը գուշակեց Հայրենի վիշտը:

— Թող չկրնանք եթալ,— ասաց նա, ատիկա ի՞նչ գերա՞ կրնես:

Սակայն Սրբուկ մարն ու էլմասը, Չատիկից թաքուն, Մկրտիչ աղբարին ուղարկեցին տերտերի մոտ.

— Հիչ ում ում՞ չունինք, ամա գնա կանչե, նայինք կուզա՞ր:

Մկրտիչ աղբարը գնաց հրավիրելու տերտերին ու վերադարձավ գլուխը կախ:

— Տերտերը չեկավ,— հայտարարեց նա տրամորեն:

— Ի՞նչ ըսավ,— հարցրեց էլմասը:

— Անպատկին հաղորդություն չի տրվիլ, ըսավ:

Հայրենը սաստիկ հուզվեց ու լաց եղավ, բայց Սրբուկ մարը մխիթարեց նրան, բազմաթիվ օրինակներ բերեց Ստամբուլում ապրող անպատկների կյանքից, որոնք պատկավորներից ավելի պատիվ ունեին:

— Աստեղ գեղ է տե, ատոր համար իբար են անցեր,— ասաց նա,— չէ նր՝ եղածն ի՞նչ է:

Ու խորհուրդ տվեց Հայրենին՝ ամեն դիչեր, պատ-

¹ Ցավ:

² Հույս:

կելուց առաջ «երկու ծունկ» աղոթք ընել:

— Սրտով ըրած աղոթքը հաղորդության այսր¹ է օղուլ, — ասաց նա:

Չատիկն լմացավ տերտերի, մերժման մասին, խիստ հայհոյեց նրան և աշխատեց ամօքել կնոջ վիշտը:

— Հաղորդությունը մարդուս խեղճն է, աղվո՛րս, — ասաց նա, — ի՞նչ մեղք ունիս, որ հաղորդվիլ կուզես:

Տերտերի մերժումը լավեց գյուղում: Աւ նորից հրապարակ եկան հին խնդիրները, որոնք «պահ մը» մոռացվել էին:

Սոֆիկ հանրմն ու Աննա մարը կատաղորեն հարձակվում էին Հայրենի պաշտպանների վրա, որոնք մեղադրում էին տերտերին: Հետո շար ու բախումթյամբ ակնարկելով Հայրենի մոտալուտ ծննդաբերությունը, հարցնում էին միմյանց.

Ատոր ծնածն ի՞նչ կըլլա, սատանա՞, թե մարդ:

— Ապօրծին:

— Ապօրծինը կկնքե՞ն:

— Չէ, իրենց պես շուն կմեծնա:

— Քարձի թող տանին, — հեգնում էր Սոֆիկ հանրմբ:

— Ատ սուտն ալ չեն կլլեցներ:

Այդ վայրահաջությունները լսելով, էլմասն ու Հայրենն ասում էին իրար:

— Պոչ՞ տեղը շուներուն բերանը բանալ տվինք:

16.

Յաղհանեում, պատմանդանի վրա, Չատիկը նրատել էր Մարկոսի հետ: Վերջին հաճախորդը մեկնեց, այլև ոչ մի կթոց ձիթապտուղ չկար, վաղվանից յաղհանեն փակ կլինի: Քիչ առաջ Մարտիրոս աղան կանչեց Չատիկին և վարձը վճարեց: Ոսկիների ծանր ու

1 Հաճաար:

2 Պարապ:

գզվող շոշափումը չուրախացրեց նրան: Փողը գրպանից ու մոռացավ այն: Պատվանդանի վրա նստած, իրար ետևից վառում էր գլանակները, ծխում ազահորեն, տկանջը դռանը: Կեսօրին, ճաշի, ժամանակ Հայրենի «ցավերը բռնեց», էլ մասը լուր ուղարկեց գայակին և կանչեց Սրբուկ մարին:

Մի քանի հարևան կանայք վազեցին եկան:

— Ձուր տաքցուցե՞ք, — հրամայեց Սրբուկ մարը:

Չատիկի մարմնով սարսուռ անցավ:

— Դուն մի մնար աստեղ, — ասաց էլ մասը, — յաղհանե գնա, աղատվելուն պես ես քեզի կիմացնիմ:

Մոտ ութ ժամ էր անցել, մութը վաղուց ընկել էր, բայց էլ մասը լուր չէր ուղարկում: Ի՞նչ պատահեց!

— Շատ աղեկ, ամա սա մտմտալը պո՛չ¹ տեղը չէ՞, — հանդիմանում էր Մարկոսը:

— Հիվանդ որ չըլլար, հիշ հոգս չէի ըներ...

Ու սարսափով մտածում էր էլ մասի բառերի մասին. — ետքը գլուխնիս չծեծենք...

Քանի ժամ է, այդ միտքը չի հեռանում գլխից: Չնայած բժիշկ հրավիրեց, մեկի տեղ երկու անգամ, բայց սարսափը պատել էր հոգին, նրա սիրտը զողում է չոր տերևի պես:

Ժամանակն անցնում էր դանդաղ, կապարի պես ծանր ճնշում էր ուսերի վրա ու նա անդադար մտածում էր.

— Հիվանդ որ չըլլար...

Իր կյանքում երբեք այսպիսի տազնապ չէր ապրել: Քանի լրարեբն ուշանում էր, այնքան ավելանում էր երկյուղը, սիրտը տրոփում էր կասկածից ու տարակուսանքից: Մարկոսը սիրտ էր տալիս, խրախուսում, կուսանքից: Մարկոսը չէր լսում, նա կլանվարձախոսում... բայց Չատիկը չէր լսում, նա կլանված էր ճնշող մտքերով և անվերջ մտածում էր լրարե-

1 Դատարի:

ըի մասին, որ ուշանում էր և բարեհաջող ծնունդի մասին, որի ավետողին «հողին դուրբան՝ կընեն»:

— Որ մանչ ծնի, անունն ի՞նչ պի գնես, — հարցրեց Մարկոսը:

Չատիկը բարձրացրեց գլուխը, սթափվեց ու պատասխանեց.

— Պապայիս անունը:

— Ըստ որ աղջի՞կ ծնի:

Յաղհանեի դուռը բացվեց ու Մկրտիչ աղբարը ներս մտավ:

Չատիկն ընդոստ ոտքի ելավ և վազեց դեպի նա:

— Ի՞նչ կա, խե՞ր է:

Մկրտիչ աղբարը դողում էր տերևի պես:

— Տուն գնա, Չատիկ, — ասաց նա թոթովելով:

— Ի՞նչ կա, ինչո՞ւ կըողաս:

— Հայրենն աղեկ չէ, — ասաց նա, — մի կայնիք, թեղ տուն վազե...

Չատիկը դուրս թռավ յաղհանելից, գրեթե վազելով անցավ փողոցներով ու հասավ տուն: Հարևանները հավաքվել էին դռան առաջ ու ներսը: Նրանք լուռ էին քաշվեցին՝ Չատիկին ճամփա տալու համար:

Դռան շեմի վրա Չատիկը տեսավ էլմասին ու Սրբուկ մարին, որոնք այլայլված էին: Դայակը Հայրենի մոտն էր: Հայրենը ճչում էր ու գալարվում: Սենյակում խոնավ էին կանայք: Էլմասն սկսեց լաց լինել: Սրբուկ մարը լուռ էր:

Դռան շեմի վրա կանգնած, Չատիկը նայեց Հայրենին: Նրա դեմքի վրա մահվան դալուկ կար:

— Հայրեն...

Հայրենը բաց արեց աչքերը, նորից նրա արտասուները ծանրորեն փակվեցին:

— Տոբթոր հասցուր, — ասաց Սրբուկ մարը, — չո՞

1 Չոս կանի, կնիլիս

Ղուխը թերս է եկեր, ատոր համար կչարչարվի, արե-
թով՝ պի առնվի:

— Տոբթոր, առթթոր,— դոռացին ամեն կողմից,—
Թուշունի թևով տոբթոր հասցուր:

Չատիկը ցած խոյացամ սանդուղքներից և վազեց
փողոցներով:

17.

Շնչահե ու քրտնաթաթախ, Չատիկը հասավ բժը-
կի բնակարանը և դուռը բախեց. լուսամուտը բաց-
վեց և մի պառավ կին ձայն տվեց.

— Ո՞վ է:

— Ես եմ, Չատիկ:

— Ի՞նչ կուզես, Չատիկ:

— Տոբտորը կուզիմ, վարդանուշ մար, թեզ ըրե,
դուռը բաց:

Չատիկը դողում էր:

— Տոբթորը հոս չէ, օղո՛ւլ, ո՞վ է հիվանդը:

— Կնիկս է... Տոբթորն ո՞ւր է:

— Սոֆիկ հանրմենց տունն է, աղջկա նշանաուքին
է գացեր:

Չատիկի սիրտը մի բոպե դաղարեց տրոփելուց և
աչքերը մշուշվեցին: Սոֆիկ հանրմի դարչելի դեմքը
ցցվեց նրա աչքերի առաջ և նա դժաց իր բախտի չա-
բությունը, որ նորից այդ դաժան կնոջ դեմ հանդիման
էր բերում իրեն, այս ծանր պահին: Սակայն անվա-
բան, թողեց վարդանուշ մարի բնակարանը, շտապա-
բայլ գնաց դեպի աղայի տունը և դուռը խփեց:

Յանաչման բազ արեց դուռը:

— Տոբթորը հո՞ս է,— հարցրեց Չատիկը հեալով:

— Հոս է, Չատիկ, ո՞վ է հիվանդը:

— Կնիկս է, թեզ ըրե, գնա կանչե, ըսե՛, որ ծարյր

1 Հակասակ կողմից.

2 Գործիքով.

հիվանդի համար եկեր ևն կկանչեն, թող ժամանակ
չկորցնե...

Յանաչման բարձրացավ վերև:

Մութի մեջ, դռան մոտ սպասում էր Չատիկը:
Վերևից լսվում էր զվարթ աղմուկ, երգում էին ու
պարում, թնդում էր ծիծաղն ու քրքիջը, հետո լսվում
էին խիվող բաժակների, շրխկոց, նվազի ձայն ու բա-
ցականչություններ:

— Աչքդ լուս, Մոֆիկ հանրմ:

— Աչքդ լուս Անտոն աղա:

— Լուսով մնաք, տարոտը տուներիդ ըլլա:

Չատիկը դողում էր մութի մեջ: Կռթնած դռանը,
սպասում էր բժշկի դալուն, որ պիտի փրկեր կնոջ ու
իր կյանքը, պիտի ազատեր Հայրենի ու իր ճակատա-
գիրն աղետից, երբ արդեն անգոր էին Սրբուկ մարն ու
վալակը:

Վերևում մարդիկ երգում էին ու պարում անդի-
տակ ու անտարբեր իբր վշտին, որ լեռնացեր էր իր հո-
գում, որից, թվում էր թե քարերը պիտի սարսուռային:

Հուզումից դողահար, կքած վշտի ահազնության
տակ, հիշում էր էլմասի լացը, Սրբուկ մարի վախե-
ցած դեմքն ու լուռությունը, հարևանների տազնապա-
գին խոնումը իր դռան առաջ ու սանդուղքի վրա, հե-
տո Հայրենի մոմի պես դժգուշն դեմքը և աչքերի սաղ
հայացքը, որ սառեց ահով ու սարսափով պատած սե-
նյակի մեջ:

Փողոցում հաչում էին շները, կաղկանձում եր-
կա՛ր ու ողբադին: Գիշերապահի ճոկանն ինն անգամ
խփեց քարին և հետո ծանր ու խեղդող հազը արձա-
գանքեց փողոցի մենավոր լուռության մեջ:

Իողահար ու տազնապած, մեռելի պես դժգուշն,
կանգնած էր Չատիկը դռան մոտ և սպասում էր
բժշկին, որ ուշանում էր: Վերևում չէր դադարում աղ-
մուկն ու քրքիջը, պարողների ոտները դոփում էին գեա-
նին, տունը թնդում էր, ծափերն արձագանքում էին և
բաժակները շրխկում: Չատիկն սպասում էր, որ ահա
իր հիվանդի մասին կհայտնեն բժշկին, մարդիկ կլսեն

այդ մասին և մի բոլոր աղմուկը կըստարի, որովհետեւ
մահման տեսիլը կցնցի նրանց: Բայց ձայները չէին
գաղարում և բժիշկը չէր գալիս:

Հանկարծ Չատիկը լսեց Սոֆիկ հանրմի ձայնը.

— Գնա ըստ, որ տոբթորը չի կրնար գալ:

Յանաչման շտապ իջավ սանդուղքից:

— Չատիկ, — ասաց նա, — Հանրմը ըսավ, որ
տոբթորը չի կրնար գալ:

— Ի՞նչ, — գոռաց Չատիկը, — չի՞ կրնար գալ,
ի՞նչ ըսել է՝ չի կրնար գալ: Հիվանդ պառկած է, որ
չի կրնար գալ կրես:

— Չեմ գիտեր, հանրմն ատանկ ըսավ:

— Ես հանրմի հետ ի՞նչ գործ ունիմ... Դուն ո-
րո՞ւ ըսիր, հանրմի՞ն ըսիր, թե տոբթորին:

— Ես հանրմին ըսի, որ կանչե տոբթորին:

— Կանչե՞ց:

— Չէ՛...

— Ըսա ի՞նչ ըսավ:

— Ըսի յա, գնա ըստ, որ տոբթորը չի կրնար գալ
ըսավ:

Չատիկն ընդոտտ առաջ նետվեց և սանդուղքով
վեր վազեց: Նախասենյակի գոռն մոտ հանդիպեց Սո-
ֆիկ հանրմին և կանդ առավ:

— Դուն ի՞նչ գործ ունիս հոս, ի՞նչ կուզես, —
գոռաց Սոֆիկ հանրմը:


— Դո՞ւն ես ըսեր, որ տոբթորը չի կրնար գալ, —
հարցրեց Չատիկը խտուրթյամբ:

— Հա՛, ես եմ ըսեր:

— Դուն ինչե՞ն գիտես, որ անիկա չի կրնար գալ:

— Դուն նո՞ր պի գիտես՞, որ տոբթորն իմ հրա-
մանիս տակն է, — ասաց Սոֆիկ հանրմը՝ ինքնաբավ
հպարտությամբ:

— Տոբթորը քու յանաչմադ չէ, որ հրամանիդ
տակն ըլլա, — ասաց Չատիկը, անիկա մեր գեղն է ե-
կեր, իմ կնկա պես հիվանդներու համար, անիկա գե-
ղացոց համար է, ատիկա գիտցած եղիք:



Ու թեղանիքով սրբեց ճակատը:

— Իմ տունես ատքթոր չես կրար տանիլ: Դու ալ ատիկա գիտցած եղիր:

Սոփիկ հանրմի շեշտը վճռական էր: Վարագի չար ատամները ցցվել էին շրթներից դուրս, որոնք դողում էին ջղաձգորեն: Նախասենյակի կիսադուռ մթության մեջ Չատիկը տեսնում էր աղայի կնոջ դեմքը և նրա մութ աչքերի մեջ կարդում էր անսահման չարություն:

Մի սպասարկող խոհանոցից կանչեց Սոփիկ հանրմին:

Չատիկը մնաց մենակ, կից սենյակից լսվում էր նվագի ձայն, մեկը ձայնակցում էր նվագին:

Չատիկը խոյացավ դեպի սենյակը, բաց արեց դուռը և կանգնեց շեմի վրա:

Բոլորի աչքերը դարձան դեպի նրան: Չատիկի դեմքն այլայլված էր: Շվարուն ու մոլոր հայացքով նա փնտրում էր բժշկին: Բեխերը խոնավ էին, Ֆեսթ ծովել գլխի վրա, մազերի մի փունջ կախվել էր մինչև աչքերը և դողում էր տենդահար:

Երգը դադարեց, բոլորը լռեցին:

— Ի՞նչ կա, Չատիկ, — հարցրեց աղան, — ինչո՞ւ ես եկեր:

Բայց Չատիկը չլսեց նրան: Նա տեսել էր բժշկին, որ նստել էր աղայի կողքին, ծնոտի ծայրին փոքրիկ մորուքով, բեխերը ցցուն, աչքերը ժպտուն, փայլուն, ուսկեծիր ախնոցներով:

Չատիկի դեմքը սպառնալից:

— Տոքթոր, — ասաց նա աղաչողաբար, — քեզի համար եմ եկեր, ծարյր հիվանդ ունիմ, կնիկս է, հողի կանոն-կուտա: Եթանք:

Սոփիկ հանրմը ներս մտավ սպասարկողների հետ, որոնք գլխի էին բերում և խորովածով լի ափսեներ:

— Տոքթորի եթանքը ըլլալու բան չէ, — ասաց Սոփիկ հանրմը՝ շեշտակի նայելով բժշկին:

— Հիվանդդ ծարյր է, — հարցրեց աղան՝ դժգոհ կնոջ արտահայտություններից:

— Հողի կառնե-կուտա, — ասաց Չատիկը:

Բժիշկը կարեկցարար նայում էր Չատիկին, որ եղեգի պես դողում էր իր վիթխարի մարմնով:

— Նշանտուքը ես չարաթ մը ետ ձեցիք քեզի համար տոքթոր, — ասաց Սոֆիկ հանրմը, — մինչև Ստամբուլն գալը սպասեցի, որ դուն առ օրվան օրս իմ սեղանիս վրա դանվիս: Հիմա դուն գիտես:

Բժիշկը չպատասխանեց և շարունակեց կարեկցարար նայել Չատիկին:

Բայց բոլորն զգացին, որ Սոֆիկ հանրմի խոսքերն սպառնալիք էին, հարարերու թյունները եթե ոչ խզելու, գոնե սառեցնելու, ու սպասում էին բժշկին, որ շարունակում էր լռել և անթարթ նայել Չատիկին:

— Կտեսնե՞ս, որ տոքթորը չի կրնար գալ, — ասաց Սոֆիկ հանրմը Չատիկին, — դնա՛, ալ մի կայնիր:

Բայց Չատիկն անթարթ նայում էր բժշկին:

— Հինգ-տասը դուրուշի համար անիկա իր քեֆը չավրեր, դնա, — խախտացրեց Սոֆիկ հանրմը:

Չատիկը ցնցվեց, ցասկոտ աչքերով նայեց Սոֆիկ հանրմին, հետո ձեռքը մտցրեց դոտիի ծալքերը, դուրս քաշեց հասարակ շորի կտորից կարած քսակը և շրխկոցով նետեց դեպի բժիշկը:

Ոսկիների նուրբ ու թրթուուն աղմուկը հնչեց բժշկի ծնկների վրա:

— Մեջինը տասը օամանը՞ է տոքթոր, տասը դուրուշ չէ, ամենը քեզի ըլլա, մորդ կաթին պես հալալ ըլլա... ելիր եթանք...

Բժիշկը վերջրեց քսակը և ոտքի ելավ: Չատիկը դարձավ դեպի դուռը, բայց բժիշկը կանգնեցրեց նրան.

— Կայնե, բան ունիմ ըսելու:

Մոտենալով Չատիկին, քսակն երկարեց նրան և ասաց.

— Քոսկիդ ետ առ, ինձի փարա պետք չէ:

1 Տաճկական ոսկի

Ներկաները լուռ հիացմունքով նայեցին բժշկին,
որ Չատիկի հետ դուրս եկավ սենյակից:

— Հիվանդդ ի՞նչ ունի, որ հողի կուտա-կառնե
կըսես, — հարցրեց բժիշկը կարեկից քնքշությամբ,
երբ իջնում էին սանդուղքից:

— Կնիկս պի ծնի, տոբթոր, — ասաց Չատիկը, —
չոջուխը թերս է եկեր կըսեն, թեղ ըրե...

— Ինչո՞ւ չուտ չեկար:

— Սահաթ մըն է՝ դռան առջևն եմ... թեղ ըրե:
Բժիշկին շտապեցրեց քայլերը և Չատիկի հետ
ուղղվեց դեպի իր բնակարանը՝ պայուսակը վերցնե-
լու:

18.

Մթին ու քարքարոտ փողոցներով, բժիշկին շտա-
պաքայլ գնում էր Չատիկի հետ:

— Հողիս դուրբան կընիմ քեզի, տոբթոր, — աս-
ում էր Չատիկը, — ետերդ՝ կըլլամ, մինակ թե ազա-
տե կնիկս:

Բժիշկը հուսադրում էր Չատիկին:

— Ատանկ վախկոտ մըլլար, — ասում էր նա, —
քեզի չի վայլեր վախկոտությունը:

Հետո սակայն, կասկածանքով հարցնում էր.

— Մարմնի ուռեցքը չէ՞ր լիջեր:

— Իջեր էր, բան չէր մնացեր:

Գիշերապահը դիմավորեց նրանց ու հարցրեց.

— Չատիկ հիվանդդ ո՞վ է:

— Կնիկս է... Սահաթը քանի՞ն է, Մարտիր:

— Տասին հինգ կուգե:

— Երբ որ եկա քեզի կանչելու, սահաթը ինն էր, —
ասաց Չատիկը բժշկին:

Ու հետո հառաչադին ավելացրեց.

— Սոֆիկ հանրմն ուշացուց, առնելիքն ըլլա...

Տներում լույսերը հանգել էին և ամեն կողմ լուռ-

թյուն էր: Ծները միայն, ողբաձայն ու աղիողորմ հաղկանձում էին՝ դռների առաջ կամ անկյուններում պառկած:

Գերեզմանատան աղբյուրի մոտից երևաց Չատիկի բնակարանը: Լուսամուտներից լույս էր երևում: Բայց դռան մոտ բազմություն էր հավաքված, հարևանները խափար ու բաց պատուհաններից խոսում էին փողոցում հավաքվածների հետ:

Չատիկը լսում էր նրանց ձայնը: Սարսափով ու կարեկցությամբ էին կարծես տողորված այն բառերը, որոնք հեռվից հասնում էին նրա ականջին:

Պատուհաններից խոսող կանայք ու տղամարդիկ երևում էր, որ նոր էին գալիս: Թվում էր, թե մի ահավոր դեպք, մի աղետալի լուր ցնցել էր նրանց բոլորին ու արթնացրել, որովհետև նրանց ձայները քնթաթախի մեղմ, բայց եղերական թրթռումն ունեին: Հարևանների այդ անժամանակ խմբումն իր տան մոտ, լուսամուտներից ցած նայող մարդկանց խոսակցության ծանր շեշտը, չարագուշակ էին:

Հանկարծ Չատիկը ցնցվեց ով ահարեկված վազեց՝ բժշկին թողնելով մենակ:

Նա լսել էր լացի, ձայն:

Կանայք լաց էին լինում՝ ծանր ու սրտակտուր:

Դռան առաջ խմբված մարդիկ բռնեցին նրա թևերից ու բարձրացրին սանդուղքով: Ներսում կանայք լալիս էին կողկողազին:

Չատիկը ներս խոչացալ սենյակից և ընկավ Հայրենի անշնչացած մարմնի վրա՝ հեկեկազին գոռալով.

— Հայրե՛ն...

Էլ մասը փետում էր մազերը և խփում գլխին բռունցքներով: Մկրտիչ աղբարը կծկտած լալիս էր անկյունում, ուր ճերմակ շորերի մեջ փաթաթել էին երեխային:

Բժիշկը մտավ սենյակ, մոտեցավ Հայրենի մարմնին, շոշափեց բազիկերակը, բաց արեց կոպերը, նայեց աչքերին ու ասաց.

Լուսինը երկու մարդահասակ բարձրացել էր հո-
բիգոնի վրա և փողոցները ողողել կաթնային լույսով:
Գիշերապահի ճոկանը տասն անգամ խփեց քարին:
Գյուղում մեռելային լուսթյուն էր, միայն երբեմն
լավում էր շների ոռնոցը, որ սարսուռի պես պաղ տա-
րածվում էր լուս գիշերվա մեջ: Գերեզմանատան
հարթավայրի վրա, լիայունի շողերի տակ, երևում
էին սաղարթախիա ծառերի մութ բոլորակները և
նրանց շորս կողմը, տեղ-տեղ, շիրիմների ցուրտ մար-
մարն էր նշուլում հանգարտորեն: Հեռվում, լճակը
պառկած էր լլուրների դողում ու ասողերը մեղմիկ
քթթում էին երկնքի կապտալույս մթության մեջ:
Գերեզմանատան աղբյուրի մոտով համբաքայլ անցնում
էին մի քանի մարդ. . . Չատիկի յանաչմա ընկերներն
էին, որոնք տանում էին Հայրենի դազազը իրենց ու-
տերի վրա: Դադաղի ետևից գնում էին Չատիկն ու
էրմանը: Մարկոսը ճանապարհին պահում էր Չատիկին,
խսկ Սրբուկ մարն էլմասի թևն էր մտել: Մկրտիչ աղ-
բարը գնում էր թափորի ետևից:

Թափորը շարժվում էր լուս ու հանդարտաքայլ,
միայն լավում էր քայլերի թեթև շիւումը փոշոտ ու
անհարթ գետնի վրա և ողբի խուլ հեղձամղձուկ ձայ-
նը, որից սարսուռ էր գիշերային լուսթյունը:

Դադաղի երեսը բաց էր և լուսնի կաթնային լույ-
սը ողողել էր Հայրենի գեղեցիկ ու դալուկ դեմքը:
Հարսի շորեր էին հագցրել նրան: Մազերը տարած-
ված էին բարձի վրա՝ ճերմակ դեմքը եզերելով: Չեռ-
ները ծալած էին կուրծքի վրա, աչքերը փակ էին և
չթխները սեղմ, որոնց վրա հանկարծ սառել էր կյանքի
ու սիրո կրակը:

Հուղարկավորներն անցան աղբյուրի մոտով, բայց
չբարձրացան գերեզմանատուն: Նրանք չըջանցեցին գե-
րեզմանատան բլուրը և նեղ կածանով շարժվեցին ա-

ուաջ: Գերեզմանոցից դուրս, դեպի ձորը թեքվող, մորենիներով և վայրի թփերով ծածկված փոքրիկ հարթավայրում, փորված էր Հայրենի գերեզմանափոսը:

Տերտերը հանձն չէր առել թաղել նրան և թույլ չէր տվել մի անկյուն հատկացնել նրան դյուղի գերեզմանոցում:

— Գերեզմանոցեն անդին, մորենիներուն մեջ տաքեք թաղեցեք,— ասել էր տերտերն իրեն դիմողներուն:

Թափորը կանգ առավ գերեզմանի փոսի մոտ: Մորենիների ճյուղերն ստվերում էին դազաղը, ներքևում ձորն էր բացվում լայն երախի պես, վերևում դյուղի գերեզմանատունն էր, եկեղեցու հավատարիմ բնորյալների հանգստավայրը, ուր մերժվում էր «պատառ մը հող» հատկացնել Հայրենի տանձահար ու կորներին, որովհետև Հայրենը «Սուտ հարս» էր և չէր կարող տեղ ունենալ օրենքի և սրբության ուժն ունեցող «իրավ» հարսների կողքին:

Իողգոջուն մատներով Սրբուկ մարը պատանքը կարեց և մեռելի շրթների վրա իր անից բերած մի հին նշխարճ դրեց և մի կտոր բամբակ: Բայց Չատիկն ու Էլմասը նետվեցին դազաղի վրա, Սրբուկ մարի ձեռները բռնեցին, արգիլելու համար ծածկել Հայրենի դեմքը:

— Մի ծածկեր,— աղերսում էին նրանք,— քչիկ մըն ալ կեցիր:

Ու մեռելի մարմինը դրկած, հեկեկապին լալիս էին և արցունքներով ծածկում նրա գեղեցիկ ու սառը դեմքը:

Հուղարկավորները բռնեցին Էլմասին ու Չատիկին, հեռացրին դազաղից: Սրբուկ մարը ծածկեց Հայրենի դեմքը, մարդիկ երեք անգամ խաչակնքեցին ու մարմինն իջեցրին հողը:

Մկրտիչ աղբարը լուռ արտասվում էր:

Չատիկն ու Էլմասն բնկած հողակույտի վրա լալիս էին ողբաձայն:

Խմբագիր՝ Լ. Բ. ՔՈՓՉՅԱՆ

ՎՖ 00741 պատ №41, տիրած 3000. Տպագրական 7³/₄ մամուլ
Ստորագրված է տպագրության 1946 թ. մարտի 20-ին.

ՀՍՍՐ ԺԿՍ-ին ԿԻՑ Պոլիգրաֆ և հրատ. վարչութ. № 1 տպ. Երևան, 1946

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220027056

ԳԻՆԸ 10 Ռ.

70936

A $\frac{11}{27056}$